ՍՅՈՒԶԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

# ԷԹՆԻԿ ՄԱՄՈՒԼՆ ԱՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ՄՈՍԿՎԱՅԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА

СЮЗАННА БАРСЕГЯН

# ЭТНИЧЕСКАЯ ПРЕССА В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ДИАСПОРЕ:

## СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ АРМЯНСКИХ ОБЩИН В МОСКВЕ, ТЕГЕРАНЕ И ЛОС-АНДЖЕЛЕСЕ

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

SYUZANNA BARSEGHYAN

# ETHNIC PRESS IN MODERN ARMENIAN DIASPORA:

## COMPARATIVE STUDY OF THE ARMENIAN COMMUNITIES IN MOSCOW, TEHRAN AND LOS ANGELES

ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
ЕРЕВАН 2024

PUBLISHING HOUSE IAE
YEREVAN 2024

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

# ԷԹՆԻԿ ՄԱՄՈՒԼՆ ԱՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ.

## ՄՈՍԿՎԱՅԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր *Ռուբեն Կարապետյան*

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
*Միհրան Գալստյան*
պատմական գիտությունների թեկնածու
*Ռուբեն Օհանջանյան*

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.0
Բ 371

Բարսեղյան Ս. Ս.
Բ 371 Էթնիկ մամուլն արդի հայկական սփյուռքում. Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի հայկական համայնքների համեմատական ուսումնասիրություն / Ս. Ս. Բարսեղյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն, 2024, 136 էջ:

Մենագրությունը նվիրված է արդի հայկական սփյուռքում էթնիկ մամուլի՝ որպես համայնքային ինստիտուտի և սփյուռքյան ինքնության կառուցակցման միջոցի դերին: Աշխատանքը հայկական մամուլի համեմատական ուսումնասիրության առանձնահատուկ փորձ է՝ Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի հայկական համայնքների երեք թերթերի («Ноев Ковчег», «Ալիք», «Ասպարեզ») բովանդակության վերլուծության մեթոդով և «էթնիկ մեդիա» հասկացության համատեքստում: Գրքում համակողմանիորեն վերլուծվում են էթնիկ մեդիայի ուսումնասիրման տեսամեթոդաբանական հարցերը, հայկական սփյուռքի մամուլի՝ որպես էթնիկ մեդիայի առանձնահատկությունները, հայկական պարբերականների բովանդակությունը՝ քանակական և որակական ցուցիչներով, սփյուռքյան մամուլի՝ համայնքային, ինքնության և էթնիկ սահմանների հաստատման գործառույթների շրջանակը: Գիրքը կարող է հետաքրքրել սոցիալ-հումանիտար գիտակարգերի մասնագետներին, սփյուռքագետներին, սփյուռքի քաղաքականություններ մշակողներին և ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.0

ISBN 978-9939-886-59-6

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՄՈՒԼԸ «ԷԹՆԻԿ ՄԵԴԻԱ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 16

1.1. «Էթնիկ մեդիան» որպես ուսումնասիրության առարկա. տեսամեթոդաբանական հարցեր 19

1.2. Հայկական սփյուռքի մամուլը որպես էթնիկ մեդիա 28

ԳԼՈՒԽ 2

ՄՈՍԿՎԱՅԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ԹԵՐԹԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 35

2.1. Հետազոտության մեթոդաբանությունը 36

2.2. Թերթերի բովանդակության վերլուծության ընդհանուր և համեմատական պատկերը 42

2.3. Հայկական մամուլի գործառույթները համայնքներում 67

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 72

3.1. Էթնիկ մեդիան և ինքնության կառուցակցման հիմնահարցերը 73

3.2. Սփյուռքի մամուլը որպես էթնիկ սահմանների պահպանման միջոց 83

3.3. Հայրենիքը սփյուռքյան մամուլում 93

ԱՄՓՈՓՈՒՄ 104

РЕЗЮМЕ 112

SUMMARY 115

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 118

ՀԱՎԵԼՎԱԾ 132

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում աճող միգրացիոն հոսքերը, համաշխարհայնացումն ու սոցիալ-մշակութային փոփոխություններն ակնառու են դարձնում էթնիկ խմբերի էթնոմշակութային սահմանների հիմնախնդիրը: Այդ գործընթացը լավագույնս արտացոլվում է մեդիայում: Որպես խոսութային տարածություն, ինչպես նաև պատկերացումների, դիրքորոշումների ու հանրային կարծիքի ձևավորման միջոց՝ մեդիան կիրառվում է էթնիկ, ռասայական, կրոնական, լեզվական և այլ հանրույթների ներկայացվածության նպատակով: Սակայն հիմնական լրատվամիջոցների համընդհանուր հաղորդագրությունների մեջ այդ խմբերի ներկայացվածության ծավալը և բովանդակությունը հաճախ պայմանավորված են ընդունող երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային ուղենիշերով, չեն արտահայտում այդ խմբերի իրական շահերը, կանխամտածված սահմաններ են գծում ընդունող հասարակության պատկերացումներում և չեն ստեղծում բավարար հաղորդակցական միջավայր նրանց համար:

Հիմնական լրատվամիջոցներից դուրս, հատուկ էթնիկ խմբերի համար և նրանց կողմից ստեղծված մեդիա կազմակերպությունները նպաստում են էթնիկ փոքրամասնությունների հաղորդակցական միջավայրի մեծացմանը և ստեղծում են սեփական հավաստի պատկերացումներ, մի կողմից՝ համընդհանուր հաղորդագրությունների և գերիշխող համակարգի, մյուս կողմից՝ մասնավոր նպատակների, համայնքի սպասումների ու պարտավորության զգացման միջև[1]:

Լայն սահմանմամբ՝ «էթնիկ մեդիան լրատվամիջոց է, որն արտադրվում է տարբեր երկրներում բնակվող ներգաղթյալների, ռասայական, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունների, ինչ-

[1] Cottle 2000, 1-3.

պես նաև տեղաբնիկների համար և նրանց կողմից»[2]:

Էթնիկ խմբերի և մեդիայի փոխհարաբերության հիմնահարցն առավելապես հետազոտվել է հիմնական մեդիայում էթնիկ փոքրամասնության ներկայացվածության համատեքստում: Ավելի փոքրաթիվ հետազոտություններ կան էթնիկ մեդիայի և էթնիկ ինքնության փոխհարաբերության վերաբերյալ: Նման հետազոտությունները հիմնականում իրականացվել են քննադատական և մշակութային ավանդույթներում: Քննադատական մոտեցումը դիտարկում է, թե ինչպես են զանգվածային լրատվամիջոցները ձևավորում վերաբերմունք և հուզական ներազդեցություն, ինչը կարող է ուղղորդել ռասայական կամ էթնիկ խմբի հանդեպ ընդունված մոտեցումը: Մշակութային ավանդույթի շրջանակներում ուսումնասիրվում են այն ուղիները, որոնց միջոցով ռասայական կամ էթնիկ փոքրամասնությունները «կարդում» են զանգվածային լրատվամիջոցների գերակշռող տեքստերը՝ ընդդիմանալու, բանակցելու կամ ընդունելու դրանք: Ըստ այս մոտեցումների, էթնիկ մեդիայի հետազոտություններն իրականացվում են երկու միջոցով՝ մեդիա բովանդակության կամ լսարանի ուսումնասիրում:

Էթնիկ մեդիայի ուսումնասիրությունը համեմատաբար նոր ուղղություն է: Նման ուսումնասիրություններ հիմնականում իրականացվել են Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Ավստրալիայի, Մեծ Բրիտանիայի և Եվրամիության մի շարք երկրների էթնիկ կամ ռասայական փոքրամասնությունների, սփյուռքյան համայնքների ու նրանց մեդիայի վերաբերյալ: Էթնիկ մեդիայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ էթնիկ խմբերին, նրանց մշակութային, սոցիալական և քաղաքական առանձնահատկությունները, ինչը հնարավոր չէ պարզել հիմնական լրատվամիջոցների հետազոտությամբ:

Իրականացված հետազոտությունները գլխավորապես պատասխանում են այն հարցերին, թե ինչպես է ազդում էթնիկ մեդիան ինքնության կառուցակցման վրա, արդյոք էթնիկ մեդիայի օգտագործումը

2 Matsaganis et al. 2011, 10.

ռեսուրս է բազմակարծության և էթնիկ համայնքի ուժեղացման համար, կամ՝ արդյոք էթնիկ մեդիան ձուլում է էթնիկ խմբին ընդունող հիմնական հասարակությունում:

ԱՄՆ-ում եվրոպական էթնիկ մամուլի մասին Ռ. Պարկի մեթոդական հիմնարար ուսումնասիրությունից ի վեր (1922 թ.) հոգնականացում-ուծացում (պլյուրալիզմ-ուծացում) հարացույցի հետազոտությունը գերիշխող է[3]: Պարկը դիտարկել է էթնիկ մամուլի մի շարք կողմեր՝ հոգնականացում-ուծացում գործառույթների երկվության համատեքստում և եզրակացրել, որ էթնիկ մամուլի օգտագործման առաջնահերթ արդյունքն ուծացումն է, չնայած նրան, որ առանձնացրել է նաև հոգնականացմանը նպաստող մի շարք գործառույթներ ևս: Լ. Լամը նույնպես փաստում է, որ էթնիկ մեդիան հիմնականում խաղում է ուծացնող դեր՝ համոզելով էթնիկ համայնքին իրենց ընտրության մեջ և տալով տեղեկատվություն նոր միջավայրում հարմարման համար[4]: Ֆ. Սաբերվի-Վելեզը, սակայն, էթնիկ մեդիային վերագրում է միաժամանակ և՛ հոգնականացնող, և՛ ուծացնող դեր[5]: Էթնիկ մեդիայի՝ հոգնականացմանը նպաստող դերի մասին է խոսում Մ. Ջոնսոնը[6]: Ըստ նրա, էթնիկ ամսագրերն ամրապնդում են էթնիկ ինքնությունը՝ տալով ինքնության խորհրդանիշներ, ձևավորելով համայնք և փոխանցելով էթնիկ հպարտություն, իրականացնելով էթնիկ մշակույթի փոխանցելիություն: Ս. Ռիգինսը[7], Ք. Վիսվանաթը և Փ. Արորան[8] նույնպես դիտարկում են էթնիկ մեդիան որպես ինքնության ձևավորման կարևոր դաշտ, քանի որ այն կենտրոնանում է էթնիկ համայնքի դրական կողմերի վրա, ինչին ուշադրություն չեն դարձնում հիմնական ԶԼՄ-ները, օգնում է պայքարել էթնիկ փոքրամասնության բացասական պատկերը ներկայացնող հիմնական լրատվամիջոցների գաղափարների դեմ,

[3] Park 1922.

[4] Lam 1980, 74-92.

[5] Subervi-Velez 1986, 71-96.

[6] Johnson 2000, 229-248.

[7] Riggins 1992, 1-22.

[8] Viswanath, Arora 2000, 39-56.

մատուցում է լուրեր հայրենիքի ու համայնքի մասին, կարևոր դեր է խաղում էթնիկ համայնքի պահպանման և գործունեության մեջ, հաստատում է էթնիկ խմբի տեղը գերիշխող հասարակությունում:

Չնայած հետազոտությունների մեծ մասը կենտրոնացած է էթնիկ մեդիայի բովանդակության մեջ հոգնականացում-ուծացում հակադրության հարցադրման վրա, մի շարք հետազոտություններ դիտարկում են էթնիկ մեդիայի սպառումը: Վերջին ուսումնասիրությունները հերքում են, այսպես կոչված, «նորությունների գետտո» գաղափարը: Այսպես, Ռ. Բրաունինգի, Հ. Շաֆերի, Ջ. Ռոջերսի և Ռ. Դե Ֆևերի՝ էթնիկ մեդիայի օգտագործման վերաբերյալ իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն չի զբաղեցնում հիմնական ԶԼՄ-ների տեղը: Միակ դաշտը, որում էթնիկ մեդիան համարվում է հիմնականից ավելի արժանահավատ, հայրենիքի մասին հաղորդագրություններն են[9]: Սակայն, ըստ Դ. Բրաունի, դա չի նշանակում, որ էթնիկ մեդիան անկարևոր է էթնիկ խմբի համար: Էթնիկ մեդիայից կանոնավորապես օգտվողները համոզմունք են հայտնում, որ այն գործում է որպես «պահապան» իրենց համայնքի համար[10]:

Հաջորդ կարևոր ուղղությունն էթնիկ ինքնության և մշակույթի վրա էթնիկ մեդիայի ազդեցության ուսումնասիրումն է: Լ. Ջեֆրեսը պարզել է, որ էթնիկ մեդիան օգնում է պահպանել կապն էթնիկ մշակույթի հետ և այն կարևոր դեր է խաղում էթնիկ ինքնության պահպանման գործում[11]: Դ. Ռիոսը[12], Վ. Բարերան և Դ. Բիելբին[13] համոզմունք են հայտնում, որ էթնիկ մեդիան «օրինականացնում» է էթնիկ խմբի առնչություններն իրենց մշակութային ժառանգության հետ, ինչը մարգինալացված է զանգվածային մեդիա շուկայում: Վ. Մայերը, դիտարկելով էթնիկ մեդիայի սպառման առօրեականությունը, նշել է, որ այն ամրապնդում է մշակութային կապը, սակայն առանձնահատուկ ազ-

[9] Browning et al. 2003.

[10] Browne 2005.

[11] Jeffres 2000, 496-535.

[12] Rios 2003, 59-65.

[13] Barrera, Bielby 2001, 1–18.

դեցություն չի գործում էթնիկ ինքնության վրա[14]: Մ. Ջեորջյուն, ուսումնասիրելով Եվրոպայի սփյուռքների մեդիան, համարում է, որ սփյուռքյան մեդիա մշակույթն արդիական է դարձնում համընդհանրականացում-անջատողականություն (ունիվերսալիզմ-պարտիկուլյարիզմ) հակադրությունը[15]: Նա գտնում է, որ էթնիկ մեդիան ամրապնդում է ինքնությունը և պատկանելության զգացումը:

Էթնիկ խմբերի և մեդիայի վերաբերյալ ուսումնասիրությունները հետխորհրդային, ռուսական գիտական ավանդույթի մեջ առավելապես ուղղված են հիմնական մեդիայում էթնիկ փոքրամասնությունների ներկայացվածությանը: Բուն էթնիկ մեդիայի ուսումնասիրությունները բավականին փոքրաթիվ են: Այդ հիմնահարցին անդրադարձել են Վ. Մալկովան[16], Ե. Գիբովան[17], Յու. Կրավչենկոն, Ե. Աբրոսիմովան[18] և այլք:

Համարվելով աշխարհի դասական սփյուռքներից մեկը և ունենալով մամուլի հարյուրամյակների պատմություն, այդուհանդերձ, հայկական սփյուռքի մամուլը (ընդհանուր առմամբ մեդիան) դեռևս բավարար ուսումնասիրված չէ էթնիկ մեդիայի հայեցակարգի շրջանակներում՝ ո՛չ արտասահմանյան, ո՛չ հայաստանցի հետազոտողների կողմից: Ինչպես նաև, ընդհանուր առմամբ, բավարար ուսումնասիրված չէ արդի շրջանի սփյուռքի մեդիան: Կան այլ էթնիկ խմբերի հետ մի շարք համեմատական ուսումնասիրություններ, մասնավորապես՝ ԱՄՆ-ում և ՌԴ-ում, ինչպես նաև հատվածական փոքրածավալ ուսումնասիրություններ, գիտական հոդվածներ, գիտաժողովի զեկուցումներ և այլն:

Հարկ է նշել, սակայն, որ բավականին համակողմանի ուսումնասիրվել են 19-20-րդ դարի հայ մամուլի պատմությունը, բովանդակությունը և նշանակությունը, մշակվել են պարբերական մամուլի մի շարք

14 Mayer 2003, 479–495.

15 Georgiou 2005, 481-498.

16 Малькова 2011.

17 Гибова 2013, 323–329.

18 Кравченко, Абросимова 2017, 41-45.

նշանակալի մատենագիտական աշխատություններ[19], ինչպես նաև ստեղծվել են հայ մամուլի թվայնացված համակարգեր[20]: Հայ մամուլի պատմագիտական ուսումնասիրությունների հիմնարար աշխատությունների հեղինակներ են՝ Ա. Խառատյանը[21], Մ. Մխիթարյանը[22], Գր. Գալէմքեարեանը[23], Լ. Գևորգյանը[24], Գ. Զարբհանալեանը[25], Գ. Լևոնյանը[26], Լ. Խաչատրյանը[27], Մ. Հակոբյանը[28], Լ. Ալոյանը[29], Գ. Անանյանը[30], Ա. Արշարունին[31], Վ. Ղուկասյանը[32], Է. Բաղդասարյանը[33] և այլք:

Այս աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրել արդի հայկական սփյուռքի մամուլն էթնիկ մեդայի հայեցակարգի և մեդիայի ուսումնասիրման քննադատական ավանդույթի շրջանակներում: Հետազոտությունն առանձնահատուկ է նրանով, որ դիտարկում է հայկական մամուլը ոչ թե ընդունող երկրի էթնիկ փոքրամասնությունների կամ սփյուռքյան համայնքների տեսանկյունից՝ համեմա-

[19] Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980) 1986: Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967) 1970:

[20] «Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարան: http://tert.nla.am/
Հայ մամուլի մատենագիտական գործեր, հայ մատենագրութեան թուանշանային գրադարան: http://www.digilib.am/book/2026/2481/19741/Հայ%20Մամուլի%20Մատենագիտական%20Գործեր

[21] Խառատյան 1989, Խառատյան 1995, Խառատյան 2008, 68-86, Խառատյան 2013, 20-31, Խառատյան 2015ա 91-100, Խառատյան 2015բ:

[22] Մխիթարյան 1958, Մխիթարյան 1976, Մխիթարյան 1994, Մխիթարյան 2016:

[23] Գալէմքեարեան 1893:

[24] Գևորգյան 1982, Գևորգյան 1996:

[25] Զարբհանալեան 1895:

[26] Լևոնյան 1934:

[27] Խաչատրյան 2014:

[28] Հակոբյան 1984, Հակոբյան 1987:

[29] Ալոյան 2014:

[30] Անանյան 1995:

[31] Արշարունի 1971:

[32] Ղուկասյան 1975:

[33] Բաղդասարյան 2012:

տելով այլ խմբերի մամուլի հետ, ոչ թե ընդունող հասարակության հիմնական լրատվամիջոցների հետ, այլ սփյուռքի տեսանկյունից՝ իրականացնելով ներսփյուռքյան համադրական վերլուծություն (համեմատելով երեք հայկական համայնքների մամուլը): Դա հնարավորություն է տալիս ներկայացնել ոչ միայն սփյուռքի տեղային առանձնահատկությունները, այլև նրա անդրազգային բնույթը:

Սեփական մեդիա տարածության անհրաժեշտությունն ավելի բնորոշ է սփյուռքին, որն ունի կայուն համայնքներ ու ինստիտուտներ և գործադրում է ջանքեր՝ էթնոմշակութային ինքնության պահպանման ու վերարտադրման համար: Որպես «դասական սփյուռք» և «պետականազուրկ իշխանություն»[34]՝ տարաշխարհիկ հայությունն ունի էթնոսի կյանքն օտար միջավայրում կարգավորելու և էթնոմշակութային ինքնությունը պահպանելու ավանդական համայնքային ինստիտուտներ՝ կրոնական, կրթական, կուսակցական, բարեսիրական, ընկերային, մշակութային, մարզական, լոբբիստական և այլ կառույցներ: Դրանց շարքում հատուկ տեղ ունի մամուլը, որի ստեղծումը մշտապես ուղեկցել է հայկական սփյուռքի տարբեր համայնքների ձևավորման պատմությանը: Աշխարհի տարբեր երկրների գաղթօջախներն ավանդաբար ստեղծել են հայկական մամուլ, ինչը վկայել է համայնքի կազմավորման և կարողությունների զարգացման նոր մակարդակի մասին: Այն ոչ միայն նպաստել է էթնոմշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանը, այլև նշանակալի դեր է կատարել ներգաղթյալների ամենօրյա կյանքում, էթնիկ համայնքի միավորման, ինքնակազմակերպման և տվյալ երկրում նրա դերի կարևորման գործում, հասունացրել ու տարածել է համազգային գաղափարներ, հանդիսացել է հասարակական-քաղաքական մտքի զարգացման հարթակ և այլն:

Սփյուռքում տեղի ունեցող արդի գործընթացները, ավանդական ինստիտուտների դերի նվազումը և և ինքնակազմակերպման նոր ձևերի հրամայականը վերարժևորում են էթնիկ մեդիայի դերակատարու-

[34] Tölölyan 1996, 3.

թյունը և անհրաժեշտ դարձնում դրա ուսումնասիրությունը: Էթնիկ մեդիան սփյուռքի ուսումնասիրության կարևոր միջոց և համայնքային կարևոր ինստիտուտ է:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է պարզել էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում՝ ինքնության կառուցակցման և համայնքի սոցիալական գործընթացներում, Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի համայնքների և նրանց թերթերի օրինակով: Աշխատանքում առաջադրվել են այնպիսի հետազոտական խնդիրներ, ինչպիսիք են էթնիկ մեդիայի ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները և տեսամեթոդաբանական հարցերը, հայկական սփյուռքի մամուլի տեղն «էթնիկ մեդիա» հասկացության համատեքստում, հայկական մամուլի բովանդակության ընդհանուր և համեմատական վերլուծությունը, գործառույթների առանձնահատկությունները հայկական համայնքներում, մամուլի դերն էթնոմշակութային տարածությունների սահմանման և սփյուռքյան ինքնության կառուցակցման գործում:

Հետազոտության արդյունքները կարևոր են թե՛ մեթոդաբանության կիրառման փորձի, թե՛ թեմայի շրջանակներում տեսական գիտելիքների ու ակադեմիական հետազոտության իրագործման փորձի և թե՛ կիրառական նշանակության տեսանկյունից: Այսպես, հայկական սփյուռքի մամուլի ուսումնասիրումն էթնիկ մեդիայի հայեցակարգի համատեքստում կարող է ունենալ գիտական նշանակություն էթնոսոցիոլոգիայի, սփյուռքագիտության, զանգվածային հաղորդակցության տեսությունների, մեդիա մարդաբանության և այլ գիտաճյուղերի համար: Հետազոտությունը հնարավորություն կտա համեմատել արդի հայկական սփյուռքի մամուլն այլ սփյուռքների մեդիա բովանդակության և գործառույթների հետ, ինչպես նաև հայկական սփյուռքի այլ համայնքների հետ: Տեսամեթոդաբանական նման մոտեցումը կարող է հիմք հանդիսանալ այս ուղղությամբ հետագա ուսումնասիրությունների համար:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել սփյուռքի քաղաքականությունների, մասնավորապես՝ մեդիա քաղաքականության մշակման, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների զար-

գացման, մամուլի միջոցով սփյուռքի տարբեր համայնքներում կառույցների գործառնման, համայնքների կարողությունների զարգացման, էթնոմշակութային ինքնության պահպանման գործում: Բացի դրանից, հիմնվելով համեմատական ուսումնասիրության արդյունքների վրա, կարելի է մշակել և իրագործել անդրազգային հայկական մեդիայի ստեղծման գաղափարներ:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքում ընկած է միջգիտակարգային մոտեցումը՝ ներառելով սոցիոլոգիա, սփյուռքագիտություն, զանգվածային հաղորդակցության տեսություն, էթնիկության տեսություն, սոցիալական, մշակութային և մեդիա մարդաբանություն և այլ գիտակարգեր ու գիտաճյուղեր: Այն ապահովում է վերլուծության համակողմանիությունը:

Աշխատանքում որպես առաջնային հետազոտական տվյալներ օգտագործվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կողմից «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի շրջանակներում[35] 2011-2012 թթ. իրականացված ուսումնասիրության արդյունքները: Հետազոտությանը մասնակցել և աշխատանքները համակագել է հեղինակը: Հետազոտության առավել ընդգրկուն արդյունքներից աշխատանքում օգտագործվել են հայկական սփյուռքի երեք համայնքների պարբերականների՝ Լոս Անջելեսում «Ասպարեզի», Թեհրանում «Ալիքի» և Մոսկվայում «Ноев Ковчег»-ի 2005-2010 թթ. համարների ուսումնասիրությունը՝ բովանդակության վերլուծության մեթոդով[36]:

Թերթերն ընտրվել են յուրաքանչյուր համայնքում մեդիա դաշտի նախնական ուսումնասիրության հիման վրա: Նախ, առանձնացվել է մեդիայի տարատեսակը (մամուլ), ապա մի շարք ցուցանիշների (թե՛ ընդհանրական, թե՛ յուրաքանչյուր համայնքի համար առանձնահա-

[35] Կարապետյան 2012, 19:

[36] Հետազոտության մեթոդաբանությունը մանրամասնորեն ներկայացված է երկրորդ գլխում, էջ 35-41:

տուկ՝ գործունեության երկարատևություն, հանրաճանաչություն, տպաքանակ կամ զանգվածայնություն, ազդեցիկություն, բովանդակություն և այլն) հիման վրա ընտրվել է յուրաքանչյուր համայնքից մեկական պարբերական: Հարկ է նշել, որ այս պարբերականները շարունակվում են հրատարկվել առ այսօր: Մամուլի ուսումնասիրության ժամանակահատվածը պայմանավորված է սփյուռքի պատմության և Հայաստանի հետ հարաբերությունների կարևոր հատվածով, ինչպես նաև մամուլի գործունեության առանձնահատուկ ժամանակահատվածով, երբ այն դեռևս մեծապես փոխկապված չէր սոցիալական ցանցերի հետ:

Գրքում տեղ են գտել նաև այլ ուսումնասիրությունների երկրորդային վերլուծության տվյալներ:

Մենագրությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, ամփոփումից, սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Առաջին գլխում քննական վերլուծության է ենթարկվում «էթնիկ մեդիա» հասկացությունը, ներկայացվում են էթնիկ մեդիայի ուսումնասիրման տեսամեթոդաբանական հարցերը, ապա այդ համատեքստում դիտարկվում է հայկական սփյուռքի մամուլն իր առանձնահատկություններով:

Երկրորդ գլխում ներկայացվում է հետազոտության մեթոդաբանությունը, ուսումնասիրված թերթերի բովանդակության վերլուծության հիմնական բացահայտումները՝ տալով համայնքների թերթերի ընդհանուր և համեմատական պատկերը, ինչպես նաև համայնքներում մամուլի գործառույթների շրջանակները:

Երրորդ գլուխն անդրադառնում է ինքնության կառուցակցման, էթնոմշակութային սահմանների պահպանման և հայրենիքի ընկալման գործում սփյուռքյան մամուլի դերակատարության հարցին:

## ԳԼՈՒԽ 1

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՄՈՒԼՆ «ԷԹՆԻԿ ՄԵԴԻԱ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ներկայումս մեդիան առանցքային տեղ է զբաղեցնում անհավասար սոցիալական հարաբերությունների վերաբերյալ հանրային պատկերացումների ձևավորման գործում և կատարում է մշակութային ներգործության անհերքելի դեր: Մասնավորապես, դա տեղի է ունենում, երբ մեդիա լսարանի անդամների մոտ ձևավորվում է «մենք»-ի զգացում, որը հակադրվում է «ոչ մենք»-ի հետ, ինչպես՝ «մենք» և «նրանք», «սեփական» և «օտար», «քաղաքացի» և «օտարերկրացի», «բարեկամ» և «թշնամի» և այլն: Նման ձևով հասարակությանը միավորող սոցիալական հետաքրքրությունները տարանջատվում են իրարից և հաճախ կարող են հանգեցնել խտրականության: Սակայն մեդիան միաժամանակ հաստատում է սոցիալական և մշակութային բազմազանություն, ավելին՝ այն տրամադրում է կարևոր մի դաշտ, որում և որի միջոցով «օտարներին» վերագրվող ինքնությունները կամ հետաքրքրությունները կարող են հակադրվել, հերքվել, վերաիմաստավորվել և փոփոխվել: Մեդիա շուկաների և տեխնոլոգիաների գլոբալ և տեղային արդի զարգացումները փոխակերպում են մեդիա միջավայրը՝ տալով նոր հնարավորություններ էթնիկ փոքրամասնությունների մեդիա պատկերների ու կերպարների արտադրության, շրջանառման և սպառման համար:

Դրան զուգահեռ աճում է էթնիկ փոքրամասնությունների խմբերի և նրանց համայնքային կառույցների կողմից նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ամենօրյա օգտագործումը: Տարածքն ու ժամանակը կրճատող այս տեխնոլոգիաները նոր հաղորդակցական հնարավորություններ են ստեղծում ցրիվ էթնիկ փոքրա-

մասնությունների համար՝ օգնելով պահպանել մշակույթն ու սոցիալական ցանցերը, կենդանի պահել հայրենիքի մասին հիշողություններն ու առասպելները, ինչպես նաև ապագայի կոլեկտիվ հույսը[37]: Այդ տեխնոլոգիաները նպաստում են տեղեկատվության և գաղափարների ակնթարթային հոսքերին, ինչպես նաև խորհրդանիշերի և կերպարների ծիսական փոխանակմանը՝ դրանով իսկ կառուցելով և հաստատելով «երևակայվող» և «վիրտուալ» համայնքներ[38]:

Միջազգային մեդիա դաշտի և էթնիկ փոքրամասնությունների ամենօրյա անմիջական մեդիա հաղորդակցությունների միջև առկա են միջանկյալ մեդիա կազմակերպություններ՝ էթնիկ փոքրամասնության մամուլ, հեռուստաընկերություն, ռադիո և այլն: Այս կազմակերպությունները տանում են դժվար ուղի՝ մի կողմից համընդհանուր հաղորդագրությունների, շուկայական պահանջների և գերիշխող համակարգի, մյուս կողմից մասնավոր նպատակների, համայնքի սպասումների և պարտավորության զգացման միջև: Նրանք նպաստում են էթնիկ փոքրամասնությունների հաղորդակցության միջավայրի մեծացմանը և օժանդակում նրանց ջանքին՝ ստեղծելու «իրական» և պլյուրալիստիկ պատկերացումներ[39]:

Հիմնական ԶԼՄ-ները սահմանափակում և թուլացնում են էթնիկ փոքրամասնության ինքնությունը՝ արհամարհելով կամ նկարագրելով նրանց մեծամասնության համար խնդիրներ ստեղծողի տեսանկյունից, ձևավորում են կարծրատիպեր էթնիկ փոքրամասնության վերաբերյալ[40]: Գերիշխող մեդիայում էթնիկ փոքրամասնության ներկայացվածության համատեքստը և նրանց մարգինալացումը հիմնավորում են սեփական տեղեկատվական տարածություն ձևավորելու էթնիկ փոքրամասնության ջանքերը: Սակայն էթնիկ խմբերը սեփական մեդիա տարածություն ստեղծելու և զարգացնելու գործընթացում բախվում են մի շարք խնդիրների:

---

37 Sreberny-Mohammadi, Mohammadi 1994; Gillespie 1995.

38 Anderson 1983.

39 Cottle 2000, 3.

40 Riggins 1992.

Առաջինը վերաբերում է էթնիկ փոքրամասնության առանձնահատուկ և տվյալ բնակավայրի ու պետության ընդհանուր տեղեկատվական տարածությունների միջև փոխհարաբերություններին: Այդ փոխհարաբերություններն ի վերջո պայմանավորված են տվյալ երկրի քաղաքական համակարգով: Ընդունող երկրի քաղաքական, տնտեսական և իրավական համակարգերը պայմանավորում են այդ փոխհարաբերությունների կարգավորման բնույթը: Մի դեպքում, նման գործունեությունը համարվում է իրավաչափ, այլ դեպքում, հակառակը՝ ընդունող երկրի քաղաքական համակարգը պահանջում է էթնիկ մեդիայի ստեղծման և գործունեության կոշտ վերահսկողություն, գրաքննություն կամ արգելք: Համենայն դեպս, պետությունը ստեղծում է պայմաններ, որպեսզի էթնիկ մեդիայի գործունեությունը և գաղափարական ուղղվածությունը ներառվի ընդհանուր պետական գաղափարախոսության մեջ: Ելնելով այն հանգամանքից, որ ցանկացած պետություն այս կամ այն ձևով ունի և կիրառում է ազդեցության լծակներ, ապա էթնիկ մեդիայի համար առաջանում են հակադրություններ՝ ընդունող հասարակության գերակշռող և տվյալ էթնիկ հանրության մասնավոր նպատակադրումների միջև, ինչպիսիք են՝ էթնիկության պահպանումը, սեփական առանձնահատուկ էթնոսոցիալական միջավայրի ստեղծումը, համազգային նպատակների և գաղափարների ձևավորումն ու տարածումը:

Երկրորդն էթնիկ մեդիա ունենալու պահանջի և էթնիկ խմբի կողմից դրա իրացման խնդիրն է: Տվյալ երկրում այդ պահանջի բավարարման աստիճանը պայմանավորված է տվյալ էթնիկ խմբի քանակական և որակական ցուցանիշներով, ներառյալ  այնպիսի սոցիալական խմբերի ձևավորումը, որոնք ունեն պահանջ և մոտիվացիա՝ ստեղծելու առանձնահատուկ սոցիալական տարածք, որում նրանք կկարողանան զբաղեցնել նշանակալի սոցիալական դիրքեր: Այստեղ էթնիկ մեդիան խաղում է կարևոր դեր. հենց նրա միջոցով է ձևավորվում այն սոցիալական տարածությունը (մասամբ՝ վիրտուալ, մասամբ՝ իրական), որում կառուցվում է համայնքի տեղեկատվական ցանցը:

Երրորդ, գոյություն ունի էթնիկ խմբի վարքի որոշակի իներցիա՝ պայմանավորված այլազգի միջավայրում կենսագործունեության ձևավորված ավանդույթներով: Մի դեպքում, այդ ավանդույթը խրախուս-

վում է միջավայրի կողմից, և խնդիրները ծագում են համակարգի ընդհանուր փոփոխություններին հարմարվելու ընթացքում: Այլ՝ հատկապես միջավայրի բնութագրերի արմատական փոփոխությունների դեպքում (օրինակ՝ միգրացիա, պատերազմ, հեղափոխություն և այլն), առաջանում են ձևավորված համակարգի վերակառուցման խնդիրներ՝ ստիպելով ձևավորել նոր կառուցվածք կամ նոր էթնիկ ինստիտուտներ: Հատկապես այդ պարագայում էթնիկ մեդիան դառնում է էթնիկ խմբի անդամների համար անհրաժեշտ ինստիտուտ:

Գտնվելով վերոշարադրյալ գործընթացների համատեքստում, էթնիկ մեդիան դառնում է այն միջոցը, որը հնարավորություն է ստեղծում հասանելի դարձնել գաղափարներ կամ հասկանալ էթնիկ խմբին, ինչը հնարավոր չէ իրագործել հիմնական լրատվամիջոցներով:

## 1.1. «Էթնիկ մեդիան» որպես ուսումնասիրության առարկա. տեսամեթոդաբանական հարցեր

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, չնայած գլոբալ մեդիա շուկայի հագեցվածությանը և խոշոր մեդիա հոլդինգների առկայությանը, աճում է էթնիկ մեդիայի քանակը: Նման աճ է գրանցվում հատկապես արևմտյան զարգացած երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, ԵՄ երկրները, Ավստրալիան և այլն: Այսպես, ԱՄՆ-ում հաշվվում է 2.500-ից ավելի էթնիկ մեդիայի կազմակերպություններ, որոնցից շատերը տարածում են իրենց պատմությունները ոչ անգլերեն լեզվով[41]: Կանադայում տպագրվում են 250-ից ավելի էթնիկ թերթեր, 40 հեռուստաալիք, ինչպես նաև 60-ից ավելի կանադական հիմնական ռադիո թողարկում են էթնիկ փոքրամասնության համար նախատեսված ծրագրեր[42]: Եվրամիության երկրներից, օրինակ, Նիդերլանդներում կան 150-ից ավելի էթնիկ մեդիա հեռարձակող կազմակերպություններ, Գերմանիայում՝ 90-ից ավելի տպագիր և հեռար-

41 New America Media, The First and Largest Collaboretion of Ethnic and News organizations. http://news.newamericamedia.org/directory/

42 Media Awareness Network of Canada. http://mediasmarts.ca/blog/media-awareness-network-now-mediasmarts

ձակվող մեդիա, Մեծ Բրիտանիայում՝ 100-ից ավելի էթնիկ պարբերականներ, 15 էթնիկ ռադիո և 50 հեռուսատաալիք[43]: Ավստրալիայի New South Wales նահանգում գրանցված են 115-ից ավելի էթնիկ մեդիա կազմակերպություններ[44]:

Այս համատեքստում հատկանշական է էթնիկ մեդիայի նկատմամբ աճող հետաքրքրությունը և ուսումնասիրությունների քանակը: Այսպես, էթնիկ մեդիայի հիմնախնդիրների ուսումնասիրություններով առաջատար Միացյալ Նահագներում և Մեծ Բրիտանիայում ուսումնասիրվում են էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ թե՛ հիմնական մեդիայի, թե՛ էթնիկ մեդիայի բովանդակությունը, ինչպես նաև մեդիա սպառողների՝ էթնիկ փոքրամասնությունների վրա դրա ազդեցությունը: Եվրոպական Միության անդամ երկրները նույնպես կարևորում են էթնիկ մեդիայի ուսումնասիրությունները: Այսպես օրինակ, «Սփյուռքի փոքրամասնությունները և նրանց մեդիան ԵՄ-ում» ծրագրի շրջանակներում քարտեզագրվել է ԵՄ անդամ տասներկու երկրների սփյուռքների համայքները և ուսումնասիրվել է, թե ինչպես են այդ համայնքները զարգացնում սեփական էթնիկ մեդիան[45]: Այդ հետազոտության հիմնական խնդիրն էր պարզել, թե ինչպես է էթնիկ մեդիան նպաստում էթնիկ փոքրամասնություններին՝ ինտեգրվել ընդունող հասարակությունում: Ընդհանուր առմամբ, արևմտյան հետազոտական ավանդույթում էթնիկ փոքրամասնությունը և մեդիան ուսումնասիրվում է պարզելու՝ ինչպես է «ռասայական» և փոքրամասնության էթնիկությունը վերարտադրվում, մշակվում և փոփոխվում այսօրվա մեդիայում և ինչպես են էթնիկ փոքրամասնություններն արձագանքում, օգտագործում և գործողության վերածում մեդիան իրենց ամենօրյա կյանքում, մշակույթում և ինքնության մեջ[46]:

43 Mapping Diasporic Minorities and Their Media in Europe: Studying the Media. www.lse.ac.uk › research › EMTEL › minorities › Minority_framework

44 Community Relations Commission of New SouthWales, Australia. http://www.crc.nsw.gov.au/ethnic_media

45 Georgiou 2003. http://eprints.lse.ac.uk/26420/1/Georgiou_Mapping-diasporic-media-across-the-EU_EMTEL_2003.pdf

46 Cottle 2000, 4.

Մինչև էթնիկ մեդիայի հիմնախնդրի մշակումը և ուսումնասիրումը անհրաժեշտ է, առաջին հերթին, սահմանել նրա եզրաբանական հենքը, ապա՝ նկարագրել էթնիկ մեդիայի կառուցվածքը և գործառութային առանձնահատկությունները:

Էթնիկ մեդիայի վերաբերյալ օգտագործվող եզրույթների նախընտրությունը հաճախ կախված է նրանից, թե ինչպես են տարբեր երկրների կառուցվածքի, պետական և միգրացիոն քաղաքականության կամ գիտական շրջանակներում ընկալվում մարդկանց էթնիկ և/կամ ռասայական ծագմամբ պայմանավորված տարբերությունները: Այսպես, մի շարք երկրներում չկա պաշտոնական տարբերակում մարդկանց էթնիկ-ռասայական կամ  կրոնական տարբերությունների միջև, և անհատներն իրենց նույնականացնում են որպես քաղաքացի կամ ոչ քաղաքացի: Այդ պատճառով, հետազոտողները տվյալ երկրի համար քիչ են օգտագործում «էթնիկ մեդիա» տերմինը՝ նախընտրելով «փոքրամասնության մեդիա» եզրույթը, քանի որ այդ մեդիան արտադրող մարդկանց խումբը փաստացի փոքրամասնություն է հիմնական բնակչության մեջ: Սակայն «փոքրամասնություն» տերմինը շատ դեպքերում սահմանափակ է, քանի որ շատ էթնիկ-ռասայական խմբեր մեծամասնություն են որոշ քաղաքներում կամ համայնքներում: Փոքրամասնություն տերմինը նաև մատնանշում է փոքր ուժն ավելի գերիշխող խմբի մոտ: Որոշ գիտնականներ ավելացնում են «էթնիկ փոքրամասնության մեդիա»՝ չշեշտելու համար փոքրամասնություն-մեծամասնություն տարբերակումը: Այլ հետազոտողներ նախընտրում են «ներգաղթյալների մեդիա» տերմինը, քանի որ շատ էթնիկ մեդիաներ կենտրոնացած են ներգաղթյալների խնդիրների և հետաքրքրությունների վրա: Այս բնորոշումը, սակայն, սահմանափակ է, չի ներառում տեղաբնիկներին և ենթադրում է, որ մեդիան ստեղծվել է նոր ժամանած միգրանտների համար, իսկ էթնիկ մեդիայի լսարանն ավելի լայն է: Քանի որ էթնիկ մեդիան գլխավորապես ծառայում է որոշակի տարածքի մարդկանց, որոշ հետազոտողներ սահմանում են «տեղային կամ համայնքային մեդիա»: Բայց այս տերմինը չի ընդգրկում մեդիայի էթնիկ շեշտադրումը: Էթնիկ մեդիայի հասկացությանն առավել մոտ է

«սփյուռքյան մեդիա» եզրույթը, որն օգտագործվում է համեմատաբար ավելի հաճախ: Սակայն «սփյուռք» եզրը չի համընկնում ներգաղթածների որոշ խմբերի կամ էթնիկ համայնքների հետ, քանի որ սփյուռքի գաղափարը որակապես տարբերվում է միգրացիայից: Դասական (հրեական, հայկական, աֆրիկյան, հունական) և նոր ձևավորված սփյուռքյան համայնքները մի շարք հատկանիշներով տարբերվում են միգրատների խմբից կամ էթնիկ փոքրամասնությունից[47]: Հետևաբար, սփյուռքի մեդիա տերմինը ոչ միշտ է բնորոշում էթնիկ մեդիան:

Այսպիսով, «էթնիկ մեդիա» տերմինն ամենակիրառելին և համընդգրկունն է: Ինչպես ձևակերպում են Մաթսագանիսը և մյուսները, «էթնիկ մեդիան լրատվամիջոց է, որն արտադրվում է տարբեր երկրներում բնակվող ներգաղթյալների, ռասայական, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունների, ինչպես նաև տեղաբնիկների համար և նրանց կողմից»[48]:

Բացի սահմանումից, գոյություն ունեն մի շարք հատկանիշներ, որոնք տարբերակում են մեդիան որպես էթնիկ: Հիմնականում դրանք հետևյալն են. «ո՞վ», «որտե՞ղ», «ու՞մ համար», «ի՞նչ լեզվով», «ինչպիսի՞ բովանդակությամբ», «ինչպիսի՞ տարածմամբ»: Այս հարցերից յուրաքանչյուրն ունի իր ենթահարցերը՝ իրենց տարբերակումներով: Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին:

Առաջին խումբն առանձնացնում է էթնիկ մեդիայի հիմնադիրներին և արտադրողներին՝ դիտարկելով նրանց էթնիկ պատկանելությունը որպես տվյալ մեդիայի էթնիկ լինելու ցուցանիշ: Ընդհանուր առմամբ, կարելի է դիտարկել մեդիա արտադրողների և հիմնադիրների մի շարք ցուցանիշներ, ինչպիսիք են էթնիկ համայնքի անդամ, համայնքում կամ հայրենիքում գործարար լինելը, մեդիա արտադրությունը համայնքում, հայրենիքում կամ համատեղ:

Մեդիա կազմակերպության չափը կարևոր է՝ հասկանալու նրա ազդեցության աստիճանը լսարանի վրա, ինչպես նաև նշանակությու-

[47] Cohen 2008, 5-12.

[48] Matsaganis et al. 2011, 10.

նը՝ որպես համայնքային կառույց: Չափերը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ 1) փոքր կազմակերպություն (ընտանեկան), 2) միջին կազմակերպություն (փոքրաթիվ աշխատակիցներ, աստիճանակարգման ցածր մակարդակ, քիչ ձևայնացված հարաբերություններ և աշխատանքային պարտականություններ, հստակ լսարան), 3) մեծ կազմակերպություն կամ կորպորացիա (մեծ հրատարակչական կազմակերպություն, հեռարձակող ցանցեր):

Էթնիկ մեդիայի տեղակայման վայրը և նրա սփռման տարածքը հաջորդ կարևոր ցուցանիշների խումբն է: Դա կարևոր է, քանի որ կարող է արտահայտել ոչ միայն երևույթի քաղաքական բաղադրիչը (օրինակ՝ համայնքի քաղաքական կուսակցությունների կամ կազմակերպությունների, ընդունող երկրի կամ էթնիկ հայրենիքի հետաքրքրությունները), այլ նաև տվյալ համայնքի ներուժը (օրինակ՝ համախմբման աստիճանը, մեծությունը, կազմակերպվածությունը և այլն): Մեդիա արտադրությունը նշանակալի թվով էթնիկ համայնք ունեցող երկրում, էթնիկ հարևանությամբ, հայրենիքից ու բնակության երկրից զատ այլ երկրներում նույնպես թիրախային լսարանի առկայությունը պայմանավորում են էթնիկ մեդիայի ազդեցության աստիճանը:

Հատկապես կարևոր է այն թիրախային խմբի վերլուծությունը, որի համար նախատեսված է էթնիկ մեդիան: Լսարանի օգտագործած լեզուն (մայրենի կամ ընդունող երկրի), տեղաբաշխումը (էթնիկ համայնք մեկ տարածքում, մեկ երկրի մի քանի տարածքներում, մի քանի երկրների տարբեր տարածքներում, հայրենիքում), ինտեգրման աստիճանը և էթնիկ ինքնության ընկալումը (կրոն, մշակույթ, լեզու, հայրենիք և այլն) պայմանավորում են մեդիայի բովանդակությունը և էթնիկ նշանակությունը:

Վերջապես, էթնիկ մեդիայի տարածման ձևը (թերթի կրպակներ, բաշխում, անկախ սեփական կամ հանրային ռադիո և հեռուստատեսային հեռարձակող ցանց, կաբելային ցանց, արբանյակային ցանց, առցանց, էլ.փոստ և այլն) ցույց է տալիս էթնիկ կյանքի կարևոր կողմի՝ մեդիա սպառման աստիճանը, հագեցվածությունը, ինչպես նաև տվյալ էթնիկ համայնքի միջավայրի տեխնոլոգիական հագեցվածությունը:

Էթնիկ մեդիայի կառուցվածքի ցուցիչների վերոնշյալ մշակումը հիմնվում է նրա գործունեության առանձնահատկությունների վրա: Վերջիններս պայմանավորված են նրանով, որ էթնիկ մեդիան, ի տարբերություն հիմնական մեդիայի[49], արտադրվում է հատուկ էթնիկ համայնքների համար և իրականացնում է ուղղորդված գործունեություն: Այդ պատճառով, էթնիկ մեդիայի հետազոտությունները ուղղված են հետևյալ խնդիրների բացահայտմանը. ինչպե՞ս են համայնքները զարգացնում իրենց սեփական մեդիան, ինչպե՞ս է էթնիկ մեդիան նպաստում էթնիկ փոքրամասնության՝ ընդունող հասարակությունում ինտեգրվելու, ներառվելու  կամ մեկուսանալու, արտամղվելու:

Էթնիկ մեդիայի կարևորության մասին Ս. Ռիգինսը նշել է. «Փոքրամասնության գոյատևման ապահովման համար ուրիշ ի՞նչ լավ ռազմավարություն կարող է լինել, քան իրենց սեփական մեդիայի զարգացումը, ինչը ներկայացնում է նրանց տեսակետն իրենց լեզվով»[50]: Նա նկարագրել է փոքրամասնության մեդիայի հինգ տեսանկյուն[51]:

Առաջինը մեդիայի անհրաժեշտությունն է՝ արտահայտելու սեփական արժեքները և մշակույթը դրանում: Երկրորդը կապված է մեդիայի ազդեցության սահմանափակումների հետ. էթնիկ մեդիայի երկարաժամկետ ներգործությունը էթնիկության պահպանման չափավոր աստիճանի է, ինչը ծայրահեղ ուծացման և մշակույթի ամբողջովին պահպանման միջև փոխզիջումների արդյունք է: Երրորդը փոքրամասնության մեդիայի՝ հանրային ոլորտում փոքրամասնության ներկայացվածության և նրա ճանաչման քաղաքական ենթատեքստն է: Չորրորդը փոքրամասնության իրավունքն է՝ շեշտադրել իր տարբերությունը և առանձնահատկությունը: Եվ հինգերորդը, ելնելով համայնքի շահերից, փոքրամասնության կողմից մեդիայի վերահսկողությունն է, ինչի բովանդակությունը պետք է համապատասխանի հա-

49 Հիմնական է համարվում այն մեդիան (mainstream media), որն արտադրվում է հիմնական հասարակության (mainstream society) կողմից և համար: Տե՛ս Matsaganis և այլք, 2011, 11:

50 Riggins 1992, 3.

51 Noronha et al. 2014, 17-37.

մայնքի տեղեկատվական կարիքին և նախընտրություններին: Վերոնշյալ հինգ տեսանկյուններն արտահայտող և դրանց հետևող էթնիկ մեդիան կարող է համարվել հաջողակ և արդյունավետորեն իր համայնքը ներկայացնող ինստիտուտ:

Լայն սոցիալական համատեքստում էթնիկ մեդիայի դերը հասկանալու այլ մոտեցում է առաջարկում Դ. Բրաունը՝ առանձնացնելով ութ տարրեր, որոնք կարող են ցույց տալ, թե որքանով է էթնիկ մեդիան օգնում պահպանել մշակութային ինքնությունը[52]: Դրանցից են՝ մեդիայի նպատակը և խնդիրները, ծառայությունը և կապը համայնքի հետ, հիմնական լսարանը, ծրագրերը, բովանդակությունը և այլն:

Տեղային, ազգային և անդրազգային սփյուռքյան մեդիան ձևավորում է տարածական համատեքստ, որտեղ սփյուռքի համայնքները/խմբերը ապրում և պատկերացնում են իրենց սփյուռքյան տարածությունը: Բախվելով տարբեր մեդիաների և տեխնոլոգիաների արտադրման, սպառման և ընկալման հետ ձևավորվում է սփյուռքյան մեդիայի մշակույթը:

Կան տարբեր ոլորտներ, որոնցում համընդհանրականացում-անջատողականություն հարացույցը արդիական է դառնում սփյուռքյան մեդիայի մշակույթի համար: Դրանցից շատերը կապված են սփյուռքի քաղաքականության և մեդիա ունենալու փորձի հետ:

Ըստ Մ. Ջեորջյուի, դրանք կարող են լինել գաղափարախոսական, գործառութային, էմպիրիկ և վերլուծական[53]:

Հիմնական և էթնիկ մեդիաների առաջնային հակադրությունը գաղափարախոսական է: Որպես կանոն, ԶԼՄ-ները հենվում են համընդհանրականացման գաղափարների վրա՝ հաղորդակցության ազատություն, ժողովրդավարություն, մեդիայի անկախություն: Սակայն փոքրամասնության մեդիան համընդհանրականացման գաղափարական հիմքը մատուցում է անջատողականություն տեսանկյունից: Դա նշանակում է, որ նրանք ընդունում են ժողովրդավարության,

52 Browne 2005, 122-125.

53 Georgiou 2005, 481-498.

մարդու իրավունքների և հաղորդակցության ազատության գաղափարը՝ առաջ քաշելով իրենց դերը որպես փոքրամասնության կամ մարգինալացված խումբ և մշակութային բազմազանության ներկայացուցիչներ: Նրանք քարոզում են այս դերը թե՛ փոքրամասնության լսարանին, թե՛ լայն հասարակությանը:

Գործառութային հակադրությունը մոտ է գաղափարականին, սակայն առաջին հերթին կապված է փոքրամասնության մեդիայի կողմից իրականացվող փաստացի քայլերի հետ՝ հատկապես տեղային և ազգային համատեքստում որպես ինստիտուտ զարգացման և գործառման համար: Փոքրամասնության մեդիան ներկայանում է որպես անջատողականության գործակալ և որպես հիմնական տեղեկատվության և մշակութային արտադրանքի այլընտրանքային աղբյուր: Նրանցից շատերը կախված են ընդունող ազգային պետությունների համընդհանրականացնող ծրագրերից՝ ճանաչում և աջակցություն ստանալու համար: Ազգային պետությունները և տեղական իշխանությունները ճանաչում և աջակցում են նման նախագծերը ոչ միայն հանուն անջատողականության, այլև հանուն ներառական և ժողովրդավարական հասարակության:

Էմպիրիկ հակադրության հիմքում փոքրամասնության մեդիայի բովանդակությունն է, որի նյութերի մեծամասնությունը հիմնվում է տարբեր աղբյուրների, նյութի ստեղծման ձևերի և օրակարգերի վրա: Դա կախված է մեդիայի առանձնահատուկ ազգային և տեղային տարածքներում գտնվող լսարանների բնույթից, որոնք նաև կապված են միջտարածական ցանցերի հետ: Փոքրամասնության լսարանները տեղեկատվություն են փնտրում իրենց ծագման երկրի մասին, ավելի լայն սփյուռքի մասին և իրենց բնակության տեղային և ազգային համատեքստերի մասին: Մեդիա արտադրանքը դառնում է համընդհանրականացնող և անջատողական հետաքրքրությունների համադրություն արտահայտող ամբողջություն:

Ինչ վերաբերում է վերլուծական բաղադրիչին, ապա հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ներկայումս գոյություն ունեցող համաշխարհայնացման ընկալման (համընդհանուր-ան-

ջատողական, տեղային-համաշխարհային, ազգային-անդրազգային) վերահայեցակարգայնացման աճող անհրաժեշտության համատեքստում փոքրամասնության մեդիայի զարգացման և տարածական համատեքստերի վերլուծությունը թույլ է տալիս մտածել գլոբալ իրավիճակի շարունակականության և բազմամշակույթ հասարակություններում համընդհանրականացում-անջատողականություն ամբողջության մասին:

Դիտարկելով էթնիկ մեդիան բովանդակության տեսանկյունից, Մաթսագանիսը և մյուսներն առանձնացնում են էթնիկ մեդիայի երեք հիմնական գործառույթ[54].

- միավորող (կապում է հայրենիքի հետ՝ ներկայացնելով այնտեղ տեղի ունեցող լուրեր և իրադարձություններ),
- կողմնորոշող (ինտեգրում է ընդունող համայնքին՝ ծանոթացնելով համայնքի ռեսուրսների հետ, տարածելով համայնքային կյանքի մասին պատմություններ, կողմնորոշում է նոր երկրում),
- խորհրդանշական (տարածում է արժեքներ, գաղափարներ, պահպանում կամ ձևավորում է էթնիկ ինքնությունը):

Էթնիկ մեդիայի բովանդակության մեջ այս գործառույթների առանձնացումը հնարավորություն է տալիս դիտարկել էթնիկության պահպանման կամ ձուլման միտումները: Հատկապես կարևոր է մեդիայի բովանդակության մեջ միավորող և կողմնորոշող գործառույթների միջև հավասարակշռության պահպանումը: Որոշ էթնիկ մեդիաներ շեշտադրում են միավորող գործառույթը՝ կենտրոնանում են ծագման երկրի/հայրենիքի մասին տեղեկատվության վրա և չեն տրամադրում լուրեր, որոնք կօգնեն էթնիկ խմբի անդամներին ինտեգրվել նոր համայնքում: Կամ հակառակը, իրականացնում են կողմնորոշող գործառույթ, պատմում են համայնքի մասին՝ ապահովելով էթնիկ խմբի ներգրավվածությունը, սակայն հեռացնելով հայրենիքի մասին գաղա-

[54] Matsaganis et al. 2011, 67.

փարից: էթնիկ մեդիան համայնքի համար դառնում է «ուսուցանող»: Այն կարող է կողմնորոշել նորեկներին՝ համայնքի ռեսուրսների վերաբերյալ, սովորեցնել վարքականոններ, տեղեկացնել նոր հասարակության արժեքների վերաբերյալ: Դրանով իսկ համայնքային մեդիան նպաստում է էթնիկ փոքրամասնությանը՝ ավելի հեշտությամբ ինտեգրվել, ներառվել ընդունող հասարակության մեջ, կամ հակառակը՝ մեկուսանալ, արտամղվել նրանից: Ցանկացած դեպքում այն դառնում է էթնիկ համայնքին միավորող, համախմբող ուժ: Ինչպես նաև ինքնին կարող է արտացոլել համայնքի սոցիալական փոփոխությունները: Սակայն էթնիկ մեդիայի կարևորագույն դերը էթնիկ և մշակութային ինքնության պահպանումն ու ձևավորումն է: Հետևաբար, էթնիկ մեդիայի հայեցակարգը սերտորեն կապված է էթնիկ ինքնության հայեցակարգի հետ:

## 1.2. Հայկական սփյուռքի մամուլը որպես էթնիկ մեդիա

Էթնիկ մեդիայի համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած ընդհանրություններին, գոյություն ունեն տարբեր էթնիկ խմբերի՝ էթնիկ մեդիա ստեղծելու, զարգացնելու, մեդիա բովանդակության և սպառման առանձնահատկություններ: Դրանք կախված են թե՛ էթնիկությունից, թե՛ էթնիկ փոքրամասնության խմբի ձևից և թե՛ ընդունող երկրի յուրահատկություններից: Անգամ նույն երկրի, նույն բնակավայրի մեդիա միջավայրում տարբեր էթնիկ խմբեր դրսևորում են մեդիա սպառման և արտադրման տարբեր վարքաձև: Տարբեր էթնիկ համայնքներ ստեղծում են իրենց առանձնահատուկ մեդիան և տարբեր կերպ են սպառում հիմնական մեդիա դաշտի տեղեկատվությունը:

Մեր կողմից դիտարկված հայկական երեք համայնքներից երկուսում՝ Մոսկվայում և Լոս Անջելեսում, էթնիկ մեդիա դաշտի համեմատական ուսումնասիրությունների օրինակները ցույց են տալիս ժամանակակից հայկական մեդիայի կարևորությունը համայնքի համար:

Այսպես, ԱՄՆ Լոս Անջելես շրջանի Գլենդեյլ քաղաքի երեք հիմնական էթնիկ խմբերի՝ անգլոամերիկացիների, լատինոամերիկացի-

ների և հայերի շրջանում իրականացվել է համեմատական ուսումնասիրություն (տե՛ս աղյուսակ 1)[55]: Հետազոտության նպատակն էր պարզել համայնքում էթնիկ մեդիայի դերը, մասնավորապես՝ ինչպես են վերոնշյալ էթնիկ խմբերը ստանում տեղեկատվություն իրենց համայնքի մասին: Չնայած այն հանգամանքին, որ կիսում են նույն աշխարհագրական տարածքը, երեք էթնիկ խմբերի միջև գոյություն ունեն ակնհայտ հաղորդակցական տարբերություններ:

*Աղյուսակ 1.*
*Համայնքի մասին տեղեկատվություն ստանալու աղբյուրները Գլենդեյլի (ԱՄՆ, Լոս Անջելես) երեք էթնիկ խմբերի շրջանում (% նշված աղբյուրներից)*

| Տեղեկետվության աղբյուրը | Էթնիկ խմբեր | | |
|---|---|---|---|
| | Հայեր | Լատին-ամերիկացիներ | Անգլո-ամերիկացիներ |
| Հիմնական մեդիա | 42 | 56 | 74 |
| Էթնիկ մեդիա | 30 | 27 | 38 |
| Համացանց | – | – | 13 |
| Միջանձնային | 19 | 25 | 32 |

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայերի շրջանում հիմնական և էթնիկ մեդիայի սպառման հարաբերակցության մեջ էթնիկ մեդիայից օգտվելու հաճախականությունն ավելի մեծ է: Ի տարբերություն լատինամերիկացիների և անգլոամերիկացիների, հայերը համայնքի մասին ամենաքիչ տեղեկատվությունն են ստանում միջանձնային ցանցի և համացանցի միջոցով:

Ժամանակակից Ռուսաստանում էթնիկ մեդիայի հանրային դերի մասին իրականացված համեմատական ուսումնասիրության մեջ կարող ենք տեսնել հայկական մամուլին («Ноев Ковчег», «Новый Вавилон», «Еркрамас») վերագրվող դերը[56]: Նշյալ հետազոտության մեջ, դիտարկելով էթնիկ մամուլը որպես Ռուսաստանում էթնիկ համայնք-

[55] Ball-Rokeach 2005b.
http://www.metamorph.org/images/uploads/Meta_Database_Book.pdf

[56] Малькова 2011.

ների (հայկական, իրեական, ադրբեջանական, գերմանական, ֆինական, կորեական և այլն) ուսումնասիրման աղբյուր, բացահայտվել են նրանց գործառույթները հին և նոր ձևավորվող սփյուռքյան և էթնիկ համայնքներում: Ըստ հետազոտության տվյալների, հայկական մամուլն իրականացնում է կազմակերպական և համախմբող դեր: Չնայած Ռուսաստանում հայկական համայնքի բազմազանությանը և ցրվածությանը, հայկական տեղեկատվական տարածությունը օգնում է համակարգել նրանց համազգային խնդիրների լուծման ջանքերը:

Իրանում հիմնական լրատվամիջոցները պետական են, ազգային կամ կրոնական փոքրամասնություններն ունեն սահմանափակ ներկայացվածություն տեղային հեռուստա և ռադիոթողարկումներում: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, փոքրամասնությունները հիմնական մեդիայում ներկայացված են «վատ» նորությունների, երբեմն՝ ծաղրական ձևով[57]: Ակնհայտ է, որ այս իրավիճակում առավել պահանջված է դառնում էթնիկ կամ կրոնական, այդ թվում՝ հայկական մամուլը: Սակայն էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների, այդ թվում հայկական մեդիայի մասին հասանելի համեմատական ուսումնասիրություններ չկան:

Հաշվի առնելով ընդունող երկրների տարբեր միջավայրերը, մասնավորապես, մեդիա դաշտի տարբերությունները, նույն էթնոսի սփյուռքի տարբեր համայնքների համեմատական ուսումնասիրությունը պայմանավորում է այս հետազոտության առանձնահատկություններից մեկը:

Բացի ընդունող երկրների միջավայրերի տարբերությունից և նրանցում էթնիկ խմբերի առանձնահատկություններից, կարևոր է նաև էթնիկ խմբի ձևը (ազգային փոքրամասնություն, միգրանտներ, սփյուռք և այլն) և մեդիա ստեղծելու նրանց ավանդույթը: Սփյուռքյան համայնքների համար էթնիկ մեդիայի դերն առավել նշանակալի է, քանի որ այդ էթնիկ խմբերը ստեղծում են ինստիտուտներ և ջանքեր են գործադրում էթնիկության պահպանման համար, նրանց հատուկ է, այսպես կոչված, սփյուռքյան ինքնությունը:

57 Tamandehrou 2014, 118-127.

Հայկական սփյուռքն ունի ավանդական համայնքային ինստիտուտներ (կրոնական, կուսակցական, ազգային, մշակութային, կրթական, բարեսիրական, մարզական և այլն), որոնց նպատակն է պահպանել և զարգացնել էթնոմշակութային ինքնությունն այլէթնիկ միջավայրում: Բացի դրանից, այդ ինստիտուտները կոչված են կարգավորելու էթնոսի կյանքն օտար միջավայրում, նպաստելու ընդունող հասարակության մեջ այդ խմբի անդամների առավել դյուրին ադապտացմանը: Այդ կազմակերպությունների շարքում հարկ է ընդգրկել նաև էթնիկ մեդիան, որն էական դերակատարում ունի էթնիկ ինքնության պահպանմանը նպաստող տարբերությունների տարածության[58] ձևավորման գործում:

Այն, ինչը չի ընդգրկվել զանգվածային հաղորդակցության խողովակների մեջ, մեր ժամանակներում գրեթե ազդեցություն չի գործում հասարակության զարգացման վրա[59]: Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ ԶԼՄ-ները ազդում են հանրային կարծիքի և որոշում կայացնողների օրակարգի վրա: Մարդիկ կախված են մեդիայից՝ ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն, որը կօգնի հասկանալ, թե ինչ է կատարվում շուրջը և կայացնել տեղեկացված որոշումներ իրենց կյանքի վերաբերյալ: Մեդիայի այդ դերն առավել գործուն է, երբ մարդը երկիմաստ, անորոշ կամ ճգնաժամային իրավիճակի մեջ է: Այս իրավիճակը բնորոշ է նաև օտար միջավայրում գտնվող ազգային փոքրամասնություններին: Այս խմբերը առավել հակված են վստահել սեփական լրատվամիջոցին՝ էթնիկ մեդիային: Մշակութային արժեքների կոնֆլիկտը լուծելու համար անհատները նախընտրում են օգտվել էթնիկ մեդիայից՝ հասկանալու «իրենց» և «նրանց» առանձնահատկությունը:

Արդի հայկական սփյուռքում էթնիկ մեդիայի տարատեսակ ձևերի մեջ հարկ է առանձնացնել մամուլը, քանի որ հայկական սփյուռքն ունի մամուլի հարուրամյակների պատմություն[60]: Հատկանշական է, որ

[58] Sahakyan 2015.

[59] Кара-Мурза 2005, 178.

[60] Առաջին հայկական մամուլը՝ «Ազդարար» ամսագիրը լույս է տեսել Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1794-1796 թթ.: Տե՛ս Մխիթարյան 2016, 5:

հայկական գրեթե բոլոր համայնքների ձևավորման պատմությունը մշտապես ուղեկցվել է մամուլի ստեղծմամբ: Աշխարհի տարբեր երկրներում ձևավորված հայկական գաղթօջախներն ավանդաբար ստեղծել են էթնիկ մամուլ, ինչը վկայել է համայնքի կազմավորման և կարողությունների զարգացման՝ հայկական սփյուռքին բնորոշ ընդհանուր օրինաչափությունների մասին: Այն ոչ միայն նպաստել է էթնոմշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանը, այլև նշանակալի դեր է կատարել համայնքի ներկայացուցիչների ամենօրյա կյանքում, համայնքի միավորման, ինքնակազմակերպման և տվյալ երկրում նրա դերի կարևորման գործում: Հայկական մամուլը  կարևոր դեր է խաղում աշխարհով մեկ սփռված հայերի ամենօրյա կյանքում, ընդունող երկրի հասարակության մեջ նրանց ինտեգրման, ինքնության պահպանման և հայրենիք-սփյուռք հարաբերությունների սերտացման գործում: Մյուս կողմից, սփյուռքի մամուլն արտացոլում է համայնքի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի ընթացիկ վիճակը, փոփոխությունները և մարտահրավերները, խնդիրներն ու սպասումները: Պատահական չէ, որ մամուլը և տպագրությունը զարգացել է ազգային զարթոնքի, գաղափարախոսությունների տարածման կենտրոններում՝ Թբիլիսի, Պետերբուրգ, Մոսկվա, Պոլիս, Վենետիկ, Վիեննա և այլուր:

Այսպես, մեր ուսումնասիրած երկրների հայկական համայնքներում (Մոսկվա, Թեհրան, Լոս Անջելես) առաջին անգամ մամուլ է լույս տեսել դեռևս 19-րդ դարից: Ռուսաստանում առաջին հայերեն պարբերականը՝ «Արևելյան ծանուցում» թերթը լույս է տեսել 1816-ին, Աստրախանում: Հետագայում Ռուսաստանում հրատարակվել է շուրջ 90 անուն պարբերական[61]: Իրանում առաջին հայերեն պարբերականը՝ «Շավիղը» հիմնադրվել է 1894-ին, Թեհրանում:  Մինչ օրս հրատարակվել է ավելի քան 80 անուն հայերեն պարբերական[62]: ԱՄՆ-ում, Ջերսի Սիթիում 1888-ին լույս է տեսել առաջին հայերեն պարբերականը՝ «Արեգակը»: Ցայսօր լույս է տեսել ավելի քան 300 անուն պարբե-

[61] «Հայ սփյուռք» հանրագիտարան 2003, 500:

[62] Նույն տեղում, 263:

րական[63]: Ներկայումս Ռուսաստանում (Մոսկվայում և Կրասնոդարում) լույս է տեսնում երկու պարբերական: Իրանում հիմնական հայկական պարբերականը մեկ օրաթերթ է, որը լույս է տեսնում Թեհրանում: Ամենաբազմազանը և մեծաքանակը ԱՄՆ-ում, մասնավորապես՝ Լոս Անջելեսում լույս տեսնող պարբերականներն են: Կուսակցություններից, մշակութային և բարեգործական խոշոր կազմակերպություններից բացի, պարբերականներ են հրատարակում նաև եկեղեցական կառույցները, զանազան միություններ, առանձին անհատներ:

Ժամանակակից սփյուռքում ավանդական ինստիտուտների դերի նվազման և ներկայիս գլոբալացվող ու տեխնոլոգիական ժամանակաշրջանում էթնիկ մեդիան կարող է ստանձնել էթնիկության պահպանման և համայնքի կարողությունների ուժեղացման առավել մեծ դերակատարություն: Մեդիան սփյուռքի ներկա մարտահրավերները արտահայտող կարորագույն ցուցիչ է[64]: Հետևաբար, հատուկ նշանակություն է ստանում հայկական սփյուռքի մեդիայի ուսումնասիրությունն էթնիկ մեդիայի հայեցակարգի համատեքստում: Ներկայումս ունենալով մեդիայի ժամանակակից ձևերը, հայկական սփյուռքի համար դեռևս շարունակում է առանձնահատուկ դեր ունենալ մամուլը: Չնայած տեղեկատվության աղբյուրների բազմազանությանն ու արագությանը, սփյուռքյան տեղեկատվական դաշտը շարունակում է ունենալ իր սեփական մամուլը՝ հիմնականում հայալեզու և հայկական բովանդակությամբ: Սփյուռքի մամուլը, ձևավորելով հայկական տեղեկատվական դաշտ, ստանձնում է առանձնահատուկ գործառույթ՝ հայրենիքի հետ կապի պահպանման, Հայաստանի ու սփյուռքի մասին տեղեկատվության տարածման և դրանց կերպարի ձևավորման, ազգային գաղափարների ու արժեքների, էթնիկ ու մշակութային ինքնության պահպանման և վերարտադրման գործում:

Այսպիսով, չնայած տարբեր երկրներում հայկական համայնքների ընկալումների տարբերություններին, հայկական սփյուռքի մեդիան

---

63 Նույն տեղում, 77:

64 Բարսեղյան 2014բ, 13-18:

կարող ենք համարել էթնիկ և դիտարկել «էթնիկ մեդիա» հայեցակարգի համատեքստում՝ օգտագործելով էթնիկ կամ սփյուռքյան մեդիա եզրերը, ինչպես նաև էթնիկ կամ սփյուռքյան մամուլ ձևակերպումները, քանի որ մեդիայի տարատեսակներից ուսումնասիրության համար ընտրվել է մամուլը:

Ունենալով էթնիկ մեդիային բնորոշ գործառույթներ, հայկական սփյուռքի մեդիան ունի իր առանձնահատկությունները: Դրանց շարքում առաջին հերթին հարկ է առանձնացնել, որ մեդիան հայկական սփյուռքին բնորոշ ավանդական ինստիտուտ է: Այն ցույց է տալիս համայնքի նշանակալի ներկայությունը ընդունող երկրում, ինչպես նաև ապահովում է էթնիկ ինքնագիտակցության բարձր մակարդակ ունեցող սփյուռքի էթնոմշակութային արժեքների պահպանման տեղեկատվական պահանջը: Առանձնահատկություններից է նաև հայկական սփյուռքի բազմազանության և ցրվածության պարագայում գրեթե բոլոր համայնքներում մամուլի առկայությունը և, չնայած բովանդակային տարբերություններին, ընդհանրական տեղեկատվության առկայությունը:

ԳԼՈՒԽ 2

# ՄՈՍԿՎԱՅԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ԹԵՐԹԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Չնայած էթնիկ մեդիայի ուսումնասիրության աճող կարևորությանը՝ հայկական սփյուռքի մեդիայի մասին ուսումնասիրություններում քիչ տեղ են զբաղեցնում էմպիրիկ հետազոտությունները, որոնք ունեն ինչպես գիտական, ճանաչողական, այնպես էլ գործնական նշանակություն: Հայկական սփյուռքում էթնիկ մեդիայի զարգացման հիմնախնդրի վերաբերյալ հայկական գիտական գրականության մեջ և ուսումնասիրություններում գերակշռում է այս կամ այն պարբերականների ձևավորման պատմությանը՝ հայկական գաղթօջախի պատմական զարգացման համատեքստում: Այդ փորձը նշանակալի նեղացնում է մեթոդաբանական մոտեցումները, թույլ չի տալիս հասկանալ այդ ինստիտուտի տեղն ու դերը ներկայիս մարտահրավերների պայմաններում: Մյուս կողմից, համաշխարհային գիտական գրականության մեջ գոյություն ունի սփյուռքում էթնիկության ձևավորման գործում էթնիկ մեդիայի դերի վերաբերյալ ուսումնասիրությունների բազմազանություն, ինչը դժվարացնում է մշակել սփյուռքի ժամանակակից հայկական մեդիայի ուսումնասիրման համար անհրաժեշտ համապարփակ մոտեցումներ: Առկա հետազոտությունների մեջ կարող ենք հանդիպել պատմական և նոր ձևավորվող սփյուռքների մեդիա ուսումնասիրություններ: Դրանով հետաքրքրված են թե՛ ընդունող երկրները, թե՛ սփյուռքը և թե՛ ազգային պետությունները: Էթնիկ մեդիայի նման ուսումնասիրություններ առավելապես իրականացվում են ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, ԵՄ երկրներում և Կանադայում:

Էթնիկ ինքնության վրա սփյուռքի մեդիա բովանդակության մեջ տեղ գտած հաղորդագրությունների ազդեցության առանձնահատկությունները հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել առանձին էթնիկ խմբերին և նրանց մեդիան: Հայկական սփյուռքի մեդիայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել այն բովանդակությունը, որը ձևավորվում և տարածվում է մեդիա դաշտում և թույլ է տալիս պարզել տվյալ էթնիկ խմբի հիմնախնդիրները տվյալ ժամանակահատվածում, էթնիկ խմբի և նրա նոր անդամների ինտեգրումը նոր հասարակության մեջ, հակադրությունը ուծացման գործընթացին, ջանքերի համախմբում և համերաշխություն համազգային և համայնքային խնդիրների լուծման գործում:

## 2.1. Հետազոտության մեթոդաբանությունը

Հայկական սփյուռքում էթնիկ մամուլի դերը հասկանալու համար ուսումնասիրվել է երեք կարևոր և հայաշատ համայնքների՝ Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի մեկական հայկական թերթ: Համեմատական ուսումնասիրության համար ընտրվել են հայկական սփյուքի երեք տարբեր համայնքներ՝ ընդհանրությունների և առանձնահատկությունների բնույթը հասկանալու նպատակով: Այդ համայնքներն ընտրվել են մի շարք սկզբունքներով, որոնք պայմանավորված են էթնիկ և կրոնական միջավայրով, Հայաստանից մոտ և հեռու աշխարհագրությամբ, ձևավորման պատմությամբ, համայնքային կազմով ու ինքնակազմակերպման ձևերով, հայերի բնակեցման ձևով, ընդունող երկրի քաղաքական և բնակեցման քաղաքների սոցիալ-մշակութային առանձնահատկություններով և այլն[65]: Բացի վերոնշյալ հատկանիշներից, խիստ ընդգծված տարբերություններ կան ընտրված երկրների մեդիա դաշտում և այդ ոլորտում վարվող քաղաքականությունների միջև, ինչը հայկական մամուլի, որպես ընդունող երկրի էթնիկ փոքրամասնության կամ սփյուռքյան մամուլի, համեմատական ուսումնասիրության կարևոր նախադրյալներից է:

[65] Կարապետյան 2012, 11-26:

Համեմատական ուսումնասիրության համար ընտրված հայկական համայնքներից (Մոսկվա, Թեհրան և Լոս Անջելես) յուրաքանչյուրի համար իրականացվել է ԶԼՄ դաշտի, մասնավորապես, տպագիր մամուլի նախնական ուսումնասիրություն, որի հիման վրա ընտրվել են մեկական պարբերականներ՝ «Ասպարեզ» (Լոս Անջելես), «Ալիք» (Թեհրան) և «Ноев Ковчег» (Մոսկվա):

Հարկ է նշել, որ թերթի ընտրության չափորոշիչները, ունենալով ընդհանուր սկզբունքներ, տարբեր են համայնքներից յուրաքանչյուրի համար, ինչը թելադրվում է նրանց առանձնահատկություններով: Թերթերի ընտրության ընդհանուր սկզբունքներն են՝ գործունեության երկարատևություն, հանրաճանաչություն, տպաքանակ կամ զանգվածայնություն, ազդեցիկություն, բովանդակություն և այլն:

Վերլուծության են ենթարկվել ընտրված երեք պարբերականների վեց տարվա՝ 2005-2010 թթ. հրապարակումները: Կիրառական հետազոտությունն իրականացվել է 2011-2012 թթ.: Տեղեկատվության աղբյուրի գլխավոր համախմբություն հանդիսացող երեք թերթերի վեց տարիների համարներից կատարվել է քվոտային ներկայացուցչական ընտրանք. երկու օրաթերթերի («Ալիք» և «Ասպարեզ») յուրաքանչյուր տարվա համար որոշվել է 20-ական համար: Ամիսը մեկ անգամ լույս տեսնող «Ноев Ковчег»-ի դեպքում ընտրվել է ամբողջ տպաքանակը, որպեսզի ստեղծվի մյուս թերթերին համարժեք ծավալ: Այս քվոտայի համապատասխան էլ որոշվել է ընտրանքի քայլը՝ թերթի մեկ տարում լույս տեսած համարները բաժանելով 20-ի: Այդպիսով, ընտրանքային համախմբությունը կազմել է թերթերի 312 համար: Ընդհանուր առմամբ վերլուծվել է 4635 հոդված:

Տեքստերի բովանդակության վերլուծության համար առանձնացվել են երկու տասնյակից ավելի խմբավորման և կոդավորման ցուցիչներ՝ թերթի անվանումը, համարի ամսաթիվը, տպաքանակը, տվյալ համարում վերլուծության ենթակա նյութերի ընդհանուր թիվը, վերլուծված հոդվածների ընդհանուր թիվը, հոդվածի ձևը, վերնագիրը, մեկ նյութում արծարծվող թեմաները և հիմնախնդիրը, դրանց ոլորտը, ենթաոլորտը, շրջանակը, տեսակը, տրված գնահատականը, գտնվե-

լու էջը, ուղեկցող պատկերավոր միջոցները, վերնագիրը, հիշատակված անձինք և կազմակերպությունները, նրանց ներկայացման գնահատականը, տեքստի բանալի բառերը և այլն[66]: Որպես տեղեկատվության միավորներ ընտրվել են պատկերը, բառը, նախադասությունը, իմաստը, թեման, հիմնահարցը: Տվյալները խմբավորվել և կոդավորվել են ըստ նախապես կազմված ցուցիչների: Կոդավորված տվյալները ներմուծվել են SPSS ծրագրային փաթեթի (Statistical Package for the Social Sciences - Վիճակագրական փաթեթ սոցիալական գիտությունների համար) տվյալների բազա և վերլուծվել համապատասխան գործիքակազմով: Իրականացվել է տվյալների խմբավորում և տիպաբանում, գծապատկերների և տվյալների նկարագրություն, կապերի և գործոնային վերլուծություն:

Բովանդակության վերլուծության մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտելու հաղորդակցության կողմերի՝ կոմունիկատորի (ուղերձի հեղինակի) և լսարանի (ուղերձի հասցեատիրոջ) միջև կապի առանձնահատկու-թյունները, ազդեցության ուղղվածությունն ու չափը: Այդ առանձնահատկությունը հնարավոր է բացահայտել ըստ բովանդակության վերլուծության մեթոդի հիմնական ընթացակարգերը մշակած Հ. Լասուելի բանաձևի՝ «ո՞վ ինչ է ասում, ո՞ւմ, ինչո՞ւ, ինչպե՞ս, ինչպիսի՞ ազդեցությամբ»[67]: Մեթոդի կիրառումը թույլ է տալիս հավաքագրել ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ մամուլում առկա քանակական և որակական տվյալները, դրանք կոդավորել, մշակել, գնահատել և մեկնաբանել, խորհրդանշական նկարագրության ենթարկել տեքստը: Բովանդակության վերլուծությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել ոչ միայն հիմնահարցն ինքնին, այլև այն դիտարկել ավելի լայն սոցիալական համատեքստում, ինչը ենթադրում է բացահայտել հետազոտական հարցը համակողմանի և, ի տարբերություն այլ մեթոդների, թույլ է տալիս եզրահանգումներ կատարել սոցիալական ֆենոմենների մասին չմիջնորդավորված: Մեթո-

66 Բարսեղյան 2012բ, 41:

67 Braddock 1958, 88.

դը նաև համընդգրկուն է. այն ոչ միայն բացահայտում է տեղի ունեցած երևույթները, որ տեղ են գտել տեքստերում, այլև դրա հնարավոր ազդեցությունը  հասցեատիրոջ/լսարանի վրա: Բովանդակության վերլուծության մեջ տեքստը դիտարկվում է հետադարձության մեջ՝ որպես որոշակի գործընթացի արդյունք:

Բովանդակության վերլուծություն մեթոդով մամուլի ուսումնասիրության համար տեղեկատվության ընտրանքը իրականացվել է բազմափուլ՝ տեղեկատվության աղբյուրի, ծավալի և միավորի ընտրությամբ[68]: Նախ, համեմատական ուսումնասիրության համար ընտրվել են սփյուռքի համայնքներ, ապա՝ այդ համայնքներում տպագրվող մեկական թերթ, դրա ուսումնասիրության ծավալը և միավորները:

Մեդիայի տարատեսակ ձևերից ընտրվել է մամուլը: Լսարանի նախընտրությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հենց թերթերն ու ամսագրերն են վերլուծական «կողմնորոշիչները»: Դրանք առաջին հերթին պայմանավորված են քաղաքական դիսկուրսների, ընթերցողների՝ տեղեկատվութուն ստանալու և կարծիքների պահանջներով: Մամուլի «մասնագիտացված» լսարանի վրա ազդեցությունն ուղղված է ընկալման ճանաչողական բաղադրիչին (ի տարբերություն, «զանգվածային» լսարանի վրա ազդեցությունն առավելապես ուղղված է ընկալման զգայական բաղադրիչին), մամուլի լսարանը համեմատաբար կայուն է և հետևողական: Մամուլը որոշում է ոչ այնքան ինչ մտածել, այլ՝ ինչի մասին[69]: Մամուլը հայկական սփյուռքի ավանդական ինստիտուտներից է, այն մշտապես կարևոր տեղ է զբաղեցրել սփյուռքի կյանքում և ուսումնասիրված երեք համայնքներում ունի գործառնության երկարամյա պատմություն: Այն նաև հայկական մեդիայի միակ տեսակն է, որն առկա է ընտրված երեք համայնքներից յուրաքանչյուրում, ինչն անհրաժեշտ պայման է համեմատական հետազոտության համար: Սփյուռքի տարբեր համայնքների միևնույն սոցիալական ինստիտուտի՝ մամուլի համեմատական ուսումնասիրությունը

68 Мангейм и др. 1997, 270-277.

69 Семенова и др. 2010, 38.

հնարավորություն է տալիս հասկանալ էթնիկ մեդիայի առանձնահատուկ և ընդհանրական գործառույթները:

Թերթերից յուրաքանչյուրի ընտրության սկզբունքները հետևյալն են.

«**Ասպարեզ**»: Օրաթերթ է, լույս է տեսնում շաբաթը հինգ անգամ, Լոս Անջելեսում (Կալիֆորնիա, ԱՄՆ): Որպես շաբաթաթերթ հիմնադրվել է 1908 թ-ին Ֆրեզնոյում: Խմբագրակազմը 1970-ականների սկզբին տեղափոխվել է Լոս Անջելես: 1993 թ-ից դարձել է օրաթերթ: Լեզուն՝ անգլերեն (1970 թ-ից) և արևմտահայերեն: Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնաթերթ է: Հայկական տարբերակի խմբագիրը Ափո Պողիկյանն է (ուսումնասիրության ժամանակահատվածում): Թերթի կայքէջի հասցեն է՝ http://asbarez.com/:

«Ասպարեզ» օրաթերթն ընտրվել է ԱՄՆ-ում հայկական պարբերականների ուսումնասիրությունից հետո, ինչը բացատրվում հետևյալ ցուցիչներով. լույս է տեսնում էթնիկ խմբի համայնքում, հեղինակավոր է և ունի մեծ տարածում (հասանելի է ԱՄՆ-ի թե՛ հյուսիսարևելյան, թե՛ արևմտյան հատվածների հայերին), տպագրվում է երկար տարիներ, երկլեզու է, այսինքն՝ հասանելի է ընթերցողների լայն զանգվածների, տարածվում է սոցիալական ցանցերով, ունի մեծ տպաքանակ և հաճախականություն, լուսաբանում է թեմաների լայն շրջանակ, տպագիր արխիվը հասանելի է:

Չնայած «Ասպարեզը» Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնաթերթ է, ԱՄՆ-ում լույս տեսնող թերթերի մեջ ամենից շատ է համապատասխանում առաջադրված չափանիշներին: Նման պնդման համար հարկ է հիշատակել «Menlo Consulting Group»-ի կողմից ԱՄՆ ՄԶԳ «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանի» (USAID CAPS) համար 2007 թ-ին իրականացված հետազոտության արդյունքները[70]: Հեռախոսային հարցումներն անց են կացվել 18-ից բարձր տարիքի 600 ամերիկահայերի շրջանում. արևմուտքում՝ Կալիֆոռնիայում (հարցվածների 56,9%) և հյուսիս-արևելքում՝ Մասաչուսեթսում (7,1%),

[70] Tourism Market Research on the Armenian-American Diaspora Community, 2007.

Նյու Յորքում (5,5%), Նյու Ջերսիում (4%) և Միչիգանում (3,4%): Հարցերից մեկը հետևյալն է. «Ի՞նչ հայկական թերթեր և ամսագրեր եք կանոնավորապես կարդում»: Պատասխանները ցույց են տալիս, որ «Ասպարեզ» պարբերականն առաջին տեղում է ոչ միայն ընդհանուր հանրաճանաչությամբ և ընթեցելու հաճախականությամբ, այլ նաև ընթերցվում է հայերի տարբեր սերունդների կողմից:

«**Ալիք**»: Օրաթերթ է, լույս է տեսնում շաբաթը հինգ անգամ, Թեհրանում: 1931 թ-ից եղել է շաբաթաթերթ, 1935 թ-ից՝ երկօրյա, իսկ 1941 թ-ից դարձել է օրաթերթ: Լեզուն արևելահայերեն է, դասական ուղղագրությամբ: Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնաթերթ է: Խմբագիրը Դերենիկ Մե-լիքյանն է (ուսումնասիրության ժամանակահատվածում): Թերթի կայքէջի հասցեն է՝ http://alik.hyenet.ir/:

«Ալիքը» իրանահայ համայնքի ամենահին և ներկայիս միակ օրաթերթն է: Չնայած Հայ հեղափոխական դաշնակցության օրգան է, իր ուղղվածությամբ բազմաբովանդակ է, ունի հասարակական, քաղաքական, մշակութային ուղղվա-ծություն, ինչը ենթադրում է, որ տրվող տեղեկատվությունը ընդգրկուն է և արտահայտում է համայնքի ամբողջական նկարագիրը: Օրաթերթում լուսաբանվում են համաիրանական լուրեր, իրանահայ կյանքի, սփյուռքի և հայաստանյան իրադարձություններ:

«**Ноев Ковчег**»: Երկշաբաթաթերթ է, լույս է տեսնում 1987 թ-ից, ամիսը երկու անգամ, Մոսկվայում: Հիմնադիրը «Ноев Ковчег медиа» ՍՊԸ-ն է, գլխավոր տնօրենը՝ Գրիգորի Անիսոնյանը (ուսումնասիրության ժամանակահատվածում): Պարբերականի լեզուն ռուսերեն է: Թերթի կայքէջի հասցեն է՝ http://www.noev-kovcheg.ru/:

Ռուսաստանի հայ համայնքն ունի երեք առավել հայտնի՝ անկախ տեղեկատվական-վերլուծական «Ноев Ковчег», Ռուսաստանի հայերի միության «Երկրամաս» (հրատարակվում է 1996 թ-ից, Կրասնոդարում) և Մոսկվայի հայերի «Հյուսիսափայլ» (հրատարակվում է 1993 թ-ից, Մոսկվայում) պարբերական: Նշյալ պարբերականներից ամենամեծ տպաքանակ ունեցողը «Ноев Ковчег»-ն է, լույս է տեսնում Մոսկվայում, որտեղ մեր հետազոտության համար ընտրված համայնքն է:

Թերթն արտացոլում է քաղաքի համայնքային, ՌԴ, ԱՊՀ և հեռավոր արտասահմանի սփյուռքի կյանքը, ինչպես նաև Հա-յաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրադարձությունները: Հանրաճանաչ է ոչ միայն հայ ընթերցողների, այլև ռուսների և ազգային փոքրամասնությունների շրջանում:

Նախատեսված բոլոր թերթերից առանձնացվել և վերլուծվել են բոլոր, այսպես կոչված, հայկական նյութերը՝ անկախ թեմայից: Հայկական են համարվել այն նյութերը, որոնք վերաբերում են Հայաստանին (ներառյալ Արցախը), սփյուռքին, հայ անհատների և ընդհանրապես հայությանը: Ոչ հայկական կամ հիմնական են համարվել տվյալ երկրի վերաբերյալ և միջազգային բնույթի նյութերը: Վերլուծության ենթակա նյութերում ներառվել են թերթի յուրաքանչյուր համարի բոլոր հոդվածները, բացի գովազդից, եղանակի տեսությունից, հորոսկոպից, թերթում լույս տեսնող առանձին հեղինակների պատմվածքներից կամ այլ գրական ստեղծագործություններից, շնորհավորանքներից և այլն:

## 2.2. Թերթերի բովանդակության վերլուծության ընդհանուր և համեմատական պատկերը

Էթնիկ մամուլի բովանդակությունը պայմանավորում է նրա գործառույթները և դերը համայնքային կյանքում և ինքնության կառուցակցման գործում: Չնայած ընդհանրություններին, տարբեր երկրներում լույս տեսնող պարբերականներն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են տվյալ երկրի ու համայնքի տարբերություններով: Հետևապես հարկ է վերլուծել երեք համայնքների թերթերի՝ «Ասպարեզ» (Լոս Անջելես), «Ալիք» (Թեհրան) և «Ноев Ковчег» (Մոսկվա), բովանդակությունը՝ տալով ընդհանուր և համեմատական նկարագիրը:

Սփյուռքի մամուլի բովանդակության մեջ առաջին ցուցանիշը, այսպես կոչված, հայկական և հիմնական տեղեկատվության հարաբերակցությունն է: Հետազոտության մեջ «հայկական թեմաներ» են համարվել ՀՀ-ին, ԼՂՀ-ին, սփյուռքին, ընդհանրապես հայությանը կամ

որևէ հայ անհատի վերաբերող նյութերը, իսկ «հիմնական թեմաներ» են համարվել ընդունող երկրի մասին և միջազգային տեղեկատվությունը:

Երեք թերթերի նյութերի ընդհանուր ծավալի մեջ հայկական թեմաների տեսակարար կշիռը, ընդհանուր առմամբ, կազմում է մեծամասնություն (տե՛ս գծապատկեր 1):




*Գծապատկեր 1. Հայկական թեմաների տեսակարար կշիռը ուսումնասիրված երեք թերթերում*

Հայկական բովանդակության նման ծավալը ցույց է տալիս հիմնական լրատվամիջոցներում հայկական տեղեկատվության բացը լրացնելու, հայկական համայնքին ներկայացնելու և էթնիկ մամուլի՝ ինքնության պահպանմանն ուղղված ջանքերը: Սակայն այդ ցուցանիշը տարբեր է յուրաքանչյուր թերթի համար: Այսպես, հայկական թեմաներով հոդվածների քանակով առաջատարը «Ասպարեզն» է, ապա՝ «Ալիքը»: «Ноев Ковчег»-ի բովանդակության մեջ հայկական և ոչ հայկական (հիմնական) թեմաների համամասնությունը գրեթե հավասար է (տե՛ս գծապատկեր 2): Հայկական թեմաների ներկայացման քանակական այս տարբերությունը, ըստ պարբերականների, կախված է մի շարք գործոններից: Հայկական նյութերի ծավալը մամուլում ցույց է տալիս տվյալ համայնքի՝ տեղեկատվություն ստանալու պահանջները. եթե Մոսկվայի հայ համայնքն ավելի քիչ կարիք ունի հայկական տեղեկատվության, ապա Թեհրանի և Լոս Անջելեսի համայնքներն էթնիկ մամուլից ակնկալում են հենց հայկական լրատվություն: Մյուս կողմից, այս ցուցանիշը կարող է հուշել էթնիկ մեդիայի ազդեցության աստիճանի մասին: Կարևոր գործոն է նաև ընդունող երկրի մեդիա դաշտի և դրանում էթնիկ խմբին ներկայացնելու առանձնահատկությունը:




*Գծապատկեր 2. Հայկական թեմաների փեսակարար կշիռը սփյուռքի երեք պարբերականներում (% թերթի նյութերի ողջ ծավալից)*

Մամուլի հայկական տեղեկատվությունն իր հերթին կարող է վերաբերել Հայաստանին կամ տվյալ համայնքին ու սփյուռքին: Մամուլի նյութերում այս համամասնությունն առանցքային է և կարող է պայմանավորել ինչպես մեդիասպառումը, այնպես էլ ազդեցությունը ինքնության ձևավորման վրա: Այդ պատճառով առանձնացրել ենք թեմաների ընդգրկման շրջանակը կամ ուղղվածությունը հետևյալ աստիճանակարգմամբ (տե՛ս նկար 1):




*Նկար 1. Հայկական թեմաների շրջանակների դասակարգումը*

Այսպիսով, եթե դիտարկենք թեմաների շրջանակները վերոնշյալ դասակարգման առաջին մակարդակով՝ Հայաստան, սփյուռք և հայրենիք-սփյուռք, ապա ակնառու է դառնում սփյուռքի երեք համայնքների մամուլի՝ Հայաստանին վերաբերող թեմաների գերակշռությունը: Առանձին համայնքների և, ընդհանուր առմամբ, հայկական սփյուռքի

վերաբերյալ տեղեկատվությունը զգալիորեն զիջում է հայաստանյան լրատվությանը: Բոլոր թերթերն ամենաքիչն անդրադարձել են հայրենիք-սփյուռք հարաբերություններին (տե՛ս գծապատկեր 3):




*Գծապատկեր 3. Հայրենիք-սփյուռք թեմաների համամասնությունը էթնիկ մամուլում (տեսակարար կշիռը հայկական թեմաների մեջ, %)*

Բացի մամուլի նյութերի Հայաստան-սփյուռք շրջանակների դասակարգումից և դրանց տեսակարար կշռից, կարևոր է նաև այդ շրջանակներում ներկայացված հրապարակումների երանգավորումը կամ գնահատականը: Վերջինս վերլուծվել է եռաստիճան սանդղակով՝ 1) դրական, 2) չեզոք կամ համակցված[71], 3) բացասական:

Ուսումնասիրված երեք թերթերի նյութերը ցույց են տալիս հակադարձ համեմատականություն Հայաստան-սփյուռք շրջանակների նյութերի ծավալի և գնահատականի միջև: Սփյուռքյան մամուլը, որքան շատ է ներկայացրել Հայաստանի մասին պատմություններ, այնքան ավելի քիչ է դրական անդրադարձը, և հակառակը՝ սփյուռքն ավելի շատ է ներկայացվել դրական լուսի ներքո (տե՛ս գծապատկեր 4): Ինչպես ցույց են տալիս տվյալները, ընդհանուր առմամբ, ուսումնասիրված երեք թերթերի հիմնական տեղեկատվությունը ներկայացվել է չեզոք կամ համակցված գնահատականներով: Իրենց համայնքի կամ սփյուռքի վերաբերյալ պատմություններն ամենահաճախն են ներկայացվել դրական գնահատականով: Դրան հաջորդում են Հայաստան-սփյուռք հարաբերությունների վերաբերյալ նյութերը: Հայաստանի մասին տեղեկատվությունն ամենաքիչ դրական երանգն ունի:

[71] Գնահատականը համակցված է համարվել այն դեպքում, երբ տվյալ թեմային տրվել է միաժամանակ և՛ դրական, և՛ բացասական գնահատական:




*Գծապատկեր 4. Սփյուռքյան մամուլի նյութերի հիմնահարցի շրջանակն ըստ գնահատականների (% երեք թերթերի նյութերի՝ ՀՀ, ՀՀ-սփյուռք, սփյուռք շրջանակներին վերաբերող նյութերից)*

Հարկ է նշել, որ այս ընդհանուր պատկերն ունի որոշակի տարբերություն յուրաքանչյուր պարբերականում:

Երեք պարբերականների համեմատական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանն ամենադրականն է ներկայացրել «Ноев Ковчег»-ը, ապա՝ «Ասպարեզը», ամենաքիչը՝ «Ալիքը»: Հայաստան-սփյուռք առնչությունները գրեթե հավասար դրական գնահատականով է ներկայացվել բոլոր թերթերում: Սեփական համայնքին համեմատաբար ավելի քննադատական մոտեցում է ցույց տվել «Ասպարեզը», միաժամանակ՝ ամենաշատ բացասական տեղեկատվությունը տարածելով Հայաստանի մասին: Հայաստան-սփյուռք հարաբերությունների վերաբերյալ «Ноев Ковчег»-ն ամենաշատն է տարածել բացասական տեղեկատվությունը (տե՛ս գծապատկեր 5): Պետք է ընդգծել սակայն, որ, ընդհանուր առմամբ, միանշանակ բացասական տեղեկատվության տեսակարար կշիռը բավականին փոքր է՝ չգերազանցելով երեք թերթերի նյութերի ողջ ծավալի 7.5 տոկոսը:

Տարբեր գործոնների դերը թերթերի հայկական թեմաների արծածման օրինաչափության մեջ հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ տեղեկատվության տիպաբանությանը՝ ըստ թեմաների ընդգրկման շրջանակների դասակարգման երկրորդ մակարդակի՝ Հայաստան, ՀՀ-միջազգային, հայրենիք-սփյուռք, համայնք-սփյուռք, սփյուռք-ընդունող երկիր (տե՛ս նկար 1): Այն հնարավորություն կտա




| | Ասպարեզ ՀՀ | Ասպարեզ ՀՀ-սփյուռք | Ասպարեզ Սփյուռք | Ալիք ՀՀ | Ալիք ՀՀ-սփյուռք | Ալիք Սփյուռք | Ноев Ковчег ՀՀ | Ноев Ковчег ՀՀ-սփյուռք | Ноев Ковчег Սփյուռք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դրական | 14,4 | 28,6 | 29,2 | 3,6 | 30 | 18,1 | 20,9 | 34 | 57,7 |
| Չեզոք/համակցված | 78,7 | 67,3 | 67,1 | 95,2 | 70 | 80,7 | 74,1 | 58,5 | 39,9 |
| Բացասական | 6,9 | 4,1 | 3,7 | 1,2 | 0 | 1,2 | 5 | 7,5 | 2,5 |

*Գծապատկեր 5. Հիմնահարցի շրջանակն ըստ գնահատականների. երեք պարբերականների համեմատությունը (% յուրաքանչյուր թերթի հրապարակումների ՀՀ-սփյուռք շրջանակից)*

ընկալել ընդհանուր՝ համահայկական և առանձնահատուկ՝ տեղային հիմնախնդիրները[72]:

Մոսկվայի հայկական թերթը, Լոս Անջելեսի և Թեհրանի համայնքային թերթերի համեմատ, ամենաքիչն է անդրադարձել հայկական թեմաներին: Սակայն այդ նյութերի ճնշող մեծամասնությունը վերաբերում է Հայաստանին: Հայկական համայնքի, սփյուռքի և հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների մասին նյութերը կրկին ամենաքիչն են: Հատկանշական է, որ թեմաների ընդգրկվածության առումով բավականին նման ցուցանիշներ ունեն Լոս Անջելեսի և Թեհրանի հայկական մամուլը: Նրանք առավելապես անդրադարձել են Հայաստանի արտաքին քաղաքականությանը, միջազգային հարաբերություններին, ապա՝ Հայաստանի ներքին քաղաքական խնդիրներին: Այդ թերթերն ավելի շատ կարևորել են հայ համայնքի և տվյալ պետության ու

[72] Բարսեղյան 2012ա, 55:

ինստիտուտների հետ փոխհարաբերությունները, քան բուն համայնքի գործունեությունը (տե՛ս գծապատկեր 6):




*Գծապատկեր 6. Հայկական մամուլի թեմաներն ըստ ընդգրկման շրջանակի (% տվյալ թերթի հայկական թեմաների ծավալում)*

Մոսկվայի «Ноев Ковчег» պարբերականի հայկական թեմաներով նյութերի ճնշող մեծամասնությունը (81%) վերաբերում է Հայաստանին, 16 տոկոսը՝ Մոսկվայի հայ համայնքին ու սփյուռքին, և միայն 3 տոկոսն է վերաբերում հայրենիք-սփյուռք հարաբերություններին: Սակայն, ի տարբերություն հայկական մյուս համայնքների թերթերի, «Ноев Ковчег»-ն ավելի շատ անդրադարձել է Հայաստանի ներքին խնդիրներին (61%), քան նրա արտաքին քաղաքականությանն ու միջազգային հարաբերություններին (50.1%): Սփյուռքի մասին տեղեկատվությունն առավելապես վերաբերում է տվյալ համայնքին և ընդհանրապես հայկական սփյուռքին (17.8%): Ռուսաստանի և, մասնավորապես, Մոսկվայի հայ համայնքի և բնակության երկրի հետ հարաբերությունների մասին նյութերը պարբերականի ընդհանուր ծավալում կազմում է ընդամենը 5 տոկոս:

Լոս Անջելեսի «Ասպարեզ» օրաթերթում հայրենիքի մասին տեղեկատվությունը կազմել է 65 տոկոս: Նյութերի 30 տոկոսը թերթը նվիրել է համայնքային խնդիրների, իրադարձությունների և հայկական սփյուռ-

քի հիմնահարցերի լուսաբանմանը, 5 տոկոսը՝ Հայաստան-սփյուռք կապին: Հայաստանի վերաբերյալ թեմաների 51 տոկոսը վերաբերում է երկրի միջազգային հարաբերություններին ու արտաքին կապերին, 22.9 տոկոսը՝ բուն հայաստանյան խնդիրներին: Համայնքի ներքին խնդիրներն ու բնակության երկրի հետ հարաբերությունները լուսաբանվել են հավասարապես, համապատասխանաբար՝ 17.8% և 16.4%:

Թեհրանի «Ալիք» թերթը, մյուս երկու համայնքային թերթերի համեմատ ամենաշատն է կարևորել հայրենիքի և սփյուռքի միջև փոխադարձ կապը: Այն կազմել է թեմաների 8.9 տոկոսը: Հայաստանի մասին թեմաները կազմել են 64, իսկ սփյուռքի մասին՝ 29 տոկոս: «Ալիքի» համարներում ՀՀ միջազգային հարաբերությունների թեմաները կազմել են 52.6 տոկոս, Հայաստանի վերաբերյալ թեմաները՝ 22.2, համայնք-բնակության երկիր փոխհարաբերությունները՝ 17.7, ներհամայնքային կյանքի ու սփյուռքի մասին՝ 15.9 տոկոս:

Հայաստան-սփյուռք շրջանակների վերոշարադրյալ լայն դասակարգման պարագայում նյութերի ներկայացման գնահատականները կարող ենք համեմատել ոչ միայն ՀՀ և սփյուռքի միջև, այլև նրանց ներքին և արտաքին փոխհարաբերությունների միջև (տե՛ս աղյուսակ 2): Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ արտաքին քաղաքականությունն ավելի շատ է քննադատվում կամ բացասական ներկայացվում, քան ներքին, և հակառակը, սփյուռքն ավելի շատ է բացասական ներկայացվում, քան սփյուռք-ընդունող երկիր հարաբերությունները:

Հետաքրքրական է ընդունող երկրի հետ համայնքի հարաբերությունների վերաբերյալ նյութերի գնահատականը և համայնքի իրական հարաբերությունների համեմատությունը: Այսպես, Մոսկվայի հայկական համայնքի հարաբերությունները երկրի հետ ամենադրականն է ներկայացվել համայնքային մամուլում: Նույնչափ դրական է ներկայացվել նաև համայնքն ինքնին: Լոս Անջելեսի «Ասպարեզը» կրկնակի քիչ դրական գնահատական է տվել այդ հարաբերություններին: Ընդունող երկրի հետ հարաբերություններին ամենաքիչ դրական գնահատականն է տրվել Թեհրանի հայկական մամուլում:

Բացի հրապարակումներին ուղեկցվող գնահատականներից,

*Աղյուսակ 2.*
*Նյութերի գնահատականը մամուլում՝ ըստ ընդգրկման շրջանակների և առանձին թերթերի (% յուրաքանչյուր թերթի հրապարակումների փվյալ շրջանակի նյութերից)*

| Հիմնահարցի շրջանակ | Գնահատական | | |
|---|---|---|---|
| | Դրական | Չեզոք համակցված | Բացասական |
| Ասպարեզ | | | |
| ՀՀ | 14.9 | 81.4 | 3.7 |
| ՀՀ-միջազգային | 14.1 | 77.4 | 8.5 |
| ՀՀ-սփյուռք | 28.6 | 67.3 | 4.1 |
| Համայնք-սփյուռք | 37.9 | 57.9 | 4.3 |
| Համայնք-ընդունող երկիր | 19.7 | 77.2 | 3.1 |
| Ալիք | | | |
| ՀՀ | 5.4 | 94.6 | – |
| ՀՀ-միջազգային | 2.2 | 95.7 | 2.2 |
| ՀՀ-սփյուռք | 30.0 | 70.0 | 0 |
| Համայնք-սփյուռք | 24.2 | 72.7 | 3.0 |
| Համայնք-ընդունող երկիր | 14 | 86.0 | – |
| Ноев Ковчег | | | |
| ՀՀ | 23.7 | 72.4 | 3.9 |
| ՀՀ-միջազգային | 17.0 | 76.4 | 6.6 |
| ՀՀ-սփյուռք | 34.0 | 58.5 | 7.5 |
| Համայնք-սփյուռք | 57.9 | 39.3 | 2.9 |
| Համայնք-ընդունող երկիր | 57.1 | 41.7 | 1.2 |

նրանց ազդեցիկությունը պայմանավորում են նաև մի շարք այլ ցուցիչներ, ինչպես՝ տպագրման էջը թերթի համարում, ուղեկցող ցուցադրման միջոցները, վերնագիրը և այլն: Ուսումնասիրված երեք պարբերականների առաջին էջերում տպագրված թեմաների ճնշող մեծամասնությունը վերաբերել է Հայաստանին, մոտ մեկ հինգերորդը՝ սփյուռքին և շատ քիչ՝ ՀՀ-սփյուռք հարաբերություններին: Այս ցուցանիշը, սակայն, տարբերվում է յուրաքանչյուր թերթի համար (տե՛ս աղյուսակ 3):

*Աղյուսակ 3.*
*Մամուլի առաջին էջում տեղ գտած թեմաների շրջանակը (% նյութերից)*

| Թերթեր | Թեմաների շրջանակը | | |
|---|---|---|---|
| | ՀՀ | ՀՀ-սփյուռք | Սփյուռք |
| Երեք թերթերը | 77 | 4 | 19 |
| Ասպարեզ | 67.1 | 5.7 | 27.2 |
| Ալիք | 36.4 | 10.9 | 52.7 |
| Ноев Коечег | 93.7 | 1.0 | 5.3 |

Այսպես, «Ноев Ковчег»-ի համարների առաջին էջի գրեթե ողջ տեղեկատվությունը վերաբերել է Հայաստանին, շատ քիչ՝ Ռուսաստանում հայկական համայնքին և հայրենիք-սփյուռք կապերին: «Ասպարեզի» առաջին էջում նույնպես գերակշռում է Հայաստանի մասին տեղեկատվությունը, սակայն միաժամանակ բավականին շեշտադրվել են նաև հայկական համայնքն ու սփյուռքը, ավելի քիչ՝ ՀՀ-սփյուռք կապերը: Ի տարբերություն Մոսկվայի և Լոս Անջելեսի հայկական պարբերականների, «Ալիք»-ը գլխավոր էջում առավելապես ներկայացրել է Իրանի (առավելապես Թեհրանի) հայ համայնքին և սփյուռքին, ապա՝ Հայաստանին, ինչպես նաև համեմատության մեջ մեծ տեղ է հատկացրել հայրենիք-սփյուռք կապին:

Հրապարակումներին ուղեկցող միջոցները՝ լուսանկար, նկար, գծապատկեր, ծաղրանկար և այլն, ավելի շատ հանդիպում են սփյուռքի մասին նյութերում: Հավանաբար տեխնիկական պատճառներով նման միջոցներն ավելի սակավ են Հայաստանի մասին նյութերում (տե՛ս գծապատկեր 7):




*Գծապատկեր 7. Մամուլի նյութերին ուղեկցող ցուցադրվող միջոցների առկայությունն ըստ հոդվածների հայրենիք-սփյուռք փարանջատման*

Մամուլի հրապարակումներում դիտարկվել է նաև թեմաների ժամանակային ընդգրկվածությունը: Բովանդակության մեջ կարևոր է թե՛ այժմեական թեմաների քննարկումը, թե՛ հիշողության ու անցյալի վերապատմումը և թե՛ ապագայի տեսանկյունը: Ինչպես ցույց է տալիս բովանդակության վերլուծությունը, հայկական մամուլի տեղեկատվության մեծամասնությունը տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանում է: Պատմական կամ անցյալին նվիրված նյութերը նույնպես նշանակալի տեղ են զբաղեցնում: Համեմատաբար ամենաքիչը ապագային միտված նյութերն են: Թեմաների ժամանակային ընդգրկվածության նշյալ բաժանումը համեմատվում է Հայաստանին, սփյուռքին և ՀՀ-սփյուռք հարաբերություններին վերաբերող թեմաների միջև (տե՛ս գծապատկեր 8):




*Գծապատկեր 8. Մամուլի նյութերի ժամանակային ընդգրկումը*

Տվյալները ցույց են տալիս հետաքրքիր պատկեր. բոլոր հայկական թեմաները, անկախ շրջանակից (վերաբերում է Հայաստանին, սփյուռքին, թե ՀՀ-սփյուռք հարաբերություններին), մեծամասամբ իրադարձային են՝ մամուլի անդրադարձն է տեղի ունեցած իրադարձություններին: Դա հատկապես դրսևորվում է հայրենիք-սփյուռք հարաբերությունների լուսաբանման պարագայում: Բացի դրանից, հայրենիք-սփյուռք հարաբերությունները ներկայացվում են ավելի շատ ապագային միտված է, քան պատմական կամ ոչ իրադարձային: Ամենաշատ պատմական անդրադարձը վերաբերել է սփյուռքին, ապա՝ Հայաստանին (ըստ սփյուռքին և ՀՀ-ին վերաբերող նյութերի համամասնության):

Ի թիվս վերոնշյալ ցուցիչների, էթնիկ մամուլի բովանդակությունը տիպաբանել ենք ըստ ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային (ներառյալ՝ հոգևոր, գիտակրթական, մարզական), բարեգործական, ազգային (տե՛ս գծապատկեր 9): Հետագայում դրանք իրենց հերթին բաժանվել են ենթաոլորտների և խմբավորվել:




| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ասպարեզ | 50,7 | 9,3 | 4,7 | 38,5 | 1,6 | 3,2 | 5,7 |
| Ալիք | 55,2 | 5,4 | 3,4 | 43,9 | 1,6 | 5,8 | 3,6 |
| Ноев Ковчег | 55,3 | 27,4 | 10,5 | 39,2 | 1,1 | 2,1 | 3,6 |

*Գծապատկեր 9. Հայկական թեմաների բովանդակությունն ըստ ոլորտների (տեսակարար կշիռը հայկական թեմաների մեջ, %)**

* Ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

Առանց թեմաների շրջանակի դասակարգման, ընդհանուր հայկական թեմաների մեծամասնությունը քաղաքական բնույթի է բոլոր պարբերականներում: Երկրորդ տեղում մշակութային նյութերն են, ապա՝ սոցիալ-տնտեսական, իրավական, ազգային և բարեգործական: Հատկանշական է, որ բոլոր թեմաները, բացի սոցիալ-տնտեսականից, գրեթե հավասար համամասնություն ունեն երեք թերթերում:

Մոսկվայի հայկական պարբերականը խիստ տարբերվում է Թեհրանի և Լոս Անջելեսի օրաթերթերից՝ եռակի ավելի անդրադառնալով




*Գծապատկեր 10. Հիմնահարցի ոլորտը և գնահատականը*

տնտեսական ու սոցիալական հարցերին: Եվ սա պատահական չէ. Հայաստան-Ռուսաստան փոխհարաբերությունների մեջ տնտեսական կապերը համարվում են առանցքային, ինչը նաև պայմանավորված է Ռուսաստանում հայկական սփյուռքի տնտեսական գործունեության և հայրենիքում ներդրումների իրականացման հետ[73]:

Ներկայացված տվյալները խոսում են հայկական երեք համայնքների մամուլի թեմատիկ ընդհանրության և առաջնահերթությունների մասին. բոլորի համար առաջատարները քաղաքական ու մշակութային ոլորտներն են, ապա՝ տնտեսական, սոցիալական, իրավական, ազգային և բարեգործական:

Առանձնացված յոթ ոլորտները մամուլի կողմից ներկայացվել են տարբեր գնահատականներով (տե՛ս գծապատկեր 10):

Թեմաներից ամենադրականն են ներկայացվել բարեգործությունն ու մշակույթը, ամենաբացասականը՝ ազգային հարցերն ու քաղաքական թեմաները:

[73] Барсегян 2013, 125-126.




| | Քաղաքական | Տնտեսական | Սոցիալական | Մշակութային | Բարեգործական | Ազգային | Իրավական |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ասպարեզ | 74,5 | 13,2 | 5,8 | 23,1 | 0,7 | 2,7 | 5,9 |
| Ալիք | 87,6 | 9,3 | 3,8 | 25,3 | 1,3 | 5,9 | 3,4 |
| Ноев Ковчег | 92,3 | 38,4 | 8,6 | 29,1 | 1,2 | 2,0 | 4,6 |

*Գծապատկեր 11. Հայաստանի ներկայացման բաղադրիչները (% Հայաստանի վերաբերյալ թեմաներից)**

* Ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

Ըստ ոլորտների տիպաբանված ընդհանուր բովանդակության վերլուծությունից բացի, կարևոր է համարվել տարբերակել Հայաստանի, սփյուռքի և հայրենիք-սփյուռք հարաբերությունների վերաբերյալ հրապարակումների բովանդակությունը զատ-զատ:

Այսպես, բոլոր թերթերում Հայաստանի մասին թեմաների ճնշող մեծամասնությունը քաղաքական ոլորտից է: Երկրորդ տեղում մշակութային ոլորտն է, բացառությամբ Մոսկվայի հայկական մամուլի, որտեղ ՀՀ տնտեսությունն առավել առաջնահերթ է (տե՛ս գծապատկեր 11):

Հայաստանի մասին քաղաքական թեմաների առաջատարը «Ноев Ковчег»-ն է, ապա՝ «Ալիքը» և «Ասպարեզը»: Հայրենիքի մասին նյութերի մեջ սփյուռքի տարբեր համայնքներ շեշտադրում են որոշակի ոլորտներ: Օրինակ, Մոսկվայի հայ համայնքի համար դա ՀՀ տնտեսությունն է, իսկ Թեհրանի և Լոս Անջելեսի համայնքների համար՝




| | Քաղաքական | Տնտեսական | Սոցիալական | Մշակութային | Բարեգործական | Ազգային | Իրավական |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ասպարեզ | 35,5 | 3,2 | 2,2 | 65,2 | 2,2 | 4,8 | 9,3 |
| Ալիք | 39,3 | 0,8 | 3,4 | 66,5 | 1,4 | 7,9 | 7,7 |
| Ноев Ковчег | 32,7 | 8,6 | 22,5 | 77,5 | 3,0 | 2,8 | 7,2 |

*Գծապատկեր 12. Սփյուռքի ներկայացման բաղադրիչները (% սփյուռքի վերաբերյալ թեմաներից)**

* Ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

մշակույթը, հոգևոր կյանքը, կրթությունն ու գիտությունը: Բոլոր թերթերում ազգային հարցերն ու բարեգործությունն ամենաքիչ ներկայացված թեմաներն են: Թեհրանի հայկական համայնքի համար ազգային հարցերն համեմատաբար ավելի մեծ տեղ են զբաղեցնում:

Սփյուռքի մամուլի բովանդակության կարևորագույն բաղադրիչը սեփական համայնքի և ընդհանրապես հայկական սփյուռքի վերաբերյալ թեմաների համամասնությունն է (տե՛ս գծապատկեր 12):

Սփյուռքի վերաբերյալ նյութերը ցույց են տալիս, որ, ի տարբերություն Հայաստանի, սփյուռքի կերպարի ընկալման կարևոր և գերակշռող բաղադրիչը մշակույթն է, որին հաջորդում է քաղաքականությունը: Տվյալները հաստատում են այն միտքը, ըստ որի յուրաքանչյուր սփյուռքի գործունեության մեծամասնությունը կողմնորոշված է ազգային-մշակութային խնդիրների լուծմանը[74]: Ըստ մամուլի բովանդակու-

[74] Тощенко и др. 1996, 33-42.




| | Քաղաքական | Տնտեսական | Սոցիալական | Մշակութային | Բարեգործական | Ազգային | Իրավական |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ասպարեզ | 36,4 | 10.9 | 3,6 | 67,3 | 7,3 | 5,5 | 3,6 |
| Ալիք | 27,9 | 0.7 | 5,1 | 72,8 | 4,4 | 7,4 | 1,5 |
| Ноев Ковчег | 82,7 | 29.3 | 5,3 | 45,3 | 6,7 | 1,3 | 6,7 |

*Գծապատկեր 13. Հայրենք-սփյուռք առնչությունների բաղադրիչները (% ՀՀ-սփյուռք կապերի վերաբերյալ թեմաներից)**

* Ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

թյան, հայկական սփյուռքը նույնպես իր առաջնահերթություններից է համարում մշակույթը, եկեղեցին ու հոգևոր կյանքը, լուսավորչական, կրթական ու լեզվի հարցերը: Չնայած այս ընդհանրությանը, յուրաքանչյուր համայնք տարբերվում է իր գործունեությամբ և դրանք մամուլում ներկայացնելու համամասնությամբ:

Սփյուռքի և հայրենիքի միջև փոխհարաբերությունները կարող են ունենալ բավականին տարբեր արտահայտություններ ու շոշափել կենսագործունեության տարբեր ոլորտներ: Սակայն այդ հարաբերությունների մոտիվացիայի հիմքը ազգային ինքնագիտակցությունն է, սեփական ընդհանրության և ամբողջականության զգացումը: Դրանք առավել ցայտուն արտահայտված են հայկական մամուլում զետեղված այն հայրենիք-սփյուռք հարաբերություններին վերաբերող տեղեկատվության մեջ[75]: Այդ հարաբերությունների մասին տեղեկատվության ու-

[75] Барсегян 2017в, 185-194.

սումնասիրությունը կարող է օգտակար լինել ազգային միասնության, համախմբվածության աստիճանի պարզաբանման գործում: Հայրենիք-սփյուռք առնչությունները, ըստ թեմաների, բավականին տարբերվում են յուրաքանչյուր համայնքի մամուլի պատկերում (տե՛ս գծապատկեր 13): Հայրենիքի հետ կապի տեսանկյունից Լոս Անջելեսի և Թեհրանի թերթերը կրկին կարևորում են մշակութային բաղադրիչը: Սակայն Մոսկվայի հայկական պարբերականը այդ փոխհարաբերությունը ներկայացնում է գլխավորապես քաղաքական կողմով:

Եթե տարանջատենք Հայաստանի և սփյուռքի մասին տեղեկատվությունն ըստ նշված յոթ ոլորտների, ապա պատկերը խիստ կփոխվի: Էթնիկ մամուլի բովանդակության մեջ հայրենիքի և սփյուռքի վերաբերյալ տեղեկատվության բաղադրիչները ոչ միայն տարբերվում են ըստ թեմաների, այլև ըստ ծավալի (տե՛ս աղյուսակ 4):

*Աղյուսակ 4.*
*Հայկական մամուլի բովանդակությունն ըստ թեմաների ոլորտների և շրջանակի (տեսակարար կշիռը Հայաստանի կամ սփյուռքի վերաբերյալ թեմաների մեջ, %)*

| Թեմայի ոլորտ | Շրջանակ | Պարբերական | | |
|---|---|---|---|---|
| | | «Ասպարեզ» (Լոս Անջելես) | «Ալիք» (Թեհրան) | «Ноев Ковчег» (Մոսկվա) |
| Քաղաքական | Հայաստան | 74,5 | 87.6 | 92.3 |
| | Սփյուռք | 35,5 | 39.3 | 32.7 |
| Տնտեսական | Հայաստան | 13,2 | 9.3 | 38.4 |
| | Սփյուռք | 3,2 | 0.8 | 8.6 |
| Մշակութային | Հայաստան | 23,1 | 25.3 | 29.1 |
| | Սփյուռք | 65,2 | 66.5 | 77.5 |
| Սոցիալական | Հայաստան | 5.8 | 3.8 | 8.6 |
| | Սփյուռք | 2.2 | 3.4 | 22.5 |
| Իրավական | Հայաստան | 5,9 | 3.4 | 4.6 |
| | Սփյուռք | 9,3 | 7.7 | 7.2 |
| Բարեգործական | Հայաստան | 0,7 | 1.3 | 1.2 |
| | Սփյուռք | 2,2 | 1.4 | 3.0 |
| Ազգային հարցեր | Հայաստան | 2,7 | 5.9 | 2.0 |
| | Սփյուռք | 4,8 | 7.9 | 2.8 |

Հայաստանի մասին տեղեկատվության համեմատությունը, ըստ առանձնացված ոլորտների, ցույց է տալիս, որ քաղաքական թեմաներով առաջատարը «Ноев Ковчег»-ն է (92.3%), ապա՝ «Ալիքը» (87.6%), «Ասպարեզը» (74.5%): Տնտեսական ոլորտի թեմաների համամասնությամբ առաջին տեղում կրկին «Ноев Ковчег»-ն է (38.4%), ապա՝ «Ասպարեզը» (13.2%) և «Ալիքը» (9.3%): Մշակութային թեմաները գրեթե հավասարաչափ ծավալ են զբաղեցնում բոլոր թերթերում («Ноев Ковчег»՝ 29.1%, «Ալիքը»՝ 25.3%, «Ասպարեզը»՝ 23.1%): Սոցիալական և իրավական թեմաների ծավալը պարբերականներում կազմել է 3-8 տոկոս: Ազգային հարցերին բոլոր թերթերն, ընդհանուր առմամբ, շատ քիչ են անդրադարձել (ընդհանուր ծավալի 2-6%-ը): «Ալիքն» ամենաշատն է լուսաբանել այս թեման:

Հատկանշական է, որ եթե Հայաստանն առավելապես ներկայացվում է քաղաքական թեմաների շրջանակներում, ապա սփյուռքը՝ մշակութային թեմաների: Հրապարակված մշակութային թեմաներով առաջատարը «Ноев Ковчег» պարբերականն է (77.5%), ապա՝ «Ալիքն» (66.5%) ու «Ասպարեզը» (65.2%): Քաղաքական թեմաները երկրորդ տեղում են բոլոր թերթերի համար և ունեն գրեթե հավասար համամասնություն. «Ալիք»՝ 39.3 տոկոս, «Ասպարեզ»՝ 35.4 տոկոս և «Ноев Ковчег»՝ 32.7 տոկոս: Համայնքի սոցիալական խնդիրներն ամենահաճախ լուսաբանել է «Ноев Ковчег»-ը (22.5%): «Ալիքն» ու «Ասպարեզը» չնչին անդրադարձ են ունեցել այս թեմային (համապատասխանաբար՝ 3.4 և 2.2 տոկոս): Ի տարբերություն Հայաստանի վերաբերյալ լրատվության, տնտեսությունն աննշան անդրադարձ ունի սփյուռքի մասին թեմաների մեջ («Ноев Ковчег»՝ 8.6%, «Ասպարեզ»՝ 3.2%, «Ալիք»՝ 0.8%): Իրավական ոլորտի վերաբերյալ թերթերը հավասարաչափ նյութեր են ունեցել («Ասպարեզ»՝9.3%, «Ալիք»՝ 7.7%, և «Ноев Ковчег»՝ 7.2%): Էթնիկ մամուլն ազգային հարցերին հազվադեպ է անդրադարձել: Համեմատության մեջ «Ալիքն» ավելի շատ է գրել այդ թեմայով (7.9%), քան «Ասպարեզը» (4.8%) և «Ноев Ковчег»-ը (2.8%): Բարեգործության վերաբերյալ նյութերը կազմում են 1-3 տոկոս:

Հայկական մամուլում զետեղված նյութերի կառուցվածքն ըստ բաղկացուցիչ թեմաների բավականին դինամիկ է և կախված է թե՛




| | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 53,9 | 46,9 | 57,2 | 56,5 | 56,9 | 49,2 |
| Տնտեսական | 12,4 | 13,6 | 11,4 | 11,6 | 16,3 | 11,0 |
| Սոցիալական | 9,6 | 12,1 | 10,4 | 8,2 | 12,9 | 14,8 |
| Մշակութային | 30,9 | 34,5 | 26,2 | 31,2 | 30,8 | 31,1 |
| Բարեգործական | 1,2 | 1,2 | 1,0 | 1,4 | 0,9 | 0.7, |
| Ազգային | 2,1 | 1,7 | 3,1 | 4,2 | 2,4 | 4,1 |
| Իրավական | 7,4 | 7,1 | 11,2 | 11,8 | 12,2 | 8,1 |

*Գծապատկեր 14. Հայկական թերթերում արծարծվող թեմաներն ըստ տարիների (տեսակարար կշիռը հայկական թեմաների մեջ, %)**

* Ցուցանիշների տեսակարար կշիռների գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ թերթի մեկ նյութի մեջ առանձնացվել են մեկից ավելի թեմաներ:

ՀՀ-ում, թե՛ սփյուռքում տեղի ունեցող իրադարձություններից: Այդ շարժընթացը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր թերթում ժամանակի ընթացքում տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ և նրանց կողմից տարբեր թեմաներին անդրադառնալու առանձնակի միտումներ (տես գծապատկեր 14): Առանձնացնենք այն, որ բոլոր թերթերի համար քաղաքական թեմաներն առաջնային են ուսումնասիրության համար ընտրված վեց տարիների ընթացքում: Սակայն ակնհայտ է այդ թեմաների ծավալի մեծացումը Հայաստանում տեղի ունեցող քաղաքական, ընտրական և միջազգային գործընթացների ակտիվացման հեռապատկերին: Հետաքրքրական է, որ դա տեղի է ունենում ի հաշիվ մամուլում մշակութային թեմաներով նյութերի նվազման: Ի տարբերություն դրա, ազգային հարցերի և իրավական թեմաների քննարկման շարժընթացը համընկնում է քաղաքական իրադարձությունների ակտիվության հետ: Սոցիալ-տնտեսական թեմաների հաճախականությունը հետևում է քաղաքականին:

Մամուլի նյութերի վերոնշյալ յոթ խմբերի բաժանման առաջին

մակարդակին հաջորդել է երկրորդ՝ դրանց համապատասխան ենթաոլորտների խմբավորումը, ինչը հնարավորություն է տալիս քանակական ցուցանիշները համալրել որակականով: Այդպիսով, ստանում ենք մամուլի բովանդակության մեջ յուրաքանչյուր ոլորտի խճանկարը:

Ամենածավալուն՝ քաղաքական թեմաներով նյութերն ամենաբազմազանն ու լայնաշերտն են (տե՛ս նկար 2): Քաղաքական թեմաները, կազմելով մեծամասնություն և լինելով տեղեկատվական դաշտի ուշադրության կենտրոնում կենտրոնում, ավելի մեծ սպառում ու ազդեցություն ունեն լսարանի վրա: Եթե հաշվի առնենք նաև այն, որ քաղաքական թեմաները հիմնականում վերաբերում են Հայաստանին, ապա ակնհայտ է դառնում, որ սփյուռքի ժամանակակից մամուլը հայրենիքի ընկալումը միավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքականության շուրջ, ինչպես նաև փորձում է զուգահեռել սփյուռքի օրակարգն այդ քաղաքականությանը:

Թեմաների բազմազանությունը ցույց է տալիս սփյուռքի հետաքրքրվածությունը Հայաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությամբ: Անշուշտ, յուրաքանչյուր համայնք առավելապես հետաքրքրված է իր երկի հետ ՀՀ հարաբերություններով: Սակայն ընդհանուր ուշադրություն կա Հայաստանի արտաքին հարաբերություններով միջազգային կապերով և համագործակցություններով՝ այս առնչությունների համատեքստում դիտարկելով նաև ազգային հարցերի լուծումը: Վերջիններս հիմնականում երկուսն են՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը և Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը: Սփյուռքի քաղաքական գործունեությունը, ի տարբերություն Հայաստանի, ներկայացվում է բավականին նեղ և փոքրածավալ:

Մամուլում սփյուռքն առավելապես ներկայանում է մշակութային թեմաների շրջանակներում: Մշակույթի վերաբերյալ մամուլի նյութերը առանձնանում են, ոչ միայն նրանով, որ ավելի շատ ներկայացնում են սփյուռքը, քան Հայաստանը, այլ նաև առաջատարն են մյուս թեմաներից ընդհանրական հայկական կամ հայրենիք-սփյուռք կապի վերաբերյալ նյութերով: Մշակութային տեղեկատվության խճանկարը բավականին բազմազան է էթնիկ մամուլի բովանդակության մեջ (տե՛ս նկար 3):

| | | |
|---|---|---|
| Ղարաբաղյան հիմնախնդիր. բանակցություններ և կարգավորում | Ներիշխանական, ներկուսակցական հարաբերություններ | Հայաստան-սփյուռք փոխառնչություններ |
| Պետական և պաշտոնական այցեր ՀՀ-ից արտերկիր և արտերկրից ՀՀ և ԼՂՀ | Փոխհարաբերություններ ընդդիմության ներսում և կուսակցությունների միջև | ՀՀ Սփյուռքի նախարարության գործունեություն |
| Ներհանրապետական իրադարձություններ | Ընդդիմություն-իշխանություն փոխհարաբերություններ | Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում. ՀՀ և սփյուռքի ջանքերը |
| Պաշտպանություն և անվտանգություն | Նախընտրական և հետընտրական գործընթացներ | Սփյուռքահայերի անվտանգության հարցեր |
| Հայ-թուրքական հարաբերություններ, արձանագրություններ | Կոռուպցիա, անօրինականություններ | Սփյուռքի գնահատականը ՀՀ արտաքին քաղաքականությանը |
| Պետական ինստիտուտներ, կառավարման մարմիններ | Միգրացիա | Սփյուռքի գնահատականը ՀՀ ներքին քաղաքականությանը |
| Հայաստան-Ռուսաստան փոխհարաբերություններ | ԶԼՄ, խոսքի ազատություն | Սփյուռքի վերաբերմունքը ազգային խնդիրների լուծմանը |
| Հայաստան-Իրան փոխհարաբերություններ | ՀՀ-ԱՄՆ փոխհարաբերություններ | Հայկական համայնքների, սփյուռքահայերի քաղաքական գործունեությունը |
| ՀՀ-ԱՊՀ երկրներ փոխհարաբերություններ | ՀՀ-միջազգային կազմակերպություններ փոխհարաբերություններ | Տարբեր պետությունների, կազմակերպությունների հակահայկական քաղաքականություն |
| ՀՀ-եվրոպական երկրներ/ԵՄ/ԵԽԽՎ փոխհարաբերություններ | Հայ համայնքներ-միջազգային կազմակերպություններ հարաբերություններ | ՀՅԴ գործունեությունը ՀՀ-ում և սփյուռքում |

*Նկար 2. Քաղաքական թեմաների բովանդակությունը*

| | | |
|---|---|---|
| Մշակութային արժեքների պահպանում | Տոներ | Կրոն, եկեղեցի |
| Մշակութային արժեքների ոչնչացում | Պատմամշակութային իրադարձություններ | Կրթություն |
| Գրականություն | Մշակութային քաղաքականություն | Հրատարակչություն |
| Թատրոն | Մշակութային գործիչներ | Երգարվեստ |
| Գեղարվեստ, ցուցահանդեսներ | Թանգարաններ, պատկերասրահներ | Սպորտ |
| Միջմշակութային առնչություններ | Մշակութաբանություն, ուսումնասիրություններ | Մշակութային միջոցառումներ |

*Նկար 3. Մշակութային թեմաների բովանդակությունը*

| | | |
|---|---|---|
| ՀՀ և ԼՂՀ ֆինանսատնտեսական ցուցանիշներ | ՀՀ և ԼՂՀ պետական բյուջե | Ցեղասպանությունից տուժած հայերի ֆինան-սական հատուցում |
| ՀՀ-ՌԴ տնտեսական համագործակցություն | Համաշխարհային ճգնաժամի հետևանքները ՀՀ տնտեսության վրա | Ֆինանսական աջակցություն սփյուռքի հայ համայնքերում |
| ՀՀ-ԱՄՆ տնտեսական հարաբերություններ | Միջազգային կազմա-կերպությունների վարկավորում | Սփյուռքի ներդրումներ ՀՀ տնտեսության մեջ |
| Արտաքին տնտեսական հարաբերություններ, կապեր | Գնաճ, դրամի փոխարժեք | Ներդրումներ ԼՂՀ տնտեսության մեջ |
| Օտարերկրյա ներդրումներ ՀՀ տնտեսության մեջ | Ֆինանսաբանկային համակարգ | Ստվերային տնտեսություն, մենաշնորհներ |
| Հայաստանյան ներդրումներ | Ճանապարհաշինու-թյուն, քաղաքա-շինություն | Արտաքին պարտք |
| Կապիտալի արտահոսք ՀՀ-ից | Կոմունալ ծառայություն-ների սակագներ | Բեռնափոխադրումներ, ավիացիա, երթուղիներ |

*Նկար 4. Տնտեսական թեմաների բովանդակությունը*

| | | |
|---|---|---|
| Կրթություն ՀՀ-ում | Կրթություն սփյուռքում | Համայնքների սոցիալական կյանք |
| Գործազրկություն ՀՀ-ում | Առողջապահություն ՀՀ-ում | Առողջապահություն սփյուռքում |
| Բնակարանային խնդիրներ ՀՀ-ում | Վիճակագրական տվյալ-ներ ՀՀ սոցիալական ոլորտի վերաբերյալ | Աշխատանքային միգրացիա |
| Սոցիալական տարբեր խմբերի համար իրակա-նացվող ծրագրեր ՀՀ-ում | Սոցիալական տարբեր խմբերի համար իրակա-նացվող ծրագրեր սփյուռքում | Ազգամիջյան ամուսնություններ |
| Ժողովրդագրական խնդիրներ ՀՀ-ում | Ժողովրդագրական խնդիրներ սփյուռքում | Բնապահպանական խնդիրներ |
| Քաղաքաշինական որոշումների հետևանքներ | Աշխատանքային պայմաններ, մրցույթներ | Գործադուլ, հացադուլ սոցիալական խնդիրների շուրջ |
| Զբոսաշրջություն, գովազդ | Աղքատություն, կենսամակարդակ | Կոմունալ ծառայություններ |
| Սպանություններ, ինքնասպանություններ | Հայտնի անձանց հասարակական գործունեություն | Հայտնի անհատների մահախոսական |

*Նկար 5. Սոցիալական թեմաների բովանդակությունը*

Հանդիսանալով սփյուռքում ինքնության պահպանման հիմնական գրավական, մշակույթը, եկեղեցին, կրթությունը մամուլի ուշադրության կենտրոնում են:

Ի տարբերություն մշակույթի, սոցիալ-տնտեսական խնդիրները հիմնականում վերաբերում են Հայաստանին (տե՛ս նկար 4 և 5): Սա նաև ցույց է տալիս համայնքներում որոշակի ինքնաբավության և հայրենիքում խնդիրների առկայության ու դրանց վրա ուշադրություն հրավիրելու մամուլի գործառույթը: Իհարկե, դրան նպաստում է նաև Հայաստանի կողմից սփյուռքից ակնկալվող աջակցության սպասումը: Հայրենիքին աջակցելու սփյուռքի ձգտումները հաճախ ուժգնանում են հենց երկրի սոցիալ-տնտեսական դժվարությունների մասին տեղեկատվության ազդեցությամբ:

Մամուլի միջոցով հետևելով Հայաստանի իրական ամենօրա կյանքին և տնտեսական զարգացման միտումներին, ավանդական սփյուռքի ներկայացուցիչներն առավել իրական պատկերացում են կազմում պատմական հայրենիքի մասին, իսկ նոր սփյուռք կազմած հայաստանցիները դիտարկում են վերադարձի հնարավորությունները կամ հիմնավորում սոցիալ-տնտեսական պատճառներով հեռանալու սեփական որոշումը: Համայնքների տնտեսական վիճակի և սոցիալական խնդիրների քննարկումը մամուլում կարևորվում է համայնքի ներուժի ինքնագնահատումը, խնդիրների լուծման ուղիների փնտրումը, ինչպես նաև դրա շուրջ համախմբումն ու փոխօգնությունը: Մամուլը նաև կարող է օգտագործվել Հայաստանի և սփյուռքի կողմից ռազմավարական նպատակներով՝ խթանելու սոցիալական ակտիվությունը (համայնքի անդամների սոցիալական, քաղաքացիական ու քաղաքական մասնակցությունը), ամրագրելու և պահպանելու սեփական յուրահատուկ մշակութային կապիտալը, հարստացնելու միջմշակութային կապիտալը:

Իրավական թեմաները բազմազան չեն, սակայն ընդգրկում են Հայաստանում և ընդունող երկրում առկա խնդիրները, ինչպես նաև համազգային հարցերը: Դրանք խմբավորել ենք հետևյալ ուղղությունների մեջ. 1) իրավական խնդիրներ ընդունող երկրում, 2) իրավական խնդիրներ ՀՀ-ում, 3) իրավական խնդիրներ ազգային հարցերի առնչությամբ:

Բարեգործությունը, հանդիսանալով հայկական սփյուռքի հետ նույնացվող և Հայաստանի կողմից ավանդաբար ակնկալվող գործունեություն, այդուհանդերձ, մեծ արձագանք չի ունեցել սփյուռքյան մամուլում: Այդ թեմաների մեջ առանձնացրել ենք բարեգործությունը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում:

Ազգային թեմաների փոքր ծավալը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այդ թեմային առնչվող նյութերի մեծամասնությունը կոդավորվել է քաղաքական թեմաների մեջ, քանի որ հաճախ քննարկվում է քաղաքական համատեքստում: Այս թեմայի քննարկման շրջանակները ներկայացված է նկար 6-ում:

Ազգային թեմաների քննարկումը էթնիկ մամուլի կարևոր գործա-

| | | |
|---|---|---|
| Հայոց ցեղասպանություն | Հայկական հարց | Ազգապահպանություն |
| Ղարաբաղյան հիմնախնդիր | Մարտահրավերներ | Ինքնություն, ազգային արժեհամակարգ |
| Պատմական և ժամանակակից ազատագրական շարժումներ | Հակահայկական քաղաքականություն | Հայկական արժեքներ, ազգային խորհրդանիշեր |

*Նկար 6. Ազգային թեմաների բովանդակությունը*

ռույթներից է: Այդ թեմաների բովանդակությունը ինքնության պահպանման և ընդհանրության ստեղծման լավագույն միջոցներից է: Որքան կայացած ու ինքնուրույն է համայնքը, այնքան մամուլն ավելի շատ է անդրադառնում ազգային թեմաներին:

Ամփոփելով սփյուռքի հայկական մամուլի բովանդակության ընդհանուր պատկերը, կարող ենք նշել, որ այն ունի սփյուռքյան ընդհանրություններ և համայնքային առանձնահատկություններ: Մամուլի հայկական բովանդակության ծավալը, թեմատիկ առաջնահերթությունները, Հայաստան-սփյուռք ուղղվածությունը, գնահատականները և ներկայացման ձևը ցույց են տալիս տարբեր համայնքներում էթնիկ մեդիայի բովանդակության, գործառույթների և դերակատարության նմանություններ: Նրանց բովանդակությունն առավելապես հայկական է, որն իր հերթին մեծապես վերաբերում է Հայաստանին: Եթե ծավալի առումով գերիշխում է հայաստանյան տեղեկատվությունը, ապա դրական գնահատականով նյութերով՝ սփյուռքյան լրատվությունը: Հայրենիքն առավելապես ներկայացվում է քաղաքական, իսկ սփյուռքը՝ մշակութային կողմով: Թեմաների և գնահատականների պատկերը փոխվում է Հայաստանի, սփյուռքի և հայրենիք-սփյուռք կապի վերաբերյալ նյութերում:

Մամուլի բովանդակության վերլուծությունը ոչ միայն արտահայտում է համայնքների կյանքը, սպասումները, խնդիրները, ներկայացնում է հայրենիքի մասին պատմություններ և սփյուռքի վերաբերմունքը հայրենիքին, ցույց է տալիս մամուլի՝ որպես սոցիալական ինստիտուտի ու համայնքային կառույցի դերը, այլ նաև հնարավորություն է

տալիս գնահատել բովանդակության ազդեցությունը, հասկանալ մամուլի հիմնական գործառույթները սփյուռքում:

## 2.3. Հայկական մամուլի գործառույթները համայնքներում

Հետազոտողները սփյուռքում համայնքների ձևավորումը և այդ գործընթացում մեդիայի դերը հաճախ համարում են քաղաքական բնույթի: Երբ փոքրամասնության խմբերից ձևավորվում է համայնք, այն ներկայացնում է շարունակական համալիր բանակցություն՝ մշակութային բազմազանության թույլտվություն, հետևաբար՝ ստանալով իրավահավասարության խոսուն դիրք[76]: Ըստ Ջ. Հաբերմասի հայեցակարգի, «սփյուռքյան հանրային ոլորտներում», որտեղ կա նաև մեդիայի սպառում, այն կարող է վերածվել հավաքական գործողության[77]:

Հայկական սփյուռքի համայնքները, ունենալով իրենց ձևավորման առանձնահատուկ պատմությունը, տարբեր պայմաններում կենսագործունեության յուրահատկությունները, բազմազան համայնքային և տարածական կառուցվածք, ցույց են տալիս օտարազգի տարաբնույթ միջավայրերում նույն էթնոսի տարբեր խմբերի առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Ընդունող երկրի և հայկական համայնքի սոցիալական ինստիտուտների ազդեցությամբ և սոցիալ-քաղաքական կառուցվածքի պայմաններում ձևավորվում են սփյուռքյան ինքնություն, համայնքի ինքնակազմակերպման և ազդեցիկության տարբեր աստիճաններ:

Այսպես, ԱՄՆ-ում հայկական սփյուռքը համարվում է ամենակազմակերպված և ազդեցիկ, իսկ Ռուսաստանի հայկական սփյուռքը՝ ինքնակազմակերպման ցածր մակարդակ ունեցող համայնքներից մեկը, չնայած իր առավել նշանակալի մարդկային և տնտեսական ներուժին: Իրանի հայ համայնքն ունի ներհամայնքային ինքնակազմակերպման բարձր աստիճան, սակայն կրոնական փոքրամասնություն-

76 Bhabha 1994, 1–18.

77 Habermas 1991.

ների հանդեպ վարվող և երկրում առկա առարկայական պատճառներով այն չի կարող լայնորեն դրսևորվել նաև բնակության երկրի սոցիալ-քաղաքական շրջանակներում:

Հայ համայնքների նման անհավասարաչափությունը պայմանավորված է էթնիկ համայնքները բնորոշող մի շարք հատկանիշներով, ինչպիսիք են մարդկային ներուժը, կազմակերպությունների ներգրավվածությունը, սոցիալական կամ համայնքային ինստիտուտները և այլն: Այս շարքում կարևոր տեղ է զբաղեցնում նաև հայկական մեդիան:

Հայկական տարբեր համայնքներում մամուլն ունի իր դերակատարման առանձնահատկությունները: Ակնհայտ են Մոսկվայի, Լոս Անջելեսի և Թեհրանի հայկական համայնքների ինքնակազմակերպման, ինտեգրման ու ազդեցիկության աստիճանների տարբերությունները, որոնք արտահայտված են նաև մամուլի միջոցով: Տարբեր են նաև համայնքների համար մամուլի՝ որպես սոցիալական ինստիտուտի կարևորությունը: Սակայն ակնհայտ է, որ էթնիկ մամուլը համայնքի համար ստանձնում է հետևյալ դերերը.

- հանդես է գալիս որպես համայնքային ինստիտուտ,
- արտացոլում է համայնքի սոցիալական փոփոխությունները,
- հաստատում է համայնքի ազդեցիկությունը և նրա տեղը ընդունող հասարակության մեջ,
- իրազեկում է համայնքի իրավունքների մասին,
- հանդիսանում է ինչպես հիմնական տեղեկատվական տարածության բաղկացուցիչ, այնպես էլ համայնքի մասին տեղեկատվական ցանցի կարևոր օղակ,
- օժանդակում է սոցիալական ադապտացմանն ընդունող հասարակությանում,
- դառնում է սոցիալական ռեսուրս՝ համայնքը համալրող ներգաղթյալների համար,
- համախմբում է հիմնական հասարակությունից իրենց էթնիկ, մշակութային ու սոցիալական բնութագրիչներով տարբերվող և ինքնության պահպանմանը միտված խմբերին:

Սակայն էթնիկ մամուլի գլխավոր գործառույթը սփյուռքյան ինքնության կառուցակցումն է: Այս հիմնական դերի տեսանկյունից, սփյուռքի երեք պարբերականների բովանդակության վերլուծությունը ցույց տվեց, որ հայկական մամուլն ակնհայտորեն շեշտադրում է միավորող գործառույթը՝ լուսաբանելով առավելապես հայկական տեղեկատվություն, կապելով էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնելով պահպանել լեզուն և մշակույթը[78]: Կողմնորոշող գործառույթը, որով մամուլը օգնում է ինտեգրվել ընդունող երկրում՝ տարածելով տեղեկատվություն համայնքի և ընդունող հասարակության մասին, զիջում է միավորող գործառույթին: Սակայն միավորող և կողմնորոշող պատմությունների որոշակի համամասնությունը նպաստում է երկակի տեսակետների, մոտեցումների, երկակի ինքնության ձևավորմանը, երբ էթնիկ խմբի ներկայացուցիչը գիտի և կարող է օգտագործել ընդունող և ծագման երկրների մշակույթները, նորմերը և այլն: Այդպիսով, մամուլը դառնում է օգտակար ռեսուրս էթնիկ խմբի համար: Մամուլի բովանդակության մեջ միավորող և կողմնորոշող գործառույթների համամասնությունն առանցքային է և կարող է պայմանավորել ինչպես մեդիասպառումը, այնպես էլ ազդեցությունը ինքնության կառուցակցման վրա (տե՛ս նկար 7):







*Նկար 7. Միավորող և կողմնորոշող գործառույթների համամասնությունը մամուլում. ըստ հայկական լրատվության մեջ հայրենիք-սփյուռք և հիմնական-հայկական նյութերի փարբաժանման*

78 Բարսեղյան 2016ա, 193:

Հայրենիքի մասին տեղեկատվության գերակշռությունը կամ միավորող գործառույթի շեշտադրումը, մի կողմից, վկայում է հայկական սփյուռքի ձգտումը՝ մշակութային երկատվածության իրավիճակում վերադառնալ արմատներին, մշակույթին, անցյալին: Մյուս կողմից, էթնիկ մեդիայի հայաստանակենտրոն բովանդակությունը սփյուռքյան փոփոխվող ինքնությունը փորձում է դարձնել առավել կայուն: Եվ վերջապես, հայրենիքը դառնում է հայկական տեղեկատվական դաշտի այն միջուկը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժեքները վերարտադրվում ու տարածվում են սփյուռքի համայնքերում՝ անկախ նրանց տարբերություններից: Մյուս կողմից, հայկական համայնքների համեմատությունից պարզ է դառնում, որ որքան կայացած է տվյալ համայնքը, ունի կայացած ինստիտուտներ, ներքին համայնքային կյանք, այնքան ավելի շատ է քննարկում, կարևորում սեփական խնդիրները, որոնք տեղ են գտնում մամուլում:

Եվ իսկապես, դիտարկված համայնքներից, ամենակայացածը Թեհրանի համայնքն է, ապա՝ Լոս Անջելեսինը, իսկ Մոսկվայինը՝ դեռևս ոչ այնքան համայնքային: Այս ցուցանիշը պայմանավորվում է նաև մամուլի բովանդակության մեջ հայկական և հիմնական նյութերի համամասնությամբ: Այսպես, որքան Մոսկվայի համայնքն ունի ցածր ինքնակազմակերպման աստիճան, այնքան քիչ է ներկայացնում համայնքային պատմություններ և այնքան շատ՝ հիմնական (ոչ հայկական) տեղեկատվություն: Թեհրանի և Լոս Անջելեսի թերթերն ունեն գրեթե հավասար համամասնություն հայրենիք-սփյուռք ուղղվածության մեջ: Սակայն, ելներով ընդունող երկրի մեդիա դաշտի և այլ առանձնահատկություններից, Թեհրանի «Ալիքը» մի փոքր ավելի շատ է ներկայացրել երկրի լրատվությունը:

Մամուլն իր բովանդակության միջոցով մյուս՝ խորհրդանշական գործառույթը (արժեքների և գաղափարների տարածում, ինքնության պահպանում) հիմնականում կատարում է մշակութային և ազգային թեմաների, ինչպես նաև քաղաքական թեմաների քննարկման շրջանակներում: Մշակութային միջսահմանային իրավիճակում և այլազգի միջավայրում ապրող հայերի համար սեփական մշակութային արժեք-

ների վերաբերյալ մամուլի տեղեկատվությունը կարող է մշտարթուն պահել ձուլման վտանգը, ինչպես նաև վերակազմավորել հատվածական մշակութային ինքնությունը[79]: Մշակութային նյութերի բովանդակության միջոցով մամուլը նաև կարող է ամրագրել և պահպանել սեփական յուրահատուկ մշակութային կապիտալը և հարստացնել միջմշակութային կապիտալը: Էթնիկ ինքնության պահպանմանն է նպաստում նաև մամուլի բովանդակության մեջ ազգային թեմաների քննարկումը, պատմական հիշողության վերարտադրումը, էթնոսի պատմության վերաիմաստավորումը: Հայոց ցեղասպանության մասին մամուլում արծարծվող թեման դրա օրինակն է:

Էթնիկ մամուլի բովանդակության տարածման շնորհիվ, խորհրդանշական տեղեկատվություն փոխանցելով ընդհանուր անցյալի ու հայրենիքի մասին և սփյուռքին մասնակից դարձնելով հայրենիքում ընթացքող ամենօրյա գործընթացներին, ստեղծվում է մշակութային ու էթնիկ միասնություն: Չնայած սփյուռքի տարբեր հատվածների առանձնահատկություններին ու տարբերություններին, առաջանում է որոշակի էթնոմշակութային ընդհանրական արժեքների ձևավորում:

[79] Բարսեղյան 2014ա, 57:

# ԳԼՈՒԽ 3

# ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Էթնիկ մեդիան ամենօրյա պրակտիկաների սիրտն է, որն արտադրում և փոփոխում է էթնիկ ինքնությունը և մշակույթը, մասնակցում է էթնիկ համայնքներին հուզող քննարկումներին, օժանդակում է լայն սոցիալական գործընթացներին, ինչպես նաև ինքնին կարող է հանդիսանալ համայնքի սոցիալական փոփոխությունների ցուցիչ[80]: Այն արտացոլում է սփյուռքի առկա մարտահրավերները, համայնքի ինտեգրումը, ձուլումը, հատվածականության կամ ծայրահեղականության դրսևորումները ընդունող հասարակությունում:

Էթնիկ համայնքի կողմից մեդիայի սպառումը փոփոխում է անհատական ինքնությունները, ներազդում է համայնքի ձևավորման և, ի վերջո, կոլեկտիվ գործողության վրա: Ինքնությունը ձևավորվում է մեդիայում՝ որպես իրադարձությունների պատմման դիսկուրսիվ արդյունք: Մեդիան տրամադրում է ինքնության կետեր՝ նշելով խորհրդանշական սահմանները, վերամիավորելով մշակույթները կորսված վայրերի հետ և իրագործելով հիշողության, առասպելների, փնտրելու և վերաբացահայտելու ցանկությունները[81]: Այն միավորում է էթնոսի հիշողությունը, գեներացնում է նրա հավաքական պատկերացումները, հատվածականության և ցրվածության թվացյալ կապվածության փորձը[82]: Նման պատկերացումներն ընդգծում են անհատական ինքնությունների մշակույթի, աշխարհագրության, պատմության ընդհան-

80 Shi 2005, 55–72.

81 Նույն տեղում:

82 Hall 1996a 1-17.

րական ասպեկտները, որոնք կամրջում են շատ ցրիվ սուբյեկտներին «երևակայվող համայնքի» մեջ[83]:

## 3.1. Էթնիկ մեդիան և ինքնության կառուցակցման հիմնահարցերը

Էթնիկ ինքնության պահպանման գործում էթնիկ մեդիայի դերի բացահայտումն ամենաէական հետազոտական խնդիրն է: Այդ նպատակով, նախ, հարկ է սահմանել էթնիկ ինքնություն հասկացությունը և այդ համատեքստում հասկանալ ինքնության կապը մեդիա դաշտի, մասնավորապես էթնիկ մեդիայի հետ: Ենթադրվում է, որ այս հիմնահարցի տեսական մոտեցումների քննությունը թույլ կտա կողմնորոշվել իրավիճակների և դեպքերի այն բազմազանության մեջ, որ առկա է ժամանակակից աշխարհում:

Հասկանալու համար գործընթացը, որի միջոցով ձևավորվում և պահպանվում է էթնիկությունն այլազգի միջավայրում, հետազոտողներն ուսումնասիրում են հիմնահարցի երեք հիմնական կողմերը՝ 1) ինքնության զարգացման փուլերը, 2) պատկերացումներն իրենց էթնիկ ինքնության վերաբերյալ, 3) էթնիկ համայնքի ինստիտուտները (կառույցները), որոնք կառուցակցում են էթնիկ ինքնությունը: Այդ ինստիտուտների մեջ կարևոր դերակատարություն ունի մեդիան: Սակայն մեդիայի և էթնիկ ինքնության փոխհարաբերության վերաբերյալ հետազոտությունները մեծաթիվ չեն:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, էթնիկ ինքնության երեք փոխկապակցված բաղադրիչներից՝ իմացական (գիտելիքներ էթնիկ մշակույթի մասին), վարքային (էթնիկ խմբին պատկանելությունը ցուցադրող վարք) և զգայական (ինքնանույնացում, էթնիկ խմբին պատկանելու զգացում), էթնիկ մեդիան առավել մեծ ազդեցություն ունի վերջին բաղադրիչի վրա՝ ամրապնդելու պատկանելության զգացումը[84]:

83 Anderson 1983.

84 Matsaganis et al. 2011, 71.

Էթնիկ ինքնությունն ինքնին համալիր հայեցակարգ է, որը կոնցեպտուալացվել է տարբեր ձևերով՝ պայմանավորված հետազոտողի գիտական կողմնորոշմամբ: Սոցիալական մարդաբանության մեջ և սոցիոլոգիայում, օրինակ, էթնիկ ինքնությունը սահմանվում է որպես խորհրդանիշերի հավաքածու, որոնք կարևոր են անհատների և խմբերի համար, ովքեր ընդունում են իրենց ընդհանուր ծագումը[85]: Տիրապետելով այդ խորհրդանիշերի մասին գիտելիքներին և ունենալով ընդհանուր ծագումնաբանություն, տեղի է ունենում ներառում էթնիկ խմբի մեջ[86]: Սոցիալական հոգեբանության տեսանկյունից, էթնիկ ինքնությունը սահմանվում է որպես իր ծագման խմբի սխեմատիկ ներկայացվածության համալիր, ինչը, որպես կանոն, ուղեկցվում է դրական գնահատականով և էթնիկ խմբի հանդեպ հետաքրքրությամբ[87]: Էթնիկ ինքնության կառուցակումը (identity construction) դիտարկվում է որպես դինամիկ գործընթաց, որը տեղի է ունենում անհատի կյանքի ընթացքում՝ սկսած սեփական էթնիկ ինքնության հանդեպ երկակիությունից, որից հետո անհատը մուտք է գործում սեփական էթնիկ ինքնության բացահայտման, ուսումնասիրման փուլ, ինչը տեղի է ունենում դեռահասության և պատանեկության տարիքում[88]: Այս փուլն առանձնանում է սեփական էթնոսի, մշակույթի և պատմության նկատմամբ հետաքրքրությամբ: Վերջին փուլը տեղի է ունենում, երբ անհատը բացահայտում է էթնիկ խմբում իր դերի ըմբռնումը[89]:

Էթնիկ սոցիալականացման և ինքնության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ՝ ընտանիքը, էթնիկ հարևանությունը, էթնիկ ընկերությունը (սոցիալական միջավայր), էթնիկ լեզվի տիրապետումը, սեռը և այլն: Տեղային էթնիկ միջավայրերն իրենց հերթին

[85] Барт 2006, 11-18.

[86] Smith 1999, 11-17.

[87] Phinney 1973, 32-46.

[88] Atkinson et al. 1993, 257-277.

[89] William et al. 1991.

ստեղծում են պատումների ցանց (storytelling network)[90], որի հիմնական աղբյուրներն են բնակիչները, համայնքի անդամները, համայնքային կազմակերպությունները և էթնիկ մեդիան:

Հարկ է նշել սակայն, որ էթնիկ մեդիայի և էթնիկ ինքնության փոխադարձ կապի վերաբերյալ քիչ ուսումնասիրություններ կան: Իսկ դրանք անհրաժեշտ է իրականացնել որպես առանձին դեպքի ուսումնասիրություն՝ ելնելով էթնիկ-ռասայական խմբերի, նրանց մեդիայի և ընդունող երկրի առանձնահատկություններից: Այսպես, ԱՄՆ-ում, որն առաջատար է էթնիկ մեդիայի ուսումնասիրություններով, այս ոլորտի հետազոտությունները գլխավորապես նպատակ ունեն պարզելու՝ արդյո՞ք էթնիկ մեդիայի օգտագործումը ռեսուրս է բազմակարծության և էթնիկ համայնքի ուժեղացման համար, կամ էլ՝ արդյո՞ք էթնիկ մեդիան ուծացնում է իր լսարանին գերիշխող հասարակության մեջ: Մի շարք հետազոտողներ փաստում են, որ էթնիկ մեդիան հիմնականում կատարում է ուծացնող դեր՝ համոզելով էթնիկ համայնքին, որ նրանք ներգաղթելու ճիշտ որոշում են կայացրել, տալով տեղեկատվություն, ինչն օգնում է ներգաղթյալներին հարմարվել իրենց նոր միջավայրում[91]: Այլ հետազոտություններ եզրահանգում են, որ էթնիկ մեդիան գլխավորապես կատարում է պլյուրալիստիկ գործառույթ: Այսպես օրինակ, Ամերիկայում ծնված լատինոսների մոտ էթնիկ ամսագրերն ամրապնդում են էթնիկ ինքնությունը՝ տալով ինքնության խորհրդանիշեր, ձևավորելով համայնք և ներարկելով էթնիկ հպարտություն[92]: Էթնիկ մեդիան կարող է խոչընդոտել զանգվածային մեդիա շուկայի գաղափարախոսություններին՝ տալով հակագաղափարներ և շեշտադրելով էթնիկ համայնքի դրական կողմերը, ինչը չի արժանանում հիմնական ԶԼՄ-ների ուշադրությանը[93]: Լատինամերիկյան անդրազգային մեդիայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հեռուստանովել-

---

90 Ball-Rokeach 2005b.
http://www.metamorph.org/images/uploads/Meta_Database_Book.pdf

91 Park 1922; Lam 1980.

92 Johnson 2000.

93 Riggins 1992, 8-16.

ների դիտումը լատինամերիկացիներին տալիս է մշակութային խորհրդանիշեր, որոնք լեգիտիմացնում և հաստատում են իրենց մշակութային արժեքները[94]:

Սակայն էթնիկ մեդիայի և ինքնության փոխներգործության գործընթացը միանշանակ չէ: Էթնիկ մեդիան միաժամանակ խրախուսում է էթնիկ ինքնությունը և մեծացնում է ձուլումը գերիշխող հասարակության մեջ[95]:

Տարբեր տեսություններ ներկայացնում են այս հայեցակարգերի փոխհարաբերման  տարբեր մոտեցումներ: Սոցիալական կոգնիտիվ տեսությունները, ինչպիսիք են սոցիալական ուսուցման տեսությունը, սխեմայի տեսությունը, մոդելային և էվրիստիկական տեսությունները, վկայում են այն մասին, որ էթնիկ մեդիայի հաղորդագրությունները կարող են փոխել էթնիկ խմբի՝ իրենց վերաբերյալ ընկալումները, օրինակներով ավելի ակնառու և հասանելի դարձնելով իրենց խմբի ընկալումը: Մեդիայի կողմից ուսուցման այս գործընթացը հետագայում ազդեցություն է ունենում սոցիալական փոխազդեցության և սոցիալական ընկալման վրա: Քննադատական և մշակութային տեսությունները հաստատում են, որ զանգվածային մեդիան գերիշխող գաղափարների փոխանցման հիմնական դաշտն է: Քննադատական ռասսակայան տեսաբանները դիտարկում են տեքստերը, սոցիալական կառուցվածքները և փոխհարաբերությունները՝ հասկանալու համար այն ուղիները, որոնցով զանգվածային մեդիա շուկան արտոնություն է տալիս սպիտակներին և ճնշում է ռասայականացված էթնիկ փոքրամասնություններին: Մշակութային տեսաբանները հատուկ նշանակություն են տալիս լսարանին. մեդիա տեքստը գործածողը կարող է ստեղծել դրա տարբեր իմաստներ, որոնք տարբերվում են մեդիա արտադրողների մտադրություններից: Այս տարընթերցումը Ս. Հոլը պայմանականորեն տարբերակել է խմբերի՝  նախընտրելի ընթերցում, պայմանական ընթերցում և ընդդիմադիր ընթերցում: Ընթերցման այս

94 Barrera, Bielby 2001, 1–18; Mayer 2003, 479–495:

95 Subervi-Velez 1986, 71-96.

ձևերը կախված են տեքստից և լսարանի ընդհանուր մշակութային ընկալումներից[96]:

Էթնիկ մեդիայի բազմաթիվ հետազոտություններ դիտարկել են հիմնահարցը՝ արդյոք այն խաղում է պլյուրալիստական, թե՝ ուծացնող դեր, և ստացել են տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ էթնիկ մեդիան թե՛ ուծացնող, թե՛ պլյուրալիստիկ է[97]:

Էթնիկ մեդիան ուծացնող գործառույթն իրականացնում է մի քանի ճանապարհով: Հիմնական ուղին, որով էթնիկ մեդիան ուծացնում է իր լսարանին, այն է, որ օգնում է ներգաղթյալների ուղղորդմանը գերիշխող հասարակության մեջ: Էթնիկ մեդիան խրախուսում է ներգաղթյալներին՝ թողնել ավանդական կապերը և հարմարվել նոր մշակութային ու սոցիալական պրակտիկաների հետ: Երկրորդը, էթնիկ մեդիան կրում է գերիշխող գաղափարախոսություն, որոնք երբեմն ակնհայտ են: Սակայն շատ հաճախ էթնիկ մեդիան տարածում է գերիշխող գաղափարախոսությունները ոչ ակնհայտ, թաքնված ձևով: Միայն գրելով պատմություններ գերիշխող սոցիալական համատեքստում առկա ինստիտուտների և մարդկանց մասին, այդ պատմությունները կարող են անուղղակիորեն  կրել գերիշխող գաղափարախոսություններ[98]: Մյուս ուղին, որով գերիշխող գաղափարախոսությունները տարածվում են էթնիկ մեդիայի միջոցով, զանգվածային մեդիա շուկայի ժանրը յուրացնելն է: Էթնիկ մեդիայի նյութերը ամրացնում են ներգաղթյալների՝ իրենց հայրենիքը լքելու որոշումը, տարածում են ուծացնող հաղորդագրություններ՝ պատմելով ներգաղթյալներին, որ ընդունող երկիրը տալիս է հնարավորություններ, որոնք չէր տալիս ծագման երկիրը/հայրենիքը[99]: Հաղորդագրություններն ուծացնող բնույթ են կրում նաև, երբ էթնիկ մեդիան շեշտադրում է այն հանգամանքը, որ էթնիկ համայնքը/փոքրամասնությունը և մեծամասնությունն ունեն ընդհա-

96 Hall 1996, 110-121.

97 Subervi-Velez 1986, 71-96.

98 Johnson 2000, 229-248. S. Riggins 1992.

99 Lam 1980, 74-92.

նուր հետաքրքրություններ[100]: Վերջապես, էթնիկ մեդիայի առևտրային բնույթը, ժամանակակից տեխնոլոգիաների սոցիալական ազդեցությունները և մեդիայի սեփականատիրոջ ոչ էթնիկ ներկայացուցիչ լինելը կարող են նպաստել գերիշխող գաղափարախոսական հաղորդագրությունների տարածմանը[101]:

Չնայած ուծացնող գործառույթին, էթնիկ մեդիայի գլխավոր գործառույթը պլյուրալիստիկն է: Փաստացիորեն, էթնիկ մեդիան ներգաղթյալների էթնիկությունը պահպանող կարևորագույն ինստիտուտներից է[102]: Պլյուրալիստիկ գործառույթն իրականացնելու ճանապարհներից մեկը էթնիկ ինքնության ամրապնդումն ու աջակցումն է՝ ակնհայտ հակագաղափարների միջոցով, որոնք ձևավորվում են էթնիկ շրջանակներում: Սա ձեռք է բերվում մի շարք տարբեր ճանապարհներով: Առաջինը լրագրողների և էթնիկ մեդիա կազմակերպությունների՝ էթնիկ համայնքը պահպանելու ակտիվ հետաքրքրությունն է[103]: Էթնիկ մեդիան կարևոր դեր է խաղում էթնիկ խմբի ակտիվիզմի գործում՝ արտահայտելով համայնքի հակադրությունը կամ միասնությունը, ամրացնելով էթնիկ խմբի գիտակցությունը՝ քարոզելու էթնիկ խմբի ընդհանուր քաղաքական շահերը[104]:

Հաշվի առնելով այս ակտիվիստական կողմնորոշումը, զարմանալի չէ, որ էթնիկ մեդիան կենտրոնանում է այն թեմաների վրա, որոնք շրջանառում են էթնիկ համայնքի դրական իմիջը, ստեղծում են փոքրամասնության նորությունների օրակարգ և քիչ ուշադրություն են դարձնում այն պատմություններին, որոնք համայնքը ներկայացնում են բացասական լույսի ներքո: Ավելին, էթնիկ մեդիան օգնում է պայքարել էթնիկ փոքրամասնության բացասական պատկեր ներկայացնող զանգվածային մեդիա շուկայի դեմ՝ մատուցելով էթնիկ խմբին

[100] Riggins 1992.

[101] Subervi-Velez 1986, 71-96.

[102] Viswanath, Arora 2000, 39-56.

[103] Riggins 1992.

[104] Johnson 2000, 229-248.

օժանդակող հակագաղափարախոսություն[105]: Էթնիկ մեդիան գործում է որպես օգնական՝ հայտարարելով տեղական համայնքային իրադարձությունները: Վերջապես, էթնիկ մեդիան մատուցում է լուրեր հայրենիքի մասին, ինչը հասանելի չէ զանգվածային մեդիա շուկայում: Միանշանակ է, որ էթնիկ մեդիան տարածում է գաղափարախոսություն, ինչը շատ օգտակար է էթնիկ խմբի առանձնահատկությունների պահմանման և վերարտադրման համար:

Ակնհայտ ակտիվիստական բնույթին զուգահեռ էթնիկ մեդիայի պլյուրալիստիկ գործառույթն իրականացվում է նաև ոչ ակնառու ձևերով: Դրանցից առաջինը էթնիկ մեդիայի խորհրդանշական ներկայությունն է: Էթնիկ մեդիա կազմակերպությունների պարզ ներկայությունը խորհրդանշորեն հաստատում է էթնիկ խմբերի տեղը հիմնական հասարակության մեջ: Երկրորդը, էթնիկ մեդիան ուժեղացնում է էթնիկ խմբին՝ օգտագործելով էթնիկ լեզուն[106]: Լեզվական մարդաբանների և սոցիոլեզվաբանների աշխատանքները ցույց են տալիս, որ մշակույթը փոխանցվում և ձևավորվում է լեզվի միջոցով: Պահպանելով լեզուն՝ էթնիկ մեդիան ազդում է մշակութային փոխանցելիության վրա և ամրացնում է էթնիկ կապերը[107]:

Այսպիսով, էթնիկ մեդիայի վերաբերյալ գրականությունը հիմնավորում է նրա թե՛ ուծացնող, թե՛ պլյուրալիստական բովանդակությունը և ազդեցությունը:

Ռ. Պարկն առանձնացրել է էթնիկ մամուլի մի շարք ասպեկտներ, որոնք օժանդակում են բազմակարծությանը՝ էթնիկ լեզվի և ազգային ինքնության պահպանումը, նորությունները էթնոսի հայրենիքից: Չնայած այս պլյուրալիստական գործառույթներին, Պարկը եզրակացնում է, որ էթնիկ մեդիայի օգտագործման առաջնահերթ արդյունքը ձուլումն է[108]: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ էթնիկ մամուլը, կախված իր սոցիալական տեղանքից, գրում է պատմություններ խո-

---

105 Mathani 2001, 99-133.

106 Riggins 1992.

107 Johnson 2000, 229-248.

108 Park 1922.

շոր համայքների և գերակա ազգի մասին, ինչը ենթադրյալ հետաքրքրություն է ստեղծում էթնիկ համայնքներից դուրս՝ խթանելով ներգաղթյալներին ընդունած ազգի հետաքրքրությունները: Բացի դրանից, սոցիալական ադապտացման համար համայնքի անդամները կարիք ունեն հասկանալու տվյալ երկրի իրադարձությունները, ավանդույթները, սովորույթները և գաղափարները: Այս պահանջմունքը բավարարելու համար էթնիկ մամուլը նպաստում է ընդունող հասարակության մեջ ներառմանը, ինչը խթանում է ուծացման գործընթացը:

Ի տարբերություն Ռ. Պարկի, ով ուսումնասիրել է «սպիտակ» էթնիկ մեդիան, Լ. Լամը հետազոտել է Կանադայի չինական էթնիկ մամուլը[109]: Չնայած Կանադայի չինացիների ռասայականացված կարգավիճակին, Լամը եզրահանգում է, որ էթնիկ մեդիան խթանում է ուծացումը, ոչ թե բազմակարծությունը: Ըստ նրա, էթնիկ մեդիայի առաջնահերթ դերը ընթերցողներին իրենց նոր սոցիալական միջավայրում հարմարվելու գիտելիքներ փոխանցելն է, ինչը նպաստում է ուծացմանը: Ուղիներից մեկը, որով Կանադայի չինական էթնիկ մամուլն իրականացնում է այս դերը, խրախուսում է ներգաղթյալներին, որ նրանք ճիշտ ընտրություն են արել՝ հեռանալով իրենց հայրենիքից և ներգաղթելով Կանադա: Էթնիկ մամուլը նաև տրամադրում է հիմնական տեղեկատվություն՝ Կանադայում հարմարվելու և հաջողությունների հասնելու վերաբերյալ, ինչը նույնպես արագացնում է ձուլումը: Վերջապես, ի տարբերություն շատ հետազոտողների, Լամը համարում է, որ ներգաղթյալների հայրենիքի մասին նորություններ տրամադրելը չի խաղում պլյուրալիստիկ դեր, այլ ուծացնող է: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ տեղեկանալով հայրենիքի խնդիրների մասին՝ ներգաղթյալները շատ ավելի բարձր են գնահատում իրենց նոր կանքը Կանադայում:

Մ. Ջոնսոնը վերլուծել է ամերիկյան էթնիկ ամսագրերը, որոնց թիրախային լսարանը երիտասարդ լատինամերիկացիներին են: Նրա հետազոտությունն ուղղված է երկրորդ սերնդի էթնիկ փոքրամասնու-

[109] Lam 1980, 74-92.

թյանը, որը բավականին ակուլտուրացվել է և նախընտրում է անգլալեզու մեդիա: Ջոնսոնը հանգել է եզրակացության, որ իր ուսումնասիրած լատինական ամսագրերը խթանում են հոգնականացումը՝ զարգացնելով էթնիկ հպարտությունն ու ինքնությունը: Այդ ամսագրերում կա «ագրեսիվ հպարտություն»՝ լատինական էթնիկության և հիացմունք՝ հաջողակ լատինոսների հանդեպ: Ակտիվ բովանդակություն չունեցող այդ ամսագրերի շնորհիվ տարածվում են խորհրդանիշեր և դերային մոդելներ, որոնք քարոզում են խիստ լատինամերիկյան ինքնություն: Ըստ Ջոնսոնի, ամսագրերի մատուցած իմիջները առաջացնում են խորհրդանշական լիազորություն և վստահութուն, ինչը նպաստում է էթնիկ մշակույթի և հպարտության պահպանմանն ու փոխանցմանը[110]:

Ֆ. Սաբերվի-Վելեզը իսպանալեզու էթնիկ մեդիայի հետազոտողներից է, ում հետազոտական խնդիրը նույնպես էթնիկ մեդիայի երկակի դերն է: Ըստ նրա, էթնիկ մեդիան ոչ միայն խթանում կամ խոչընդոտում է ձուլումը: Այն ավելի շատ նպաստում է և՛ ձուլմանը, և՛ հոգնականացմանը միաժամանակ[111]: Դա տեղի է ունենում նույնիսկ այն իրավիճակում, երբ տեսականորեն ենթադրվում է, որ էթնիկ մեդիան կատարում է կա՛մ ձուլող, կա՛մ հոգնականացնող գործառույթ: Այսպես, Սաբերվի-Վելեզի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անգլալեզու և իսպանալեզու հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են առողջապահական լուրեր և սովորաբար տեղեկացնում են կարևոր ինստիտուտների մասին, ինչպիսին ԱՄՆ առողջապահական համակարգն է և բժշկական ինստիտուտները, ի հավելումն ակնհայտ ուծացնող գործառույթին, ունեն նաև հոգնականացնող ասպեկտներ: Օրինակ, իսպանալեզու հեռուստաընկերությունների հաղորդագրություններն ունեն ձևակերպումներ, որոնք հատուկ են լատինամերիկյան համայնքին, և հարցազրույցներում ներգրավում են լատինամերիկյան փորձագետների: Հաղորդարգրությունների մեջ լատինամերիկյան

110 Johnson 2000, 229-248.
111 Subervi-Velez 1986 71-96.

ասպեկտների ներառման շնորհիվ առողջապահական նորությունների հեռարձակումը խթանում և ամրապնդում է լատինամերիկյան ինքնությունը:

Չնայած հետազոտությունների մեծ մասը կենտրոնացած է առաջնահերթ հարցադրման վրա՝ էթնիկ մեդիայի բովանդակության մեջ ուծացումն ընդդեմ հոգնականացման, մի շարք հետազոտություններ դիտարկում են էթնիկ մեդիայի սպառումը, օգտագործումը: Ըստ Ռ. Պարկի, ներգաղթյալների մամուլն ազդեցություն ունի իր ընթերցողների վրա՝ գերակշռելով «մեդիա ժամանակի» մեջ[112]: Սակայն վերջին ուսումնասիրությունները հերքում են «նորությունների գետտո» գաղափարը: Սան Ֆրանցիսկոյում չինացիների, լատինամերիկացիների և աֆրոամերիկացիների կողմից էթնիկ մեդիայի օգտագործման վերաբերյալ մեծամաշտաբ ուսումնասիրությունները պարզել են, որ, չնայած էթնիկ մեդիան կարևոր ռեսուրս է այս բոլոր համայնքների համար, այն լրացնում է զանգվածային մեդիա շուկան, բայց չի զբաղեցնում նրա տեղը[113]: Ըստ էության, միակ դաշտը, որում էթնիկ մեդիան ավելի արժանահավատ է համարվում, քան հիմնական ԶԼՄ-ները, լսարանի հայրենիքի մասին հաղորդագրություններն են: Ավելին, էթնիկ մեդիայի մեկուսացումը կարճաժամկետ է, քանի որ ներգաղթյալների մեծամասնությունն ավելացնում է զանգվածային մեդիայի չափաբաժինը ընդհանուր լրատվական սպառման մեջ: Այդուհանդերձ, սա չի նշանակում, որ էթնիկ մեդիան անկարևոր է էթնիկ փոքրամասնության անդամների համար: Ուսումնասիրված երեք էթնիկ խմբերի ճնշող մեծամասնությունը շարունակում է կանոնավոր օգտագործել էթնիկ մեդիա: Նրանք համոզմունք են հայտնել, որ էթնիկ մեդիան գործում է որպես «պահապան» իրենց համայնքի համար: Էթնիկ մեդիայի այս գիտակցված ակտիվիզմը օգնում է առաջ մղել էթնիկ փոքրամասնության անդամներին դեպի ամերիկյան քաղաքական կյանք, քանի որ նրանք իրազեկ են դառնում իրենց էթնիկ խմբի վտանգների և արտոնություն-

112 Park 1922.

113 Browning et al. 2003.

ների մասին: Այս հետազոտության արդյունքները հերքում են այն առասպելը, որ էթնիկ մեդիան «նորությունների գետտո» է և որ այն էթնիկ համայնքին տանում է դեպի մեկուսացում:

Մեկ այլ կարևոր ուսումնասիրություն է 16-ամյա պանելային հետազոտությունը, որն իրականացրել է Լ. Ջեֆրեսը 1976-1992 թթ.[114]: Հետազոտության նպատակն էր պարզել՝ արդյոք էթնիկ մեդիան ներգործում է էթնիկ ինքնության և մշակույթի վրա: Այս հետազոտության համար հարցում է անցկացվել ԱՄՆ Միդվեսթ տարածաշրջանի տասներեք սպիտակ էթնիկ խմբերի ներկայացուցիչների շրջանում՝ հավաքելով տվյալներ էթնիկ ինքնության, էթնիկ վարքի, էթնիկ մեդիայի օգտագործման և, ընդհանուր առմամբ, ԶԼՄ սպառման մասին: Ջեֆրեսը պարզել է, որ էթնիկ մեդիան օգնում է պահպանել կապն էթնիկ մշակույթի հետ և կարևոր դեր է խաղում էթնիկ ինքնության պահպանման գործում: Ժամանակի ընթացքում այս ազդեցությունը մեծանում է: Էթնիկ մեդիայի օգտագործումը ենթադրում է ժամանակի ընթացքում աճող էթնիկ ինքնության ամրացող զգացում:

Այսպիսով, էթնիկ մեդիայի և էթնիկ ինքնության փոխկապվածության հիմնահարցի վերաբերյալ տեսական մոտեցումները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էթնիկ մեդիայի բովանդակությունը երկակի է՝ և՛ ուծացնող, և՛ հոգնականացնող: Վերջինս էթնիկ մեդիայում նպաստում է էթնիկ մշակույթի և ինքնության պահպանմանն ու փոխանցմանը: Այն նաև տրամադրում է խորհրդանիշներ և դերային մոդելներ, ամրապնդում էթնիկ պատկանելության զգացումը:

## 3.2. Սփյուռքի մամուլը որպես էթնիկ սահմանների պահպանման միջոց

Ներկայիս գլոբալացվող և հարափոփոխ աշխարհում էթնոսոցիալական գործընթացների առանձնահատկություններն արդիական են դարձնում էթնոմշակութային ինքնության հիմնահարցը: Սոցիալական ինստիտուտների փոխակերպումների, մշակութային միջավայրի և

[114] Jeffres 2000, 496-535.

արժեքային կողմնորոշիչների փոփոխության պայմաններում անհատը դիմում է էթնիկ մշակույթի արժեքներին, ինչը համեմատաբար կայուն է, և նույնացնում է իրեն որևէ էթնոսի հետ՝ կյանքի կայունության զգացման համար: Սոցիալական ինքնության տարբեր ձևերի մեջ հենց էթնոմշակութային ինքնությունն ունի ամենամեծ կայունությունը: Էթնոմշակութային ինքնության հիմնահարցը հատուկ նշանակություն է ստանում սփյուռքի պարագայում: Ուծացման դեմ սփյուռքի կայունությունն ապահովվում է այնպիսի հիմնասյուների շնորհիվ, ինչպիսիք են պատմական հիշողությունը, ազգային գաղափարախոսությունը, կրոնական հայացքները, մշակութային արժեքները և այլն, որոնք համախմբում և խոչընդոտում են ուծացումն այլէթնիկ միջավայրում: Էթնիկ ինքնության պահպանման այս ջանքերը, սակայն, ընդունող հասարակությունների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային պայմանների ազդեցությամբ ձևավորում են առանձնահատուկ սփյուռքյան ինքնություն:

Սփյուռքում անհատները գիտակցաբար չեն ընտրում էթնիկ ինքնության որևէ ձևը. տարբեր համատեքստերում նրանք կարող են նույնացնել իրենց տարբեր ինքնությունների հետ: Այդ ինքնությունները բանակցությունների շարունակական գործընթացի մեջ են և կարող են ձևավորվել երկակի (ամերիկահայ, պարսկահայ և այլն), խառը՝ հիբրիդային և այլ ինքնություններ: Ինքնության բանակցություններն իրենց հերթին սահմանում են էթնիկ խմբի սոցիալական սահմանները[115]: Սահմանների պահպանումը սփյուռքի բնույթն առավել համապարփակ ընկալելու համար երեք առանցքային տարրերից մեկն է, ի թիվս ցրման և դեպի հայրենիք կողմնորոշման[116]: Սահմանների պահպանումը կոչված է առանձնահատուկ ինքնության պահպանմանը ընդունող հասարակության մեջ: Այն հատկապես կարևոր է այնպիսի հանրույթի համար, որը չունի սեփական տարածքային միավոր, պետություն: Սահմանների պահպանման ուղղված մի քանի սերունդների

115 Ф. Барт 2006, 17-18.

116 Brubaker 2000, 19.

ջանքներն են հենց տարբերակում ավանդական մոբիլիզացված սփյուռքին, ինչն առանձին անհատների սահմանազատված խումբ չէ կամ պարզապես էթնոժողովրդագրական կամ էթնոմշակութային փաստ: Ինչպես նշում է Խ. Թէօլէօլեանը՝ «Սփյուռքներն անդրազգայնության խորհրդանիշն են, քանի որ նրանք մարմնավորում են սահմանների հարցը, ինչն ընկած է ազգային պետության այլընտրանքի ցանկացած խելամիտ սահմանման հիմքում»[117]:

Ինքնության բանակցությունների և էթնիկության սահմանների հաստատման համար անհրաժեշտ են տարածություններ, որտեղ սփյուռքի ներկայացուցիչները կամ էթնիկ խմբի անդամներն ինքնանույնացնում են իրենց և իրենց համայնքին: Այդ տարածություններից մեկը էթնիկ մեդիան է: Նրա հիմնական գործառույթներից մեկը էթնիկ ինքնության ամրապնդման և բանակցությունների մեջ նրա կատարած դերն է:

Էթնիկ սահմանների պահպանման գործում մեդիայի կատարած առաջին դերը հենց նրա ներկայությունն է ընդունող հասարակության մեջ. այն սփյուռքի անկախ ձայնն է, որը տարածում է նրա հետաքրքրությունների բովանդակությունը, ներկայացնում է էթնիկ համայնքը հիմնական մեդիայից տարբերվող պատմություններով, հաստատում է համայնքի կարևորությունը և ներկայացնում նրա շահերը[118]: Երկրորդը մամուլի՝ որպես սփյուռքում էթնոմշակութային ինքնության պահպանմանն ուղղված դիսկուրսիվ տարածության դերն է: Մի կողմից, մամուլը ցույց է տալիս բազմազան ու բազմաշերտ սփյուռքում էթնոմշակութային ինքնության պահպանման վրա ներգործող ընդունող երկրների միջավայրի և համայնքային առանձնահատկությունները, մյուս կողմից, մեդիա բովանդակությունը տարածում է ընդհանուր էթնոմշակութային արժեքներ տարբեր միջավայրերում գտնվող սփյուռքի համայնքներին: Այդ արժեքների մեջ մշակույթի և ծագման տեղի մասնատվածության պարագայում մշակույթի տեղը դառնում է անգնահատելի:

---

117 Tölölyan 1991, 3-7.

118 Բարսեղյան 2018, 33:

Սփյուռքում էթնիկ և մշակութային ինքնանույնացումը և ինքնության պահպանմանն ուղղված ինստիտուտների ստեղծումը առանցքային նշանակություն ունեն: Այդ շարքում, մամուլը, որպես դիսկուրսիվ տարածություն, սփյուռքի սահմանման կարևոր ինստիտուտ է: Մի կողմից, աշխարհով մեկ սփռված հայկական բազմազան ու բազմաշերտ սփյուռքում էթնոմշակութային ինքնության պահպանման վրա ներգործող ընդունող երկրների միջավայրի և համայնքային տեղական կառույցների առանձնահատկությունները կարող են դրսևորվել էթնիկ մեդիայում: Մյուս կողմից, մեդիա բովանդակությունը կարող է տարածել ընդհանուր էթնոմշակութային արժեքներ տարբեր այլազգի միջավայրերում գտնվող սփյուռքի տարբեր համայնքներին:

Ինչպես սահմանում է Ս. Հոլը, ինքնությունը պատմության, լեզվի և մշակույթի ռեսուրսները օգտագործելու վերաբերյալ հարցեր են ավելի շատ կայանալու ընթացքում, քան լինելու. ոչ թե «ո՞վ ենք մենք» կամ «որտեղի՞ց ենք եկել», որքան՝ «ի՞նչ ենք մենք դարձել», «ինչպե՞ս ենք մենք ներկայացվել» և «ինչպե՞ս ենք մենք ներկայացնում ինքներս մեզ»[119]: Լինելով մշտական գործընթացի մեջ՝ ինքնությունը կայուն փոխակերպվում է, դառնում ավելի հատվածական, մասնատված և «բազմաթիվ անգամ վերակառուցվում է տարբեր (հաճախ հակադիր կամ թշնամի) դիսկուրսների, պրակտիկաների և դիրքերի շուրջ»: Մասնատված և փոփոխվող ինքնությունը, այդուհանդերձ, ձգտում է ներփակվելու, ներքին համաձայնության և անվերջության զգացումի[120], ինչին հնարավոր է հասնել վերապատմելով անցյալի պատմությունն ու պատկերացնելով «հայրենիքը»:

Սփյուռքյան ինքնությունը որոշվում է՝ ընդունելով բազմազանության և տարբերությունների անհրաժեշտությունը: Այն կայուն ձևով արտադրվում և վերարտադրվում է կրկին՝ միգրացիոն նոր հոսքերին զուգահեռ, նաև վերարտադրվում է անվերջանալի ցանկությունը՝ վե-

119 Hall 1996, 1–17.

120 Frith 1996, 108-126.

րադառնալ «կորուսյալ ծագմանը»[121]: Այս պարագայում մշակույթի՝ որպես առանձին երևույթի տեղը դառնում է անգնահատելի, չնայած որ մշակույթի և ծագման տեղի մասնատվածությունը դառնում է ավելի ու ավելի հստակ:

Սփյուռքի մամուլի տեքստերում էթնիկության սահմանները ցույց տվող մշակութային տեղեկատվությունն իր ծավալով զբաղեցնում է երկրորդ տեղը (քաղաքականից հետո): Ընդ որում, Սփյուռքի մասին նյութերի մեջ նրանք զբաղեցնում են առաջին տեղը: Մշակույթի մասին ընդհանուր տեղեկատվության մեջ մեծամասնություն են կազմում Հայաստանի մշակույթի և մշակութային իրադարձությունների մասին նյութերը (տե՛ս գծապատկեր 15):




*Գծապատկեր 15. Մշակույթի վերաբերյալ տեղեկատվության Հայաստան-սփյուռք ուղղվածությունը*

Այսպիսով, սփյուռքի մամուլն ավելի շատ ներկայացնում է հայաստանյան, քան սփյուռքյան մշակույթը: Թերևս սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ազգային մշակույթի զարգացման համար ամենաբարենպաստ տեղը ազգային պետությունն է, և սփյուռքյան ցանցի ամենակարևոր կենտրոնը հայրենիքն է, ինչն արտահայտվում է նաև մամուլում: Մշակույթն այն առանձնահատուկ ոլորտն է, որտեղ սփյուռքն ամենաշատն է ներկայացված մամուլի նյութերում: Հայրենիք-սփյուռք կապը, որի մասին տեղեկատվությունը բավականին քիչ է, նույնպես առավելապես ներկայացվել է մշակութային թեմաների շրջանակներում: Սեփական մշակութային արժեքների վերաբերյալ

121 Hall 1996, 1–17.

մամուլի տեղեկատվությունը կարող է մշտարթուն պահել ձուլման վտանգը, ինչպես նաև վերակազմավորել հատվածական մշակութային ինքնությունը՝ այլազգի միջավայրում ապրող և մշակութային միջսահմանային իրավիճակում գտնվող հայերի համար:

Հայաստանի և սփյուռքի մշակույթի վերաբերյալ տեղեկատվությունն իր հերթին կարելի է բաժանել եկու խմբի՝ հայկական մշակույթն ինքնին և հայկական մշակույթի առնչությունները: Հայկական մշակույթը և՛ Հայաստանում, և՛ սփյուռքում ավելի շատ ներկայացվում է փակ (միայն ՀՀ մշակույթ՝ 33.1%, միայն սփյուռքի մշակույթ՝ 26.4%), քան համագործակցային կամ համեմատական (ՀՀ-միջազգային մշակութային առնչություններ՝ 22.6%, սփյուռք-ընդունող երկիր մշակութային առնչություններ՝ 13.0%) (տե՛ս գծապատկեր 16):




*Գծապատկեր 16. Մշակույթի ընդգրկման շրջանակները*
*(% մշակութային թեմաներով հոդվածներից)*

Այդուհանդերձ, հայկական մամուլում արտահայտվում են ոչ միայն մշակութային ինքնության բանակցությունները, այլ նաև հայրենիք-սփյուռք մշակութային առնչությունները: Վերջինս երեք թերթերի մշակութային նյութերի ողջ ծավալի մեջ կազմել է ընդամենը 4.9 տոկոս: Այս հանգամանքը, մի կողմից, կարող է վկայել ընդհանուր հայկական մշակութային արժեքների և տարանջատված չլինելու մասին (ինչի արդյունքում մամուլը չի ներկայացնում մշակույթները կամրջող

պատմություններ), մյուս կողմից, մամուլը մշակութային սահմաններ է դնում ոչ միայն այլ մշակույթների, այլև էթնոսի տարբեր հատվածների միջև:

Հարկ է նշել, որ մամուլում մշակութային տեղեկատվության դրական կամ բացասական գնահատականով ներկայացումը կարող է պայմանավորել սեփական մշակութային արժեքների հանդեպ որոշակի վերաբերմունք: Առհասարակ, մշակույթը, ի համեմատություն այլ ոլորտների, ամենադրականն է ներկայացվել:

Երեք թերթերի մշակութային թեմաների տարբեր շրջանակների՝ թե՛ Հայաստանի, թե՛ սփյուռքի մշակույթը ներկայացնելու դեպքում գնահատականների համամասնությունը նույնն է (տե՛ս գծապատկեր 17): Սա նույնպես հաստատում է վերոշարադրյալ վարկածը, որ Հայաստան-սփյուռք մշակութային նշանակալի տարանջատվածություն չկա: Նման փոխլրացնող մշակութային դաշտում առավել դյուրին է իրականացնել անդրազգային տեղեկատվական, մշակութային և այլ ծրագրեր:




*Գծապատկեր 17. Մշակութային թեմաների գնահատականն ըստ ՀՀ-սփյուռք շրջանակների (առանձին թերթերի և ընդհանուր պատկերը)*

Հայաստանի և սփյուռքի մշակութային թեմաների գնահատականներն ունեն գրեթե նույն համամասնությունը և գնահատականների դրական-բացասական բաշխվածությունը: Իհարկե, մշակութային թեմաների գանահատականները տարբերվում են ըստ թերթերի: Սփյուռքի մշակութային կյանքն առավել դրական գնահատականով է ներկայացվել «Ноев Ковчег»-ում, իսկ Հայաստանի մշակութային կյանքն ամենաքիչ դրականը՝ «Ալիք»-ում:

Մամուլի միջոցով ազգային արժեքների տարածման գործում մշակութային թեմաներից հետո կարևորվում է նաև համազգային հարցերի քննարկումը: Ազգային հիմնահարցերը (Հայկական հարց, Հայոց եղեռն, Ղարաբաղյան հիմնահարց, ազգային արժեքներ, ազգապահպանություն և այլն) առանձնացված բավականին քիչ են քննարկվել (տե՛ս գծապատկեր 18):




*Գծապատկեր 18. Համազգային հարցերի ներկայացվածությունը մամուլում, %*

Այդ թեմային առնչվող նյութերի մեծամասնությունը ներկայացվել է  քաղաքական թեմաների համատեքստում: Հատկանշական է, որ երեք թերթերը տարբեր համամասնությամբ քննարկել են ազգային հարցերն ավելի շատ սփյուռքի համատեքստում, քան Հայաստանի: Համազգային հարցերը, ի տարբերություն մշակույթի, տարածական ընկալում չունեն, բացառությամբ Ղարաբաղյան հիմնահարցի, որը տարածքային կոնֆլիկտ է և, բացի համազգային  նշանակությունից, տեղայնացվում է հայրենիքում: Հետևաբար, ազգային խնդիրների քննարկման շրջանակներն ընդգրկում են և՛ Հայաստանը, և՛ սփյուռքը: Ավելին, սփյուռքում այդ հարցն առավել սուր ընկալում ունի՝ ազգայինի պահպանման և մարտահրավերների տեսանկյունից:

Եղեռնի թեման դիտարկվում է բավականին բազմաշերտ՝ ցեղասպանության մասին տեղեկատվության տարածում, ճանաչում և հատուցում, դրան ուղղված գործողություններ, հայ-թուրքական արդի հարաբերություններ և այլն: Հատկանշական է, որ ազգային և քաղաքական համատեքստերում պատմական՝ ցեղասպանության թեմային զուգորդվում է արդիական՝ Ղարաբաղյան հիմնահարցը, ինչը նույնպես հայկական մամուլի ուշադրության կենտրոնում է[122]: Անցյալի պատմությանը վերաբող ինքնության համար պայքարը, որը, ըստ Լ. Աբրահամյանի տիպական է ինքնության «հայկական» կամ «պատմական» հարացույցին, կարող է այսօր նպաստել ինքնության կառուցմանն ու ամրապնդմանը[123]:

Հաջորդ թեման, որը մամուլի բովանդակության մեջ կարող է տարածել էթնիկության սահմանների խորհրդանիշները, բարեգործությունն է՝ որպես համազգային փոխօգնության և վստահության արժեք: Չնայած բարեգործության՝ որպես հայկական սփյուռքի ավանդական գործառույթի ընկալմանը, մամուլը շատ քիչ է ուղղակիորեն անդրադարձել այս թեմային (նյութերի ընդհանուր ծավալի մոտ 2 տոկոսը)[124]: Բարեգործությունը նաև կարևոր նշանակություն ունի սփյուռքում համայնքային կառույցների պահպանման գործում: Եվ մամուլի բովանդակության մեջ դրա քիչ ծավալը կարող է վկայել համայնքային վերակազմավորումների և սփյուռքյան կառույցների ստեղծման ու պահպանման նոր մոտեցումների պահանջի մասին:

Բարեգործությունը միակ թեման է, որը մամուլում չի ներկայացվել որևէ բացասական գնահատականով, իսկ սփյուռքի համար այն կրկնակի դրական է ներկայացվել, քան Հայաստանի:

Այսպիսով, մշակութային, ազգային և բարեգործական թեմաների միջոցով էթնիկ մամուլը տարածում և վերարտադրում է էթնիկ պատ-

122 Բարսեղյան 2017ա, 149:

123 Աբրահամյան 2002, 49:

124 Բարեգործությունը տնտեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներում կոդավորվել և վերլուծվել է որպես այդ ոլորտների թեմա, եթե այն չի հանդիսացել տվյալ նյութի հիմնահարցը:

կանելությունն ամրապնդող էթնոմշակութային արժեքներ, ինչպես նաև ընդհանրական հայկական տեղեկատվության միջոցով նպաստում «հայաստանակենտրոն», «սփյուռքակենտրոն» և անդրազգային դիսկուրսներին:

Մամուլի միջոցով պատմական հիշողության տարածումը նպաստում է էթնիկ ինքնության պահպանմանը: Ինչպես նշում է Հ. Մարությանը, ի թիվս ծեսերի, ավանդույթների, առասպելների՝ էթնիկ ընդհանրության կամ ազգի անդամների միջև կիսվող հիշողությունը հանդես է գալիս իբրև դրանց անդամներին կապող, նրանց հարաբերություններն ու գործողությունները կառուցող միջոց[125]: Ազգի պատմական հիշողությունը ձևավորվում է անցյալի իրադարձությունների գրանցման միջոցով: Դրանց մի մասը հետագայում որակվում է որպես առավել մեծ, արտակարգ նշանակության իրադարձություն և ազգի կողմից դառնում ընկալված ու սեփական: Ակնհայտ է, որ նմանատիպ դեպքերն են ձևավորում կոլեկտիվ հիշողություն, որը ոչ միայն համընդհանուր ցավ է, այլև նշվում է համատեղ[126]:

Տարբեր համայնքներում գործող սփյուռքի մամուլը ստեղծում է էթնիկ ինքնության բանակցությունների դիսկուրսիվ դաշտ, մասնակցում է սփյուռքյան ինքնության ձևավորմանը, տալիս է խորհրդանիշներ և դիրքորոշումներ՝ էթնիկ սահմանների համար, ստեղծում է երևակայվող համայնքի անդամության զգացում, ինչպես նաև նպաստում է սփյուռքի անդրազգային բնույթի ամրապնդմանը:

Տարօրինակ է, սակայն որքան մշակույթը կտրված է տեղից, տարբեր վայրերի մշակութային և էթնիկ գաղափարները դառնում են ավելի այժմեական[127]: Սփյուռքի ներկայացուցիչները, ովքեր ապրում են մշակութային ծայրամասերում կամ միջանկյալ շրջաններում, խմբավորվում են՝ հիշվող կամ երևակայվող «հայրենիքի» շուրջը, օգտագործում են հայրենի իրական մշակույթը, ձևավորում են էթնիկ համայնք-

125 Մարության 2006, 9:

126 Նույն տեղում, 47:

127 Gupta 1992, 6–23.

ներ, որպեսզի վերաստեղծեն իրենց անկայուն կյանքը և վերջ տան իրենց մշտապես փոփոխվող իրողությանը: Սփյուռքի սուբյեկտների համար մեդիան ստեղծում է այդ միջանկյալ դաշտը: Որպես մշակույթի ներկայացման ձև և համակարգ, այն խաղում է ավելի շատ հիմնարար, քան ռեֆլեքսիվ դեր: Մեդիան առաջադրում է հարցեր մշակույթի, գաղափարախոսության վերաբերյալ և սցենարներ սոցիալական ու քաղաքական կյանքում[128]: Բացի դրանից, որպես սփյուռքում «տարածության մեջ ցրված հանդիսատեսին հանդիպած շարժվող պատկերներ», մեդիան նաև գեներացնում է սփյուռքի հավաքական պատկերացումները[129]:

Սփյուռքյան ինքնությունը որոշվում է՝ ընդունելով բազմազանության և տարբերությունների անհրաժեշտությունը: Այն կայուն ձևով արտադրվում և վերարտադրվում է կրկին՝ միգրացիոն նոր հոսքերին զուգահեռ, նաև վերարտադրվում է անվերջանալի ցանկությունը՝ վերադառնալ «կորուսյալ ծագմանը»: Սփյուռքի ներկայացուցիչները խմբավորվում են՝ հիշվող կամ երևակայվող «հայրենիքի» շուրջ, օգտագործում են հայրենի մշակույթը, ձևավորում են էթնիկ համայնքներ, որպեսզի վերստեղծեն իրենց կյանքը: Նրանց համար մեդիան ստեղծում է այդ միջանկյալ դաշտը. առաջադրում է հարցեր մշակույթի, գաղափարախոսության վերաբերյալ և սցենարներ սոցիալական ու քաղաքական կյանքում:

## 3.3. Հայրենիքը սփյուռքյան մամուլում

Սփյուռքի էթնոմշակութային ինքնությունն առանձնանում է բազմաշերտությամբ և հատվածականությամբ: Սփյուռքյան բազմակի ինքնությունը ներառում է երկու կամ ավելի էթնիկ մշակույթներ և լրացվում տարածաշրջանային, լեզվական, կրոնական, քաղաքացիական և այլ գործոններով[130]: Ընդունող երկրի և պատմական հայրենիքի հան-

[128] Hall 1996b, 411–440.

[129] Appadurai 1996, 4.

[130] Муха 2013, 40-42.

դեպ սփյուռքի երկակի վիճակը ենթադրում է մասնակցություն երկու երկրների մշակութային կյանքում: Սեփական էթնիկ մշակույթի պահպանման և զարգացման համար նրանք պահպանում են կապը (ֆիզիկական կամ հոգևոր) հայրենիքի հետ: Սակայն նոր միջավայրում հարմարումը պահանջում է ընդունող հասարակության սոցիոմշակութային նորմերի և արժեքների յուրացում: Բացի դրանից, էթնիկ խումբը հարաբերություններ է հաստատում սփյուռքի այլ համայնքների հետ: Սփյուռքյան ինքնության ձևավորման համար անհրաժեշտ է նշյալ երեք կարևոր փոխհարաբերությունների առկայությունը՝ կապ սփյուռքի և հայրենիքի, սփյուռքի և ընդունող երկրի, սփյուռքի տարբեր հատվածների միջև[131]:

Այսպես, Գ. Շեֆերը համարում է, որ հայրենիքի, սփյուռքի և ընդունող հասարակության միջև փոխհարաբերութիւնները «համալիր եռակողմ հարաբերություններ» են[132]: Սակայն շատ հեղինակներ կարևորում և առանցքային են համարում այդ փոխհարաբերություններից որևէ մեկը: Ըստ Ք. Բատլերի, ընդունող եկիրը սփյուռքյան ինքնության ձևավորման և կերտման հիմնական դերակատարն է[133]: Նա նշում է, որ սփյուռքների ուսումնասիրությունն առաջ է քաշում հետևյալ հարցը. ինչպե՞ս է ընդունող հասարակությունն ազդեցություն գործում սփյուռքի համայնքի կարողության վրա՝ հայրենիքի, սփյուռքի այլ համայնքների և ընդունող հասարակության մեծամասնության հետ փոխհարաբերվելու գործում: Սփյուռքը վերլուծելու մյուս հարցերից է ընդունող երկրի դերը սփյուռքյան ինքնության ձևավորման գործընթացում: Սփյուռքյան ինքնության ամրությունը կարող է կախված լինել նրանից, թե որքանով է ընդունող երկիրը խրախուսում էթնիկ խմբի ինտեգրումը կամ խտրականությունը: Եթե ընդունող երկիրը չի խթանում ինտեգրումը կամ եթե էթնիկ համայնքը զգում է խտրականություն, դա կարող է հանգեցնել համայնքի մեկուսացմանը՝ խրախուսելով սահ-

131 Francois 2013, 25-28.

132 Sheffer 2003.

133 Butler 2001, 189-219.

մանների պահպանումը, ինչը կարող է փոխանցվել հաջորդ սերունդներին: Ըստ Ջ. Շուվալի մոտեցման, սփյուռքյան խմբի վերաբերմունքն ընդունող երկրին կարող է լինել հայրենիքի հանդեպ տվյալ երկրի քաղաքականության արդունք[134]: Դա կարող է արտահայտվել սփյուռքի կողմից ընտրություններում և քաղաքական մասնակցության այլ ձևերում՝ աջակցելու կամ չաջակցելու միջոցով: Երկիրը կամ հասարակությունը, որը խրախուսում է էթնիկ պատկանելության զգացում, կարող է ստեղծել միջավայր, որտեղ կձևավորվի սփյուռքյան ինքնությունը: Ինտեգրման աստիճանը և տևողությունը չեն չափվում սփյուռքի քաղաքական ակտիվության աստիճանով: Այսպես, ԱՄՆ-ում միգրանտները, ովքեր ստացել են ԱՄՆ քաղաքացիություն, ավելի շատ են ակտիվորեն ներգրավվում իրենց սփյուռքյան խմբերում, քան ոչ քաղաքացիները[135]:

Բացի ընդունող երկրի հետ հարաբերություններից, սփյուռքի ձևավորման և պահպանման համար անհրաժեշտ և առանձնահատուկ բաղադրիչ են կապերը և փոխհարաբերությունները աշխարհի տարբեր մասերում սփյուռքի տարբեր խմբերի միջև: Այս կապերը և փոխհարաբերությունները ձևավորվում են հայրենիքից անկախ: Ինչպես ձևակերպում է Ք. Բաթլերը՝ «այդ հարաբերությունների առաջացումը միգրանտների խմբից սփյուռքի վերածվելու սաղմնային և էական պահ է՝ ամրապնդելու սփյուռքյան ինքնագիտակցությունը, ինստիտուտները և ցանցերը»[136]: Նա հետո փաստում է, որ «եթե սփռված հանրույթը չի պահպանում կապերն իր անդամների միջև, դժվար է այն համարել իրական գործող սփյուռք»: Սփյուռքի ներսում ցանցերը և կապերն առանցքային են սփյուռքյան ինքնագիտակցության համար, քանի որ «այն անհրաժեշտորեն ներառում է առանձնահատուկ/եզակի հանրույթի միաժամանակյա ճանաչում սփյուռքի խմբերի անդամների կողմից»: Ավելին, սփյուռքներին միավորող կապերի ցանկա-

[134] Shuval 2000, 41-57.

[135] Guarnizo et al. 2003,1211-1248.

[136] K. Butler 2001, 189-219.

ցած ուսումնասիրություն կարող է հնարավորություն տալ հասկանալու, թե ինչու որոշ դեպքերում ձևայնացված անդրազգային կազմակերպությունները կարող են գոյություն ունենալ կամ արդյոք առանձնահատուկ մշակութային պրակտիկաները կարող են ծառայել սփյուռքյան ինքնության ամրացմանը:

Վերոնշյալ կապերի համատեքստում սփյուռքյան ինքնության ձևավորման երեք անհրաժեշտ փոխհարաբերություններից հայկական սփյուռքի պարագայում առանձնահատուկ նշանակություն է ստանում հայրենիք-սփյուռք կապը: Պատահական չէ, որ մեր կողմից իրականացված հայկական մամուլի ուսումնասիրությունը ցույց տվեց՝ էթնոմշակութային ինքնության պահպանման համար մեդիան առավելապես շեշտադրում է հայրենիքի հետ կապի կարևորությունը:

Հայրենիքը կազմում է սփյուռքյան կոլեկտիվ ինքնության հիմքը, և վայրի/տարածքի հետ կապն ու դրան վերագրվող նշանակությունը կարևորագույն դեր է խաղում: Կապը կարող է լինել երևակայան հայրենիքի կամ կարուսյալ հայրենիքի, պատմական հայրենիքի կամ ազգային պետության հետ: Սփյուռքի համար հայրենիքը դիտարկվում է որպես տուն, վայր, որտեղ ցանկալի է կամ պետք է ի վերջո վերադառնալ[137]: Ինքնության պահպանման և հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների համար կարևոր է վերադարձի գաղափարը (չնայած սփյուռքի քիչ անդամներ են վերադառնում հայրենիք)[138]: Հայրենիքները հաճախ շահագրգռում, ներգրավում են իրենց սփյուռքներին: Այն կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Ինչպես նաև սփյուռքն իր աջակցությամբ և այլ տարբեր ձևերով ցույց է տալիս, որ հայրենիքի համար օգտակար է կապը սփյուռքի հետ:

Այսպիսով, հայրենիքին վերագրվող նշանակությունը և հայրենիքի հետ կապը կարևորագույն դեր են խաղում սփյուռքյան ինքնության ձևավորման գործում[139]: Ընդ որում, կապը կարող է լինել երևակայվող

137 Brubaker 2005b, 1-19.

138 Rios et al. 2010.

139 Butler 2001, 201.

հայրենիքի, պատմական կորուսյալ հայրենիքի կամ ազգային պետության հետ, իսկ հայրենիքի ընտրությունը կարող է լինել ռացիոնալ ընտրված, պատմականորեն տրված, դրսից հրամցված, քաղաքական և այլն: Սակայն ինչպիսին էլ որ լինի հայրենիքի ընկալումը, սփյուռքում էթնիկ ինքնության ձևավորման համար անհրաժեշտ է հայրենիքի առկայությունը և/կամ դրա ընկալումը

Սփյուռքի ֆենոմենը սահմանելու կամ տարբերակելու համար հայրենիքի հասկացության ճշգրտումը կարևոր նշանակություն է ստանում: Ըստ այդմ, սփյուռք են կազմում այն մարդիկ, ովքեր կամ իրենց նախնիները ցրվել են «նախնական» կենտրոնից դեպի մեկից ավելի այլ բնակավայրեր: «Հայրենիք» ասելով հասկանում ենք երկիրը կամ տարածաշրջանը, որտեղ ձևավորվել է սփյուռքյան խմբի պատմամշակութային կերպարը և որտեղ շարունակում է ապրել նրան մշակութապես նման հիմնական զանգվածը: Հայրենիքի հետ սփյուռքին միավորում է ընդհանուր ծագումը և նախնիները: Շատ հաճախ հայրենիքն ընկալվում է որպես քաղաքական միավոր, որը հռչակում է իրեն այս կամ այն մշակույթի հայրենիքը: Սովորաբար սփյուռքի էթնիկ խումբն իր ներսում է ընտրում իր հայրենիքը: Սակայն այն կարող է փաթաթվել դրսից՝ տվյալ պետության կամ հարակից բնակչության կողմից: Այդ պատճառով, շատ հաճախ հայրենիքը ռացիոնալ ընտրություն է, այլ ոչ պատմականորեն տրված: Պատմության ընթացքում տեղի ունեցող միգրացիաները, սփյուռքի համալրումը, էթնիկ ինքնության փոփոխությունները և քաղաքական իրադրության փոփոխությունները դժվարացնում են «պատմական հայրենիք» սահմանումը: Սակայն այս հասկացությունը շատ տարածված է հասարակական-քաղաքական դիսկուրսում: Երբեմն միևնույն տարածքը համարվում է մի քանի էթնիկ խմբերի «պատմական հայրենիք»: Կամ միևնույն էթնիկ խումբը, կախված իրավիճակից, կարող է «հայրենիք» համարել մի քանի պետություն: Հայրենիքի ընտրությունը կարող է լինել իրավիճակային՝ որոշակի պատմական պահի որոշակի ընտրությամբ:

Հայրենիքի մասին պատկերացումները տարբեր են նաև բազմաշերտ ու բազմազան հայկական սփյուռքում: Սփյուռքահայերը կարող

են «հայրենիք» համարել իրենց կամ ծնողների/նախնիների ծննդավայրը, ծագման երկիրը, ընդունող երկիրը, պատմական հայրենիքը (Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանը), Հայաստանի Հանրապետությունը և այլն: Սակայն, ունենալով ազգային պետություն, նրանց մոտ առկա է «իրական հայրենիքի» գաղափարը, որտեղ ձևավորվել և շարունակում է ապրել էթնոսի պատմամշակութային կերպարը[140]: Հետևաբար, սփյուռքը գիտակցում է Հայաստանի հետ կապի կարևորությունը՝ որպես իր գոյության և ազգային ինքնության պահպանման առանցքային գործոն:

Սփյուռքյան նման հիբրիդային ինքնության ձևավորման գործում մեծ դերակատարություն ունի էթնիկ մեդիան՝ տարածելով և վերարտադրելով էթնոմշակութային արժեքներ: Ինչպես ցույց են տալիս Լ. Ջեֆրեսի պանելային հետազոտության արդյունքները, էթնիկ մեդիա սպառումը ամրացնում է էթնիկ ինքնությունը, և, հակառակը, հիմնական մեդիա սպառումը բացասաբար է անդրադառնում էթնիկ ինքնության պահպանման վրա[141]:

Հայրենիք-սփյուռք կապի առանձնահատկությունները լավագույնս արտացոլվում է էթնիկ մեդիայում: Էթնիկ մեդիայի սպառումը սփյուռքին հնարավորություն է տալիս ապատարածականացնել հայրենիքը,  նոր կարգավիճակ տալ հայրենիքի տարածքին[142]: Մեդիայի միջոցով աշխարհագրորեն հեռու հայրենիքը կարող է ձևավորել և պահպանել սփյուռքյան ինքնությունը: Մեդիան առանցքային դեր է խաղում՝ ամրապնդելով սփյուռքի անդամների կապը տարածքի՝ հայրենիքի հետ, կապելով մշակույթն աշխարհագրական տեղին: Այն վերարտադրում է հայրենիքի տարածքը և էթնոմշակութային պրակտիկան, որը նոր միգրանտները և ավանդական սփյուռքի անդամները կիրառում են թե՛ անձնական, թե՛ հանրային կյանքում: Ասօրվա Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրը (հաճախ հայերեն լեզվով)

140 Բարսեղյան 2017բ, 283:

141 Jeffres 2000, 496-535.

142 Kang 2009, 326-343.

մեդիայի միջոցով փոխանցվում է սփյուռքին: Նրանց կյանքը սփյուռքի տարբեր համայնքներում զուգահեռվում է Հայաստանի հետ: Մեդիայի միջոցով հայրենիքի և սփյուռքի այդ կտրված սահմանը կարծես վերանում է:

Հայկական մամուլում տեղ գտած հայրենիքի և սփյուռքի մասին տեղեկատվական նյութերի համադրական վերլուծությունը բացահայտում է հայրենիքի կերպարի ներկայացման և սփյուռքի կողմից դրա ընկալման առանձնահատկությունները: Մամուլի հայկական տեղեկատվության մեջ Հայաստանի մասին պատմությունների գերակշռությունը բավարարում է հայկական համայնքների տեղեկատվական պահանջները: Հայաստանի մասին տեղեկատվության սպառումը կապում է էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնում է պահպանել մշակույթը և լեզուն: Հայրենիքի մասին տեղեկատվության սպառումը հայկական սփյուռքին օգնում է սփյուռքյան փոփոխվող ինքնությունը դարձնել առավել կայուն: Հայրենիքը դառնում է հայկական տեղեկատվական դաշտի այն առանցքը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժեքները վերարտադրվում ու տարածվում են սփյուռքի համայնքերում՝ անկախ նրանց տարբերություններից: Չնայած Հայաստանի մասին թեմաների գերակշռության հարցում թերթերի նմանությանը, նրանց տարբերություններն արտահայտվում են Հայաստանի մասին տեղեկատվության բովանդակությամբ և իրենց համայնքի կառուցվածքով ու բնույթով, ինչն ուղղակիորեն արտահայտվում է սփյուռքի մասին տեղեկատվության մեջ: Ակնհայտ է, որ որքան կայացած և ինքնակազմակերպված է համայնքը, այնքան մեծ է մամուլում նրա մասին տեղեկատվության տեսակարար կշիռը: Տարբեր թեմաների համատեքստում Հայաստանի վերաբերյալ տեղեկատվության բովանդակությունը ձևավորում է հայրենիքի նկատմամբ որոշակի դիրքորոշումներ, կարծրատիպեր, ստեղծում է հայրենիքի ընդհանուր կերպարի ուրվագիծը:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հայրենիքի և սփյուռքի մասին թեմաների ծավալի և նրանց ներկայացման գնահատականների միջև անհամաչափություն: Չնայած Հայաստանի մասին հրապա-

րակումների մեծ ծավալին, այդուհանդերձ քիչ է դրանց ներկայացման դրական երանգը: Եվ իհարկե, ուսումնասիրված երեք պարբերականների պարագայում այդ գնահատականները տարբերվում են: Այսպես, համեմատության մեջ, «Ноев Ковчег»-ն ամենաշատն է ներկայացրել դրական պատմություններ (20.9%) և քառակի քիչ բացասական պատմություններ (5%) հայրենիքի մասին: «Ասպարեզում» հայրենիքի մասին հրապարակումների 14.4 տոկոսը կազմել են դրական և 6.9 տոկոսը բացասական գնահատականներով: «Ալիքը» Հայաստանի մասին հոդվածների ճնշող մեծամասնությունը ներկայացրել է չեզոք. դրական (3.6%) և բացասական(1.2%) գնահատականներն աննշան են:

Այսպիսով, չնայած հայրենիքի մասին տեղեկատվության գերակայությանը, այն առավելապես ներկայացվում է չեզոք գնահատականներով և վերաբերմունքով: Այս ծավալով և ձևով հայրենիքի ներկայացումը կարող է սփյուռքահայերին փոխանցել Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրը, նրանց կյանքը սփյուռքի տարբեր համայնքներում զուգահեռել Հայաստանի հետ, վերացնել հայրենիքի և սփյուռքի կտրված սահմանը: Սակայն այն չի խրախուսում հայրենիքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում ակտիվ ներառվելու վարք, առավելապես՝ հայրենադարձություն:

Հայրենիքի ներկայացման համար կարևոր է նաև լուսաբանվող թեմաների տեսակը՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային, բարեգործական, ազգային: Նշյալ թեմաների համամասնությունը տարբեր է դիտարկված երեք համայնքների մամուլում, սակայն բոլորի համար Հայաստանի մասին թեմաների առաջատարը քաղաքական ոլորտն է: Հայրենիքի մասին տեղեկատվության մեջ քաղաքական թեմաների գերակշռությունը վկայում է տվյալ ոլորտով սփյուռքի ավելի մեծ հետաքրքրության մասին: Ի լրումն սփյուռքի համար ավանդական՝ մշակութային թեմաների, սփյուռքի ժամանակակից մամուլը իր խորհրդանշական գործառույթը[143] կատա-

[143] Խորհրդանշական գործառույթի միջոցով տարածում է արժեքներ, գաղափարներ, պահպանում կամ ձևավորում է էթնիկ ինքնությունը: Տե՛ս Matsaganis և ուրիշներ, 67:

րում է հենց քաղաքական թեմաների մատուցման շրջանակներում:

Սփյուռքի մամուլը, փոխանցելով տեղեկատվություն մշակույթի, պատմության, ազգային հարցերի ու հայրենիքի մասին, սփյուռքահայերին մասնակից դարձնելով հայրենիքում ընթացքող ամենօրյա գործընթացներին՝ ստեղծում է մշակութային ու էթնիկ միասնությանը նպաստող տեղեկատվական տարածություն: Այսպիսով, էթնիկ մամուլը, ներկայացնելով Հայաստանը, ոչ միայն ուղղորդում է հայրենիքի ընկալումը, այլև նպաստում է ինքնության պահպանմանը, էթնոմշակութային արժեքների վերարտադրմանն ու տարածմանը, ամրապնդում է էթնիկ խմբին պատկանելության զգացումը:

Հայաստանի մասին տեղեկատվության կարևորության մասին է վկայում նաև թերթի առաջին էջերում տպագրելու հանգամանքը: Այսպես, թերթերի առաջին էջերին  տպագրված տեղեկատվության մեջ Հայաստանի մասին նյութերը «Ноев Ковчег»-ում կազմել է 93,7 տոկոս, «Ասպարեզ»-ում՝  67.1 տոկոս, «Ալիք»-ում՝ 36.4 տոկոս:

Հայաստանյան տեղեկատվությունը հիմնականում իրադարձային է: Մի կողմից, դա ցույց է տալիս սփյուռքի սերտ կապը հայրենիքի հետ և նրանից ամենօրյա տեղեկատվութուն ստանալու համայնքի պահանջը, մյուս կողմից, պատմական նյութերի զգալի ծավալը ցույց է տալիս հայրենիքի հանդեպ հետաքրքրության ոչ պատեհականությունը: Սփյուռի մամուլում տեղ են գտել նաև Հայաստանի ապագայի քննարկումները:

Սփյուռքի հայկական մամուլի բովանդակությունը հնարավորություն է տալիս հետևել հայրենիքում և սփյուռքում ընթացող գործընթացներին: Սփյուռքի թերթերի բովանդակության գլխավոր առանցքը հայկական տեղեկատվական դաշտում հայրենիքի և սփյուռքի վերաբերյալ ձևավորվող կարծրատիպերն են: Հայկական մամուլում տեղ գտած հայրենիքի և սփյուռքի մասին տեղեկատվական նյութերի համադրական վերլուծությունը բացահայտում է հայրենիքի կերպարի ներկայացման և սփյուռքի կողմից դրա ընկալման առանձնահատկությունները: Հայրենիքի վերաբերյալ տարբեր թեմաների համատեքստում մամուլի ներկայացրած նյութերը ձևավորում են հայրենիքի

նկատմամբ որոշակի դիրքորոշումներ, կարծրատիպեր, իսկ դրանց տարբեր բաղադրամասերի ամբողջությունը ստեղծում է հայրենիքի ընդհանուր կերպարի ուրվագիծը:

Հայկական սփյուռքը, ունենալով ազգային պետություն, իր գոյության և ազգային ինքնության կարևոր գործոն է համարում կապը հայրենիքի հետ: Սակայն սփյուռքի յուրաքանչյուր համայնք յուրովի է այն կառուցում: Հայաստանի վերաբերյալ մամուլի նյութերում թեմաների վերոնշյալ բաղադրիչների համամասնությունը տարբեր է երեք համայնքների մամուլում: Ինչպես ցույց է տալիս հայրենիք-սփյուռք առնչությունների բնույթը, Հայաստանը, որպես հայրենիք, բոլոր համայնքների ուշադրության կենտրոնում է, լրատվական հոսքի առաջատարը: Սակայն, որքան կայացած և ավանդական է համայնքը, այնքան ինքնուրույն է ու ավելի շատ է կարևորում համայնքային կյանքը, ինստիտուտների գործունեությունը և կապը հայրենիքի հետ: Այսպիսով, Հայաստանը և նրան առնչվող իրադարձությունները հայկական տեղեկատվական դաշտի կենտրոնում են, որի շուրջը ձևավորվում է համայնքային և համահայկական թեմաների շերտ[144]: Փաստորեն, հայրենիքը սփյուռքի կենտրոնն է, ազգային համախմբման, ինքնության պահպանման, համընդհանուր հայկական տարածքի ձևավորման կարևորագույն գործոնը:

Սփյուռքի մամուլը, փաստորեն, հայկական բազմազան համայնքներում հայրենիքի տարբեր պատկերացումների մեջ փորձում է ստեղծել միասնական հայրենիքի գաղափարը՝ ընկալումները փոխակերպելով, ուղղորդելով դեպի Հայաստան՝ ազգային պետություն:

Հետազոտության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս սփյուռքահայերի կյանքի ամենօրյա առնչությունը Հայաստանի հետ: Նրանք չեն կարող վերադառնալ անցյալ և ոչ էլ լիովին մտնել ընդունող երկրի քաղաքական ու սոցիալ-մշակութային կյանքի մեջ: Էթնիկ մեդիայի սպառումը նրանց մշտապես ցույց է տալիս «այստեղ» (բնակության երկիր) և «այնտեղ» (հայրենիք) սահմանագիծը: Էթնիկ մամուլը

[144] Барсегян 2016б, 267.

ստանձնում է որոշիչ դեր նրանց սփյուռքյան ինքնության կառուցակցման գործում:

Չնայած սփյուռքի տարբեր հատվածների առանձնահատկություններին ու տարբերություններին, էթնիկ մամուլի բովանդակությունը նպաստում է էթնոմշակութային նույնականությանը, ստեղծվում է մշակութային ու էթնիկ որոշակի միասնություն: Էթնիկ մամուլը ստանձնում է որոշիչ դեր ինքնության վերակազմման գործում: Այն փոխանցում է ընդհանրացնող թեմաներ ու համատեքստեր և օժանդակում է անդրազգային հայկական համայնքի ձևավորմանը:

# ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից աշխարհում, մասնավորաբար, հայկական սփյուռքում տեղի ունեցող միգրացիոն գործընթացները, հին սփյուռքների համալրումն ու նորերի ձևավորումն արդիական են դարձնում սփյուռքյան մամուլի ուսումնասիրությունը՝ որպես էթնիկ ու սփյուռքյան ինքնության ձևավորման վրա ներգործող և ընդունող երկրում համայնքի ներկայությունն ու գործունեության արդյունավետությունը պայմանավորող ինստիտուտ:

Հայկական սփյուռքում էթնիկ մեդիայի դերի վերաբերյալ աշխատությունում իրականացվել է գրականության համակարգային վերլուծություն, էթնիկ մեդիայի հասկացության, կառուցվածքի և գործառույթների դասակարգում, էթնիկ մեդիայի և էթնիկ ինքնության հայեցակարգերի փոխկապվածության քննարկում: Հիմնավորվել է հայկական սփյուռքի մամուլի դիտարկումը էթնիկ մեդիայի հայեցակարգի ժամանակակից համատեքստում: Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվել իրականացնել հայկական սփյուռքի երեք համայնքների էթնիկ մամուլի համեմատական ուսումնասիրություն՝ բովանդակության վերլուծություն մեթոդով:

Պատասխանելով հետազոտական խնդիրներին, ատենախոսության մեջ քննարկվել են էթնիկ մեդիայի ուսումնասիրման հայեցակարգային մոտեցումները և դրանց փոխհարաբերությունն էթնիկ ինքնության հայեցակարգերի հետ, ինչպես նաև էթնիկ մեդիայի հիմնական գործառույթները՝ հասկանալու համար հայկական մամուլի տեղն այդ համակարգում: Ըստ այդմ, նպատակահարմար է համարվել սփյուռքյան մամուլն ուսումնասիրել նրա գործառույթների առանձնահատկությունների և ինքնության վրա ազդեցության տեսանկյունից: Մամուլի ուսումնասիրությունը դիտարկվել է քննադատական մոտեցման տեսանկյունից, ըստ որի մեդիան գաղափարների արտադրման և

փոխակերպման գլխավոր տեղն է: Հետևաբար՝ խնդիր է դրվել ուսումնասիրել մեդիա բովանդակությունը: Սակայն, եթե նախկինում իրականացված էթնիկ մեդիայի ուսումնասիրությունները հիմնականում վերաբերել են նույն հասարակությունում կամ մեդիա դաշտում մեկ կամ մի քանի էթնիկ խմբերի մեդիային, ապա ներկայացված աշխատանքում փորձ է արվել համեմատել սփյուռքի մամուլը տարբեր միջավայրերում (հայկական երեք համայնքների օրինակով):

Մոսկվայի, Թեհրանի և Լոս Անջելեսի հայկական պարբերականները («Ноев Ковчег», «Ալիք», «Ասպարեզ») ունեն էական ընդհանրություններ և տեղային առանձնահատկություններ: Բովանդակության թեմատիկ վերլուծությունը հնարավորություն է տալիս խոսել մամուլի և սփյուռքի անդրազգային բնույթի մասին: Միջավայրերի և ինքնին համայնքների իսկայական տարբերությունների առկայությամբ ակնհայտ է դառնում հայկական մամուլի գործառութային նմանությունները: Նրանց համար առաջնայինը միավորող գործառույթն է, իսկ ընդհանրությունների համար ամենամեծ հիմքը Հայաստանի՝ որպես հայրենիքի (անկախ՝ հայրենիքի ընկալման տարբերություններից) կամ ազգային պետության ընկալումը և կենտրոնացումը դրա շուրջ:

Մամուլի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքային այս ինստիտուտը էթնիկ սահմանների պահպանմանը նպաստող կարևոր տարածություն է: Մամուլն ինքնին համայնքի՝ էթնիկ ինքնության պահպանմանն ուղղված ջանքերի խորհրդանշական ներկայությունն է: Իսկ բովանդակությունը, վերարտադրելով և տարածելով  էթնոմշակութային արժեքներ, այլէթնիկ միջավայրում ինքնության բանակցությունների մշտական գործընթացում ամրապնդում է էթնիկ խմբին պատկանելության զգացումը:

Էթնիկ մամուլի հայկական բովանդակությունը ցույց է տալիս համայնքային այս կառույցի՝ ընդունող երկրի հիմնական մեդիա դաշտում հայկական տեղեկատվության բացը լրացնելու, հայկական համայնքը ներկայացնելու և ինքնության պահպանմանն ուղղված ջանքերը: Իսկ թերթերի բովանդակության մեջ հայկական թեմաների ծավալը ցույց է տալիս տվյալ համայնքի տեղեկատվական պահանջները, մեդիայի ազ-

ղեցության աստիճանը և հիմնական մեդիայում էթնիկ խմբին՝ հայերին ներկայացնելու առանձնահատկությունները: Այն նաև վկայում է տվյալ համայնքի ինքնակազմակերպման մակարդակի մասին: Հայկական համայնքների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ որքան կազմակերպված է տվյալ համայնքը, ունի կայացած ինստիտուտներ, հագեցած համայնքային կյանք, այնքան ավելի շատ է, կարևորում սեփական խնդիրները, որոնք քննարկվում են մամուլում:

Մամուլում հայկական թեմաներն ունեն ընդգրկման երեք հիմնական շրջանակ՝ Հայաստան, սփյուռք և հայրենիք-սփյուռք կապեր, որոնք իրենց հերթին ունեն ներքին բաժանում: Այսպես, Հայաստանի մասին թեմաները կարող են լինել ներպետական և արտաքին կամ միջազգային հարաբերությունների շրջանակում: Հայրենիք-սփյուռք կապերի շրջանակը կարող է ընդգրկել Հայաստանի և, ընդհանուր առմամբ, հայկական սփյուռքի, ինչպես նաև առանձին համայնքների միջև փոխհարաբերությունները: Սփյուռքի շրջանակում թեմաները տարբեր համայնքների, ինչպես նաև սփյուռքների և ընդունող երկրների փոխհարաբերությունների մասին են: Թեմաների այսպիսի խմբավորումը հնարավորություն է տալիս ընկալել ընդհանուր՝ համահայկական և առանձնահատուկ՝ համայնքային հիմնախնդիրները:

Սփյուռքի երեք համայնքների թերթերում գերակշռում են Հայաստանին վերաբերող թեմաները: Առանձին համայնքների և, ընդհանուր առմամբ, հայկական սփյուռքի վերաբերյալ տեղեկատվությունը զգալիորեն զիջում է հայաստանյան լրատվությանը: Բոլոր թերթերն ամենաքիչն անդրադարձել են հայրենիք-սփյուռք հարաբերություններին:

Հատկանշական է, որ թեմաների ընդգրկվածության առումով բավականին նման ցուցանիշներ ունեն Լոս Անջելեսի և Թեհրանի ուսումնասիրված թերթերը: Նրանք առավելապես անդրադարձել են Հայաստանի արտաքին քաղաքականությանը, միջազգային հարաբերություններին, ապա՝ Հայաստանի ներքին քաղաքական խնդիրներին: Այդ թերթերն ավելի շատ կարևորել են հայ համայնքի և տվյալ պետության ու ինստիտուտների հետ փոխհարաբերությունները, քան հենց բուն համայնքի գործունեությունը: Ի տարբերություն, Մոսկվայի

հայկական թերթն ավելի շատ անդրադարձել է Հայաստանի ներքին խնդիրներին, քան նրա արտաքին քաղաքականությանն ու միջազգային հարաբերություններին: Սփյուռքի մասին տեղեկատվությունն առավելապես վերաբերում է Ռուսաստանի հայկական սփյուռքին: Բնակության երկրի հետ հայ համայնքի ինստիտուցիոնալ հարաբերությունների մասին նյութերը չնչին են: Մամուլի բովանդակության այս պատկերը արտացոլում է համայնքների կառուցվածքի ու հայերենիքի հետ հարաբերությունների առանձնահատկությունները:

Ուսումնասիրված երեք թերթերի վեց տարվա հրապարակումները ցույց են տալիս հակադարձ համեմատականություն Հայաստան-սփյուռք շրջանակների նյութերի ծավալի և գնահատականի միջև: Սփյուռքյան մամուլը որքան շատ է ներկայացրել տեղեկատվություն Հայաստանի մասին, այնքան ավելի քիչ է դրական ներկայացրել այն, և հակառակը՝ սփյուռքն ավելի շատ է ներկայացրել դրական լույսի ներքո:

Ինչպես ցույց է տալիս բովանդակության վերլուծությունը, մամուլի հայկական տեղեկատվության մեծամասնությունն իրադարձային է: Ամենաշատ պատմական անդրադարձը վերաբերել է սփյուռքին, ապա՝ Հայաստանին: Իսկ հայրենիք-սփյուռք հարաբերությունները ներկայացվում են ավելի շատ ապագային միտված:

Մամուլի բովանդակության տիպաբանությունն ըստ ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային (ներառյալ՝ հոգևոր, գիտակրթական, մարզական), բարեգործական, ազգային, ցույց է տալիս, որ բոլոր պարբերականներում հայկական թեմաների մեծամասնությունը քաղաքական բնույթի է: Երկրորդ տեղում մշակութային նյութերն են, ապա՝ սոցիալ-տնտեսական, իրավական, ազգային և բարեգործական: Հատկանշական է, որ բոլոր թեմաները, բացի սոցիալ-տնտեսականից, գրեթե հավասար համամասնություն ունեն երեք թերթերում: Սակայն, պատկերը փոխվում է, երբ նյութերն առանձնացնում ենք ըստ Հայաստան-սփյուռք շրջանակների: Եթե Հայաստանն ավելի շատ ներկայացվում է քաղաքական, ապա սփյուռքը՝ մշակութային ոլորտի թեմաների համատեքստում: Հայրենիք-սփյուռք կապի համար Լոս Անջելեսի և Թեհրանի թերթերը առա-

ջին հերթին կարևորում են մշակութային, սակայն Մոսկվայի հայկական պարբերականը՝ գլխավորապես քաղաքական և տնտեսական բաղադրիչը: Առանձնացված յոթ ոլորտները մամուլի կողմից ներկայացվել են տարբեր գնահատականներով: Ըստ տվյալների՝ ամենադրականն են ներկայացվել բարեգործությունն ու մշակույթը, ամենաբացասականը՝ ազգային հարցերն ու քաղաքական թեմաներ:

Հայկական տարբեր համայնքներում էթնիկ մեդիան ունի իր դերակատարման առանձնահատկությունները: Դա հատկապես դրսևորվում է նրան վերագրվող առաջնային դերի՝ էթնիկ և մշակութային ինքնության ձևավորման, էթնիկ խմբին պատկանելության և ինքնանույնացնման գործառույթներում: Սփյուռքի երեք պարբերականների բովանդակության վերլուծությունը ցույց տվեց, որ հայկական մամուլն ակնհայտորեն շեշտադրում է միավորող գործառույթը՝ լուսաբանելով առավելապես հայկական տեղեկատվություն, կապելով էթնիկ խմբին հայրենիքի հետ, օգնելով պահպանել ինքնությունը:

Թերթերում հայկական տեղեկատվության ճնշող մեծամասնությունը հայաստանյան թեմաներ են: Հայրենիքի մասին տեղեկատվության գերակշռությունը, մի կողմից, վկայում է հայկական սփյուռքի ձգտումը՝ մշակութային երկատվածության իրավիճակում վերադառնալ արմատներին, մշակույթին, անցյալին: Մյուս կողմից, էթնիկ մեդիայի հայաստանակենտրոն բովանդակությունը սփյուռքյան փոփոխվող ինքնությունը փորձում է դարձնել առավել կայուն: Հայաստանը, փաստորեն, դառնում է սփյուռքի հայկական տեղեկատվական դաշտի այն միջուկը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժեքները վերարտադրվում ու տարածվում են համայնքերում՝ անկախ նրանց տարբերություններից: Էթնիկ մամուլի նման բովանդակության սպառումը ցույց է տալիս սփյուռքահայերի կյանքի ամենօրյա առնչությունը Հայաստանի հետ:

Երեք համայնքների մամուլի բովանդակությունը հաստատում է այն առաջ քաշված այն վարկածը, որ էթնիկ մեդիայի միջոցով կարող են ստեղծվել անդրազգային հաղորդակցական ցանցեր հայրենիքի և սփյուռքի համայնքների միջև՝ ի լրումն տեղային առանձնահատկու-

թյունների ձևավորվել ընդհանրական արժեքներ: Այս առումով, հաշվի առնելով հայրենիք-սփյուռք առկա կապերը, ներկայիս ՏՀՏ միջոցները և մեդիայի ընձեռած հնարավորությունները, հնարավոր է մշակել անդրազգային մեդիա նախաձեռնություններ, հաղորդակցական տարածություն, ցանց, և դրա հիման վրա ձևավորել որոշակիորեն ընդհանրական էթնոմշակութային արժեքներ, լայնացնել և բազմազանեցնել հայերենիքում սփյուռքի ներառման դաշտերը:

Սփյուռքի ժամանակակից մամուլն իր խորհրդանշական գործառույթը (արժեքների, գաղափարների տարածում՝ ինքնության պահպանման կամ կառուցակցման համար) կատարում է քաղաքական և մշակութային թեմաների մատուցման շրջանակներում: Ազգային արժեքների տարածման և ինքնության պահպանմանն է նպաստում նաև մամուլի բովանդակության մեջ պատմական հիշողության վերարտադրումը, ազգային պատմության վերաիմաստավորումը:

Սփյուռքի մամուլի տեքստերում էթնիկության սահմանները ցույց տվող մշակութային տեղեկատվությունն իր ծավալով զբաղեցնում է երկրորդ տեղը (քաղաքականից հետո): Ընդ որում, Սփյուռքի մասին նյութերի մեջ նրանք զբաղեցնում են առաջին տեղը: Սփյուռքի մամուլն ավելի շատ ներկայացնում է հայաստանյան, քան սփյուռքյան մշակույթը: Սեփական մշակութային արժեքների վերաբերյալ մամուլի տեղեկատվությունը կարող է մշտարթուն պահել ձուլման վտանգը, ինչպես նաև վերակազմավորել հատվածական մշակութային ինքնությունը՝ այլազգի միջավայրում ապրող և մշակութային միջսահմանային իրավիճակում գտնվող հայերի համար: Հայկական մամուլում արտահայտվում են ոչ միայն մշակութային ինքնության բանակցությունները, այլ նաև հայրենիք-սփյուռք մշակութային առնչությունները: Մի կողմից, մամուլը, քիչ ներկայացնելով Հայաստան-սփյուռք մշակույթները կամրջող պատմություններ, վկայում է հայկական մշակութային արժեքների ընդհանրության և տարանջատ չլինելու մասին, մյուս կողմից, մամուլը սահմաններ է դնում ոչ միայն այլ մշակույթների, այլև էթնոսի տարբեր հատվածների միջև:

Էթնիկ մամուլը ստանձնում է որոշիչ դեր, այսպես կոչված, սփյուռքյան ինքնության կառուցակցման գործում: Չնայած սփյուռքի տարբեր հատվածների առանձնահատկություններին ու տարբերություններին, առաջանում է որոշակի էթնոմշակութային ընդհանրական արժեքների ձևավորում: Սփյուռքյան հիբրիդային ինքնության ձևավորման գործում մեծ դերակատարություն ունի էթնիկ մեդիան՝ տարածելով և վերարտադրելով էթնոմշակութային արժեքներ:

